



ԷԶՄԻԱԾԻՆ

1969 թ. III





ՌՆԷ
ԺԴ ՏԱՐԻ
Հոկտեմբեր



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՍԻԱՇՆԻ

Ժ



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԽՄԱՍԳՐԱԿԱՆ— Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի	3
Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ Նորին Սուրբ Օծուրյան անունով ստացված շնորհավորական հեռագրերը.	8
Ամենալուսավոր Հայոց Մայրաքույն Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Ս. Տ. Վազգեն Ա-ի, Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբութուն Մելքիսեդեկ Գ-ի, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքի ներկայացուցիչ Նորին Սրբազնություն Սերգեյ եպիսկոպոսի խաղաղության կոչը	10
ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ— Նորին Սուրբ Օծուրյուն Ս. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի հովվապետական այցելությունը Ադրբեյջանի հայոց բնակիչներին	12
ԽՆՍՐՈՒՄ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹՆԱՅԱՆ— Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի հանդիսությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	34
Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ հանդիսություն Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում	58
ԱՎԵՏԻՔ ՍԱՀԱԿԻ ԻՍՍՀԱԿՅԱՆ	64
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ գավակցությունը մեծանուն բանաստեղծ Ավետիք Խանակյանի մահվան առթիվ	68
Հոգեհանգստյան սուրբ պատարագ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում մեծանուն բանաստեղծ Ավետիք Խանակյանի մահվան ուրբեֆի առթիվ	69
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ռ Ո Ւ Մ	70
Գերաշնորհ Ս. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանի և հոգեշնորհ Ս. Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանի յամանումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	72
Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետական պատվիրակ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Ս. Սիոն աբեղայիսկոպոս Մանուկյանը և Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Մամբրե աբեղայիսկոպոս Դավթայանը Մայր Աթոռում	77
Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Մամբրե աբեղայիսկոպոս Դավթայանը Թրիխիում	78
Թարգմանչաց տոնը Հոգևոր Ճեմարանում	79
Ստեղծագործների ձեռնադրություն	82

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն ' Հ Ա Ս Յ Ե Ն '

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՌ. ԷՉՄԻԱԾԻՆ

«ԷՉՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԱՍԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“

Redaction of the magazine „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1967 թ.



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բացվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսության
պաշտոնաթերթ «ԷՋՄԻԱՄԻՆ» ամսագրի
1958 թվականի տարեկան բաժանորդագրությունը:
Ամսագրի տարեկան ընդհանուր բաժանորդագինն է՝

ՍՍՌՄ 60 ռուբլի

Ռումինիա 60 լեյ

Բուլղարիա 60 լևա

Արտասահման 6 դոլլար

Կարելի է բաժանորդագրվել առաջնորդարաններում
և եկեղեցիներում:

«ԷՋՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լ ՈՒՅՍ Տ Ե Ս Ա Վ

ԽԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱՄԻՆԻ 1958 ԹՎԱԿԱՆԻ
ԳՐԱԿԱՆԻ ՈՐԱՑՈՒՅՑԸ

ՈՐԱՑՈՒՅՑԸ, ԿԱԶՄԵՂ Է ԽԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱՄԻՆԻ
ՄԻԱԲԱՆ ԵՎ ԼՈՒՍԱՐԱՐԱԳԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԱՀԱԿ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ:

ՀՐԱՄԱՆԱԻ


Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՑԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

 ռկտեմբերի 13-ին, կիրակի օր, Մայր Աթոռ Ս. էջմիածնում, խանդավառ մրցույթով, սրտագին ուրախության մեջ և մեծաշուք հանդիսությամբ տօնվեց նորին Ս. Օծուրյուն Ս. Ս. Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կարողիկոսի գահակալության երկրորդ տարեդարձը:

Համագգային ուրախության այդ մեծ տոնին ներկա էին Համայն Կրաստանի Պատրիարք-Կարողիկոս նորին Սրբուրյուն Մելիքեղեկ Գ-ր Խ շխաժմբով, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք նորին Սրբուրյուն Ալեքսիի ներկայացուցիչ, Աստրախանի և Ստալինգրադի եպիսկոպոս նորին Սրբազնուրյուն Սերգեյը:

Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի հանդիսություններին մասնակցելու համար Մայր Աթոռ էին ժամանել Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական նվիրակ և Դերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Երուսաղեմի Պատրիարքության ներկայացուցիչներ գերաշնորհ Ս. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը և հոգեշնորհ Ս. Առողիկ ծայրագոյն վարդապետ Լազար Մանր և այլ պաշտոնական անձնավորություններ:

Վեհափառ Հայրապետի գահակալության երջանիկ և ուրախ առիթով մեր բոլոր եկեղեցիներում կատարվեցին հայրապետական մաղրաններ՝ Մայր Աթոռ Ս. էջմիածնի անսասանության ու հավերժության և Վեհա-

փառ Հայրապետի թանկագին կենաց արևշատության համար:

Նոկտեմբերի 13-ին, հայրապետական գահակալության այս քաղաքատիկ տոնի առթիվ, թովանդակ հայության սիրտն ու զգացմունքները մի անգամ ևս ջերմացան Ս. էջմիածնի անունով ու խորհրդով և Վեհափառ Հայրապետի անվան ու գործունեության հմայքով: Մի անգամ ևս ցնծագին ու տոնական հեշեցին Մայր Աթոռի զանգերը և ցրնծության ալիքներով ավետեցին ի սփյուռս աշխարհի ցրված հայ հավատացյալ ժողովրդին ի մխրաբություն և ի խնդություն, թե կենդանի է Մայր Աթոռ Ս. էջմիածինը և այնտեղ աշխատում, տնեում և աղոթում է խոր Վիրապի մեծ ճգնողի հոգով և հավատով, Ս. Մեսրոպի և Նարեկացու տեսիլով ու շնչով՝ Ամենայն Հայոց ազգրեւոր Վեհափառ Հայրապետը՝ նորին Ս. Օծուրյուն Ս. Ս. Վազգեն Ա-ը, պայծառացնելու համար մեր օրերում էլ հայ ժողովրդի հավատավոր հոգին և կյանք տալու Ս. էջմիածնի հազարամյա փառերին:

Այս մտածմունքներն ու զգացմունքները վերստին կյանք են առնում յուրաքանչյուր հայ հավատավոր ու հայրենասեր մարդու հոգում Վեհափառ Հայրապետի գահակալության երջանիկ տարեդարձի առթիվ, ուրախության ջիհջ զգացմունքով գեղեցկացած և պայծառացած:

Նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետը արժանավոր շառավիղն է հանդիսանում մեր պատմության երանաշնորհ և մեծ այն հայրապետների, որոնք Լուսավորչի օրերից մինչև մեր օրերը փառ առ փառ, կամար առ կամար շինել են ու քարծրացրել Ս. էջմիա-

ծինը գարեւրի խորհից՝ որպէս պատգամ ու ապրանք, որպէս խորհուրդ ու գիտակցութիւն, որպէս մեր հավատի ու ժողովրդի հավերժութեան խորհրդանշան:

Մեր սուրբ հայրապետները մեծ են եղել ու լուսավոր հիշատակ թողել՝ մեր ազգային-եկեղեցական տարեգրության մէջ և հայ ժողովրդի երախտագետ սրտում այն չափով, ինչ չափով նրանք ապրել են ու ստեղծագործել Ս. էջմիածնի համար, Հայ Ազգի սիրով ու ծառայութեամբ ոգով: Եվ վազգեն Ա Վեհափառ Հայրապետը մեր ազնվական ու գոհաբերվող հայրապետներից մեկն է, որ իր աւելին ու կյանքը անխնայ զոհեց կապել է Մայր Աթոռ Ս. էջմիածնի պայծառության հետ, հայ ժողովրդին ծառայելու անհրաժեշտ ուխտով:

Վեհափառ Հայրապետի բնութայնութիւնից ու գաղափարայնութիւնից անցել է բնգամներ երկու տարի, բայց այդ կարճ ժամանակամիջոցում էլ կատարվեցին գործք տարեան տարեան գրոց յիշատակութեան:

Վեհափառ Հայրապետի գաղափարայնութեան երկրորդ տարին անցավ շինարարական, կազմակերպչական, վաճառական-վարչական, հոգևոր-կրթական, ազգային-եկեղեցական բեղմնավոր ու խանդավառ իրագործումներով:

Անցնող մեկ տարվա ընթացքում, Վեհափառ Հայրապետի անմիջական հսկողության տակ, Մայր Աթոռի միաբանությունը, ներամփոփված իր վաճառական խաղաղ շրջանակի մէջ, անցկացրեց աղոթքի, աշխատանքի և ծառայության եկեղեցական մի տարի, ըստ վաճառական կանոնադրության: Միջոց հնչեցին Մայր Աթոռի գանգերը: Մայր Տաճարում անխափան պաշտովեց առավոտյան և երեկոյան ժամերգությունը, Ս. Բեմից հնչեց Բանին կենաց փառքը, մեծահանդէս ջոկ կատարվեցին ազգային-եկեղեցական տոները, ուստանդանությունները և միաբանությունը ապրեց հոգևոր կյանքով և Մայր Աթոռը դարձավ հզարատապէս կրօնական մի հաստատություն՝ ի Քրիստոս միաբանած հոգևորականների համար:

Անցնող տարվա ընթացքում Մայր Աթոռ Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, Վեհափառ Հայրապետի անմիջական հսկողության և առաջնորդության տակ, շնորհիվ ձեռք առնված ուսումնա-դաստիարակչական անհրաժեշտ միջոցառումների, տեսչական ու դասախոսական կազմի բարեխիղճ և ազնիվ աշխատանքի, բոլորեց կազմակերպված ու բեղմնավոր ուսումնական և մի տարի: Ճեմարանը ունի երեք դասարանական և երկու լսարանական բաժիններ: Ավելացել է ուսանողության թիվը: Հոգևոր Ճեմարանը Վե-

հափառ Հայրապետի սրտին մոտ և հարազատ մի հաստատություն է, որի զարգացման և ապագայի հետ նորին Ս. Օծությունը կապել է սրտառու ճիշտիւր և ակնկալութիւններ: Վեհափառ Հայրապետի քաղաքացիական արտոնությամբ Հոգևոր Ճեմարանը ունեցավ իր արժանավոր վերատեսուչը՝ հանձնի գերազանց Ս. Հայկազուն եպիսկոպոս Արքեպիսկոպի, հրավիրվեցին կարող գասախոսներ, որոնց թվում պատմական գիտությունների պրոֆ.-դոկտ. Կարո Ղաֆադարյանը, պատմական գիտությունների բեկնածու դոցենտ Համո Հարությունյանը, ֆիլոլոգիական գիտությունների բեկնածու դոցենտ Վարազ Առաքելյանը և ուրիշներ: Վեհափառ Հայրապետի ղեկավարության տակ Հոգևոր Ճեմարանը տարեցտարի էլ ավելի է մոտենում իր հարազատ նկարագրի և հոգևոր կոչման բարձրության:

«Էջմիածին» ամսագրի էջերից անընդհատ հնչեցին Վեհափառ Հայրապետի հայրենաշունչ և հոգեշունչ պատգամներն ու խրատները, նրա կենդանի ԽՈՍԺԸ՝ ուղղված իր սիրելի հոռին, գրված ֆրիտոնեական ֆաղթը շնչով, հայ զգայնությամբ, հայ մտայնությամբ: «Էջմիածին» ամսագրում Վեհափառ Հայրապետի անմիջական ցուցմունքներով ու հրահանգներով, լայն տեղ է հատկացված նաև Մայր Աթոռի միաբանական կյանքին, Հոգևոր Ճեմարանին, մեր եկեղեցական կյանքին և թեմերի գործունեությանը: «Էջմիածին» ամսագիրը այսօր դարձել է հայ հավատացյալ մարդու սեղանի սիրելի գիրք: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ ամսագրի ապաքանակը այս տարի բարձրացվել է 3 000-ի, որից 1 200 օրինակ ուղարկվում է արտասահման, իսկ 1 800-ը սպառվում է մեր ներքին թեմերում: Բավարարելու համար օրավուր անող պահանջը, ծրագրված է հաջորդ տարի ամսագրի տպագրական հասցեն է 5 000 օրինակի:

Վաճառական, ուսումնա-կրթական աշխատանքից բացի, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, վերակազմակերպվեցին Շիրակի, Վրաստանի, Ադրբեջանի, Նոր-Նախիջևանի, Մոսկվայի մեր ներքին թեմերը: Կատարվեցին առաջնորդական փոփոխություններ, բնորոշվեցին և հաստատվեցին նոր թեմական և եկեղեցական խորհուրդներ: Մայր Աթոռի երիտասարդ միաբանները շատ շնորհակալ աշխատանքներ շարունակեցին կատարել նաև Մայր Աթոռում՝ Վեհափառ Հայրապետի հրահանգներով և առաջնորդությամբ: Գերազանց Հոգևոր Խորհուրդը կոնոնավորապես գումարովեց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ և գրադվեց ազգային-եկեղեցական կյանքի:

քաղաքիվ հարցերով: Իր աշխատանքները խղճմտությամբ կատարեց ճան Ահրատուգիչ հանձնաժողովը:

Հունվարի 29-ին այժմյան վեհաբանում տեղի ունեցավ վեհաբանի նոր շենքի պաշտոնական հանձնումը վեհափառ Հայրապետին՝ Հայկական ՍՍՌ Միեկստրների Սովետին աղբյուր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի հայապաշտության կողմից:

Նոր վեհաբանի նորոգության և կանաչադաշտի ծրագրերը կազմվել են աղբյուր և հույս ունենալ, որ վեհափառ Հայրապետի պաշտականության հրոգող տարեկանը կտոնեն նոր վեհաբանում:

Այս քոլոր քաղաքապետ աշխատանքների մեջ, վեհափառ Հայրապետի ամենատարածունակներով և հսկողությամբ, վերահսկողական և շինարարական աշխատանքները ծավալում կերպով առաջ տարվեցին Մար Արթուրով, վաճառում և եկեղեցիներում: 1956—1957 տարում կատարվեցին հետևյալ հիմնական շինարարական աշխատանքները.

1) վերանորոգում և վերակառուցում Բյուրի Ս. Աստվածածին եկեղեցու և կից զանգակատան.

2) Սայահատակում Ս. Էջմիածնի Մայր Տաճարի շտաբը:

3) Սայահատակում այժմյան վեհաբանի աղբյուր մայրի.

4) Մարմարապատում Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հարավային մասի.

5) Կառուցումն ընթացքի մեջ է գտնվում նոր վեհաբանի շրջապատի պարիսպը:

6) Կառուցում քաղաքի հարևան և սահմանային Մայր Տաճարի և Սինդի քաղաքի միջև:

7) Մայր Տաճարի հոգաբարձու սկսվել են կոյուղու անցկացումն և ջրամատակարարման աշխատանքները:

Վեհափառ Հայրապետը, էլ ապելի կազմակերպելու համար մեր ներքին թեմերը և ամրապնդելու համար նրանց կապը Մայր Աթոռի հետ, մայիս—սեպտեմբեր ամիսներին կատարեց հովվապետական այցելություններ Շիրակի, Նոր-Նախիջևանի, Վրաստանի և Ադրբեջանի թեմեր: Վեհափառ Հայրապետը ամեն տեղ ընդունվեց խանդավառորեն և շնորհակալությամբ, արժանացավ փառանքի և ստացան ընդունելության ոչ միայն հայ, այլ նաև ռուս, վրացի հավատացյալների և այլ կրոնական դավանության հետևող մարդկանց կողմից:

Հովվապետական այս այցելությունների ժամանակ էլ ապելի կոփվեցին և ամրացան հայ, ռուս, վրացի, ադրբեջանցի ժողովուրդների կուտ միասնությունը, քաղաքացիությունը ու անբաժանելի բարեկամությունը:

Մայր Աթոռի և Հայրենի հարադատ կառավարության փոխհարաբերությունները վեհափառ Հայրապետի զանալայության երկրորդ տարում էլ եղել են ապելի քան բարեկամական: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետը իրենց պարտքը կատարել են հայ ժողովրդի և նրա պետականության նկատմամբ մեծ սիրով, պարտի և պարտականության խորունկ գիտակցությամբ, ըստ տեղումնական պատվերի՝ «Տալ զկայսերն կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ»:

Ամենայն Հայոց Հայրապետության, վեհափառ Հայրապետի գիրքը մեր Հայրենի պետության հանդեպ եղել է և կլինի օրհնական, ուղիղ և ազնիվ, ինչպես պարտ է լինել: Հայրենի կառավարության բարյալակալությունը և համակրանքը, քոլոր հարցերում, եղել են միշտ վեհափառ Հայրապետի հետ և այդ մասին վեհափառ Հայրապետը ճանախ արտահայտվել է մեծ գոհունակությամբ և երախտագիտությամբ:

Մայր Աթոռի հոգևոր-կրթական, վաճական-վարչական, տնտեսական և շինարարական աշխատանքների հետ միաժամանակ վեհափառ Հայրապետի տեսադաշտից երբեք դուրս չեն մնացել Սփյուռքի մեր եկեղեցական կյանքի կազմակերպության ծանր և պատասխանատու աշխատանքները, մեր թեմերի կենդանի հարաբերության և սերտ համագործակցության հարցը Մայր Աթոռի հետ:

Շարունակվեցին Մայր Աթոռի և մեր հվիրապետական մյուս Աթոռների ստացվեց հարաբերություններն ու համագործակցությունը: Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ստացվեց ուրախությամբ և գոհունակությամբ ընդունեցին երուսաղեմում մարտի 20-ին կատարված պատրիարքական արժանավոր ընթացությունը՝ հանձնել ամենապատիվ Ս. Քրիստե արքեպիսկոպոս Ներսիսյանի, երբ վերացվեց սգի սև բոլոր Ս. Աթոռի վրայից և վերջ գտավ սաղիմական տագնապը: Սակայն ցավ ի սիրտ պետք է նշել, որ դեռ վերջնականապես չեն ցրվել հայ երուսաղեմի ջրերը երկնական մարի վրա ժամանակավորապես կուտակված քուխալ ամպերը:

Ի մեծ մխիթարություն և հուրախություն վեհափառ Հայրապետի, Թուրքիայի հայոց գիտուն և ալեգարդ Սրբազան Պատրիարք՝ Նորին Ամենապատվություն Ս. Դարեգին արքեպիսկոպոսը, հայ բարձրաստիճան հոգևորականության Սիմեոն ձեռնուն, տիվ և գիշեր շարունակում է աշխատել ու տվել հավատով և տեսիլով Հայ Եկեղեցու միասնության և փառքի համար, ամեն կողմ սրփ-

ոելով իր սրտի խորհից բխած զերմանաբարության և բնկերային նողկալաբանները:—

Հակառակ Վեհափառ Հայրապետի հաշտության առաջարկներին և իսաղապես հորդորներին, Անթիլիասի Կաթողիկոսությունը հաջորդեց մինչև այսօր էլ մնում է շուրջված, մեծ վիշտ պատճառելով Վեհափառ Հայրապետին: Անցնալ տարում էլ Վեհափառ Հայրապետի տեսակետն ու իդձն է եղել՝ վերջ տալ Անթիլիասում ստեղծված անբաղձալի կացության՝ երկու կողմերի փոխադարձ զիջումներով, Կանիւրեի եպիսկոպոսական ժողովի Համաձայնագրի ռզուպահանմամբ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պ. Ալեքս Մանուկյանը, իր փետրվար 23 թվակիր նամակով, խնդրել էր Վեհափառ Հայրապետի քարենտն արտոնությունը՝ իր կողմից անելու «միջամտություն մը, երկու հակառակորդ կողմերու միջև ստեղծելու քանակցության տրամադրություններ, գոյացնելու նպատակով հավանական հասկացողություն մը»: Վեհափառ Հայրապետը իր 20 մարտ թվակիր նամակով տվեց իր օրհնությունը պ. Ալեքս Մանուկյանին ձեռնարկի հաջողության համար:

Այնուհետև Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքը, Վեհափառ Հայրապետին ուղղած իր 2 ապրիլ թվակիր նամակով, ցանկություն էր հայտնում հաշտության մի շարժ առաջարկներով աշխատանքի ձեռնարկել՝ «գետին պատրաստելու» և «ցավոտ խնդրին պատվավոր մեկ լուծումը ապահովելու համար»: Վեհափառ Հայրապետը տվեց իր համաձայնությունը Գարեգին Պատրիարքի առաջարկին:

Բայց պետք է այստեղ արձանագրել խորունկ փառասանով, որ այս բոլորը մնացին ձայն քարառոյ յանապատի:

Այնուամենայնիվ Վեհափառ Հայրապետը, իր 13 հունիս թվակիր նամակով, պաշտոն հանձնեց Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքին՝ շարունակելու այդ ուղղությամբ սկսված աշխատանքները:

Մայր Աթոռի և Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական թեմերի փոխհարաբերության հարցը Վեհափառ Հայրապետին ջանադրգրող կարևոր խնդիրներից մեկն է եղել նաև այս տարի, որովհետև այդ փոխհարաբերությամբ էլ միշտ բնորոշվել է մեր ազգային-եկեղեցական միասնությունը:

Սփյուռքի մեր թեմերի կազմակերպումը, նրանց խաղաղ ու համերաշխ գործունեությունը և սրտագին կապը Մայր Աթոռի հետ՝ Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնումն է եղել միշտ: Վեհափառ Հայրապետը սրտի խորունկ գոհունակությամբ է հետևել առաջնորդներին, հոգևոր հովիվներին՝ քննարկելով աշխատանքները, քննարկելով ազգային-եկեղեցական, մշակութային և քաղաքական կյանքի կազմակերպման և ղեկավարման հարցերում:

Սփյուռքի հայությունն էլ ապրում է կազմակերպման, հոգևոր վերազարթնքի մի խոստովանակյալ յոթան: Շատ թեմերում յինչում են եկեղեցիներ՝ Միլանոյից մինչև Սիդնեյ, Խարբումից մինչև Հեռավոր Արևելքի ծայրերը, քաղվում են նորանոր դպրոցներ, և մեր հայրենասեր և հավատացյալ ժողովուրդը ապրում է իր Մայր եկեղեցու սիրով, Ս. Էջմիածնի խորհրդով և Հայրենիքի գաղափարով:

Հեռավոր Հյուսիսային Ամերիկայում, պ. Երվանդ Աղաջանյանի նախագահությամբ և անձնուրաց աշխատանքով, Մայր Աթոռի տպարանի համար սկսված «արշավ»-ը արդեն հասել է 150 000 դրամի: Մոտ ժամանակներս կգնվեն տպագրական մեխանիզմներ և Մայր Աթոռը կօժտվի արդիական մի ապարանով, որը սրտագին եվերը կլինի ամերիկահայության:

Այս տարի էլ Մայր Աթոռը սրտագին հյուրասիրությամբ ընդունեց Սփյուռքից ուղևորներին խմբեր:

Օգոստոս ամսի 15-ից մինչև 26-ը Մայր Աթոռում եղան Գալուստ Կյուպեկյան հիմնադրության երկկապցուցիչներ սրբ. Սիդնի Քեյլը և պարոն Եղվարդ Ուրույանը, Վեհափառ Հայրապետի հետ խորհրդակցելու համար Մայր Աթոռի մեծահոգի քարերու հանգուցյալ Գալուստ Կյուպեկյանի՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի համար արած կտակի մասին:

Ահա՛ Վեհափառ Հայրապետի գաճակալության երկրորդ տարում կատարված աշխատանքների մի համառոտ թվումն մասնակցությամբ, որ վստահ եմք, թե հոգեկան մեծ ուրախություն է պատճառելու նշմարտապես հավատացյալ և հայրենասեր յուրաքանչյուր հայ մարդու, թե՛ Մայր Հայրենիքից երես և թե՛ Սփյուռքում:

«Տարին, որ անցավ, — պատգամում է Վեհափառ Հայրապետը, — խաղաղության և շինության տարի մը եղավ Հայաստանյայց ու եկեղեցիին համար և հատկապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար: Հավատացե՛ք, որ Աստված երեսը մեզ է դարձնում և իր յուրօրով կառաջնորդե մեր քայլերը և մեզ՝ քահանայք և ժողովուրդ, նոր հավատով և նոր հույսերով խանդավառ, սկսած եմք շինել, շինել, ինչ որ անցյալի մեջ չար ձեռքեր քանդեցին, դուրեք և դուրեք շարունակ»: (Էջմիածին, 1957 թ. Մ Ա, էջ 33):

ԵՎ ԼՈՒՌ, ՇԻՆՈՒՄ Է ՆԱ ԵՎ ԱՂՈԹՈՒՄ, շինում է հոգեպես, հոգիներ է կերտում Մայր Արքունի և Հոգևոր Հեմարանում՝ զբոս իւրում պատկերի և նմանութեան, շինում է մշակութապես, շինում է տնտեսապես և նոր յայտ է իջեցնում մեր հին վանքերի վրա և նոր մարմին է տալիս Լուսավորչի երազին:

Շինարար Հայրապետ՝ ինչ շինում է ԻՐ ժողովրդի համար, շինում է Մայր Արքունի. էջմիածնի համար. շինում է հայոց պատմության համար, ինչպես շինել են մեր յուսարձակ հայրապետները անցյալում:

ԵՎ ՆԱ ՇԻՆՈՒՄ Է ՄԻԱՅՆԱԿ... Բայց ոչ, ԱՍՏՎԱԾ ՆՐԱ ՀԵՏ Է, հայու Աստվածը. Լուսավորչի. Սահակ-Մեսրոպի. Նարեկացու և Տաթևացու, Աշտարակեցու և Խրիմյանի Աստվածը Նրա հետ է, և երև Աստված Նրա հետ է՝ «Ո՛վ իցել մեզ հակառակ»:

Նրա հետ է մեր ժողովրդի սերն ու վստահությունը:

Ահա րե ինչու ամեն մի փորձ, ամեն մի ձեռնարկ, որ նպատակ ունի քայքայելու Մայր Արքունի հմայքն ու Ամենայն Հայոց Հայրապետի հեղինակությունը. ջրատելու Նրա բարոյական ուժն ու նշանակությունը. սառնությունն ֆարոգելու Նրա լքմ և ժողովրդին մոխրեցնելու՝ երեխայական անմիտությունն է և ազգավնաս զործողությունն, որը բխում է պղտոր ակունիներից և լնդհանուր ոչինչ չունի հայ ժողովրդի գերագույն շահերի հետ:

Ս. էջմիածինը մեր ժողովրդի հոգևոր մայրն է, և «անպիտան ի հաւատս» մարդիկ միայն, ոչ մի սրբություն չունեցող մարդիկ միայն կարող են ուրանալ և՛ հաբազատ մայր և՛ ամեն սրբություն:

Ս. էջմիածինը մեր ժողովրդի գոյության և հավերժության խորհրդանշանն է: Դրա համար Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՄԵՆ ՄԻ ՀԱՐՎԱԾ, ՀԱՅՈՒԹՅԱՆ ՍՐՏԻՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՎԱԾ է, հայ ժողովրդի ղեմ ուղղված հարված է, մեր Հայրենիքի, մեր ապագայի ղեմ ուղղված հարված է:

Ս. էջմիածինը դառնո՞ւ շարունակ իր րեւերի տակ առել, պահել ու պահպանել է մեր ժողովրդին, տրալէս հա գծագս իւր, և իր վերջին ջոխառն է պատռել՝ փաթաթելու համար հայության վերհերը: Այսպիսին է Նա նաև այսօր: Ուրեմն «Յո՛ւ երբամբ»:

Լսենք մեր քանկագին մոր ծայրը և հալալ-վենք նրա շուրջ:

Արդարև, բովանդակ հայությանն սրտագին համոզմունքն այն է, որ Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարին եղավ հաղթանակի մի տարի: «Ս. էջմիածնի այս պահուս պարզած պատկերը ամենեն ավելի լավատեսություն կենդնչել բոլոր ահաշահանդիւր հավատացյալներուն: Երիտասարդ, համակրելի ու կորովի Ամենայն Հայոց Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ի առաջնորդությամբ և շնորհիվ Հայկական կառավարության, անցնող տարին իդավ հաղթանակի տարի մը, հատկանշական՝ հոգևորաբար նվաճումներով:

...Վերջին հաշվով, ինչպես հայ ժողովրդի, նույնպես Հայաստանայց եկեղեցվա ապագան առավելաբար պիտի կերտվի Մայր Հողի վրա: Այս իսկ պատճառով, մենք ներկայումս ու խանդավառությամբ պետք է դիմավորել Ս. էջմիածնի ծաղկումն ու բարգավաճումը» («Ջաբրան», 1957 թ., № 8):

«Ս. էջմիածնի սիրովը վառված, կամեց ահա այստեղ, ու կամենալ այսպես, — պատգամում է Վեհափառ Հայրապետը: — ԵՎ ԱՆՅՆԵԼԵ ԱՌԱՋ ԱՅՍ ԱՆՏԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՀՈՎԻՏՆԵՆ, ԿՈՒՋՆԵՔ ՔԱՐ ՄԵ ԵՎՍ ԱՎԵՆՆԵՆ, ԱՅՍ ԲԱՋՄԱԴԱՐՑԱՆ ՔԱՐԵՐՈՒՆ ՎՐԱ: ԿՈՒՋՆԵՔ ՏՈՂ ՄԵ ԵՎՍ ՇԱՐՆԼ ՄԵՐ ԵՐԿԱԹԱԳԻՄ ՄԱԴԱՂԱԹՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԵՎ ՊՈՒՏ ՄԵ ԼՈՒՑՍ ԿԱԹՅՆԵԼ ԿՈՒՋՆԵՔ Ս. ԼՈՒՍԱՎՈՐՁԻ ԱՆՍԱՐ ԿԱՆԹՆԵՐ ՄԵՋ:

... ՔՐԻՍՏՈՆԵՐՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆ ՍՈՒՐՔ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ԻՍԿ Է:

ԵՐԱՋԸ ԱՆԳԱՄ ՄԵ ԵՎՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՈՒՆ ԿԴԱՌԵՍ» (Ամենայն Հայոց Հայրապետի Կաթողիկե Ս. էջմիածնի տունի առթիվ հունիսի 28-ի կիրակի օրը Մայր Տաճարում խոսած քարոզից. «էջմիածին», 1957 թ. № 2):

Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի սուրբիվ բովանդակ հայությանն սրտագին մաղրանքն է, որ Աստված «անարատ, հաստատուն և անաղոտ» պահի Մայր Արքունի. Ս. էջմիածինը՝ «ի պայծառությամբ եկեղեցեացս մերոց և մանկանցս սոցին մինչև ի կատարած աշխարհի», և երկար կյանք պարգևի նրա արժանընտիր Դահակայ, հաճուրց հայության Հայր Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետին:





Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹՎ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆ
ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ

Հայկական ՍՍՌ Միեկամբերի Սովետին աղբեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից հանեցեք ընդունել ջերմագին շնորհավորանքներ Ձեր գանակալության երկրորդ տարեդարձի առթիվ: Ի սրտե ցանկանում եմք Ձեզ փառառդություն և բեղմնավոր գործունեություն լավագույն ցանկություններով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԵՐԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Ուրախ պիտի լինեի այցելելու Ս. Էջմիածին Ձեր գանակալության երկրորդ տարեդարձի առթիվ: Սակայն նկատի ունենալով այդ օրերին իմ մեկնումը Հարավայսլիայի, հեռվից ողջունում եմ Ձեզ այդ նշանակալից օրվա կապակցությամբ:

Եղբայրական սիրով՝
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐԺ
ԱԼԵԿՍԻ

ՄՈՍԿՎԱ

Վեհափառությանդ գանակալության երկրորդ տարեդարձին առիթով ընդունեցեք ամենուս շնորհավորանքը, սրտագին մաղթանքները Ձեր թանկագին կենաց փառառդության, արեղատության և Ձեր բոլոր եկեղեցական ձեռնարկներու բազմադյուն հաջողության համար:

ԹՈՒՐԿԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺ
ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱԶՍՏՈՒՐՅԱՆ

ՍՏԱՄԲՈՒԼ

Մեր խոնարհ և հարգալիք շնորհավորությունները Ձերդ Վեհափառության գահակալության տարեդարձի առթիվ իմ, միաբանության և ժողովրդի կողմե: Կաղոթենք Ձեր առողջության, Ձեր սուրբ գործերու հաջողության և Մայր Աթոռի հաստատության համար:

ԵՐՈՒՍԱԿԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿ
ՏԻՐԱՆ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍԻԱՆ

ԵՐՈՒՍԱԿԵՄ

Ճերմուրեն կշնորհավորենք Ձեր գահակալության երկրորդ տարեդարձը: Կաղոթենք առողջություն և հաջողություն:

ԿԻԼԿԻՍԱՆ ԱԹՈՒԻ ՏԵՂԱՊՈԼ
ԽԱՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱԶԵԱՆ

ԿԻՍՏԱՆԿՈՍ

Նորայրաբար ողջունում ենք Ձերդ Սրբությանը գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ և ամբողջ հագով աղոթում Ձեր բարեբախտիկ հովվապետության և Ձեր Ս. Եկեղեցու պայծառության համար:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԿ
ԿԻՐԻԼ

ՍՈՅԻԱ

Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ ստացվեցին շնորհավորական բազմաթիվ հեռագրեր և գրություններ մեր բոլոր առաջնորդներից, հոգևոր հովիվներից, թեմական, եկեղեցական խորհուրդներից, ազգային-եկեղեցական կազմակերպություններից, մշակութային ընկերություններից և առանձին ազգային ծանոթ և պատասխանատու անհատներին: Վեհափառ Հայրապետի թանկագին կյանքի արեւոտության և Մայր Աթոռի պայծառության սրտագին բարեմաղթություններով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Վեհափառ Հայրապետի, պարտականություն է ունի սրտագին շնորհակալություն հայտնելու Նորին Ս. Սծության գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ ուղարկված բոլոր հեռագրերի ու գրությունների համար:





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅԲԱԳՈՒՅՆ ՓԱՏԻԱՐԿ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԵՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի,
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՓԱՏԻԱՐԿ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՄԲՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵՅԷ Գ-Ի,
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՓԱՏԻԱՐԿԻ
ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ ՆՈՐԻՆ ՄՐԱՋՆՈՒԹՅՈՒՆ
ՍԵՐԳԵՅ ԵՊԻՍԿՈՍՈՍԻ**

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ

Հավաքվելով հինգուորց և սուր էջմիածնի հովանու ներքո տոնելու համար Կաթողիկոսի օժան երկրորդ տարեդարձը, մենք շեմնուանդ աղօթքներ առա-
վեցինք առ Աստված: Բայց գիտեմք, որ հորիզոնը միշտ չէ, որ լուսաշող է, որ
տոների օրերին ամպերը հաճախ ծածկում են արևի շողերը և հաջորդում է վատ
եղանակ, ու հիմա էլ ժողովուրդների բարօրության և խաղաղության երկնա-
կամարը հաճախ ծածկվում է թշնամանքի մռայլ ամպերով. աշխարհում դեռ
շատ է չարիքը, որը խանգարում է ժողովուրդների բարգավաճմանն ու բարօրու-
թյանը, քրիստոնեական սիրտ վեճ գաղափարների իրականացմանը: Միջազգա-
յին կոնֆերանսներում դեռևս չեն լուրջ փոխադարձ թշնամության և անհանգու-
ժողակամության ձայները, որոնք տագնապ ու երկյուղ են առաջացնում: Բայց,
որ գլխավորն է, չի վերագնի առումային պատերազմի սպառնալիքը: Երկրա-
գնդի տարբեր վայրերում դեռևս կատարվում են առումային ու ջրածնային
զենքի փորձարկումներ, որոնք այնքա՛ն ուժգին տագնապ են ներշնչում ժողո-
վուրդներին, լարվածություն և երկյուղ առաջացնում ամբողջ մարդկության
համար սոսկալի հետևանքներով հղի պատերազմի հնարավորության հանդեպ:

Զգալով Հովվապետների պատասխանատվությունն ու սրբազան պարտքը,
այն է՝ չլուրջ հնարավոր վտանգի տագնապի օրերին, մենք կոչ ենք անում բոլոր
նրանց, որոնց համար բանկ է խաղաղությունն ու բարեկեցությունը, առանց
ուժերը խնայելու անել հնարավոր ամեն բան՝ առումային ու ջրածնային զենքի
փորձարկումները կանխելու համար, և դրանով իսկ վերացնել ժողովուրդների
կործանարար բնաջնջման վտանգը: Մենք մեծ տեղությունների կառավարու-
թյուններին կոչ ենք անում անսալ առումային ու ջրածնային ավերիչ զենքի
արգելման մասին ՄԱԿ-ի ընթացիկ նստաշրջանում մեր Հայրենիքի կառավա-
րության արած կոչին: Մենք աղաքում ենք Աստուծո՛ւ՝ ճախախնամաբար բռնել

սլատերազմ պատրաստողների ձեռքը: Թո՛ղ բարգավաճեն ժողովուրդները, և հերջանկություն ժողովուրդների՝ բո՛ղ ահի քարեկամասեր, խաղաղասեր և աշխատասեր բարի մատաղ սերունդը: Իսկ ՏԼԵՐ «Եճար զպատերազմ ի ծագաց մինչ ի ծագս ԼՂԻԻ. զաղեզունս փշրեաց, զզէնս խորտակեաց և զասպարս այրեաց հրով: Կանխեցէ՛ք և ծաներո՛ւք...» (Սաղմ. ԽԵ (ԽԶ), 10, 11):

Ապավինելով դրան, մենք բոլոր ֆրիստոնյաներին և բարի կամքի տեր բոլոր մարդկանց կոչ ենք անում ցուցաբերել բարի կամք և աճել, ամեն ինչ աշխարհի խաղաղության և մարդկանց բարեկեցության նպաստելու համար:

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.

ՄԱՅՐԱԿՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԵԼՔԻ ՍԵՂԵԿ Գ.

ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

ՍԵՂՐ Գ. Ե. Յ.

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԵՎ ՍՏԱԼԻՆԳՐԱԴԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ,
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՆՈ ՊԱՏՐԻԱՐԺԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑ

Ընդունված է Ա. Էջմիածնում
1957 թվականի Ոոկտեմբերի 14-ին





ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԺՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԵՋԳԵՆ Ե ԿԵԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԵՊԵՏԵԿԱՆ ԵՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱԴԻՐՆԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ



Եպտեմբերի 20-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Բաքու, հովվապետական այցելության համար:

Առավոտյան ժամը 9-ին, Մայր Աթոռի ամբողջ միաբանության և Հոգևոր Ընթարանի աշակերտության առաջնորդությամբ, Վեհափառ Հայրապետը իջնում է Մայր Տաճար աղոթելու: ԵՏէր, ուղղեալ զգնացաւ մեր ի ճանապարհս խաղաղութեան:

Գերաշնորհ Տ. Եղեկ եպիսկոպոս Ազնավուրյանը ղեկավարեց իւր ղնէ ի վերայ ոչխարաց ընթանով միաբանության անունից բարի ճանապարհ է մաղթում Վեհափառ Հայրապետին:

Այնուհետև, Մայր Տաճարի դանդերի զողանքների ներքո, շարժվում է Վեհափառ Հայրապետի ինքնաշարժը վեպի Երևանի օդանավակայանը:

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար օդանավակայան էին եկել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը, քահանայից դասը և Երևանի եկեղեցական խորհուրդների անդամները:

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար օդանավակայան էր եկել նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Սարգիս Գասպարյանը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում են գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-

Հովհաննիսյանը և Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը, հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը և Տ. Հուսիկ արքեպա Սանթրուրյանը:

Ժամը 11-10-ին ինքնաթիռը թռիչք է առնում:

Ինքնաթիռի արժաթափայլ թևերի տակ փռվել է Երևանի և ամբողջ Արարատյան դաշտավայրի աննման համայնապատկերը:

Մի ժամ հետո արդեն ադրբեջանական հողում ենք:

Ինքնաթիռը մի քանի րոպե վայրէջք է կատարում Կիրովաբադում, ապա թռիչք առնելով երկուսուկես ժամից մեզ հասցնում Բաքու: Բաքվի օդանավակայանում հայ հավատացյալների հոծ բազմությունը ջերմ և խանդավառ դիմավորում է Վեհափառ Հայրապետին: Վեհափառ Հայրապետին դիմավորելու են եկել Ադրբեջանի թեմական խորհրդի անդամները և քահանայից դասը, գլխավորությամբ Ադրբեջանի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիրոսյանի: Վեհափառ Հայրապետին դիմավորում են նաև Ադրբեջանական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական գործերի խորհրդի լիազոր պ. Մամեդովը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու, մահմեդականների և այլ կրոնական համայնքների ներկայացուցիչները: Դիմավորողների մեջ են նաև Վեհաժամայրը, Մայր Աթոռի դիվանապետ պ. Զ. Առաքելյանը և Հովհաննես սար-

կավաքը, որոնք մի քանի օր առաջ ժամանել էին Բաքու:

Ադրբեջանական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի լիազոր այ. Մամեդովը ջերմ խոսքերով ողջունում է Վեհափառ Հայրապետի ժամանումը Ադրբեջանական Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Բաքու:

Նօրի՛ճ Ս. Օծուխյանը իր պատասխան խոսքում շնորհակալություն է հայտնում ջերմ ընդունելության համար:

Մի հավատացյալ հայ ժողովուրդը ուղքի է կանգնել՝ տրժանտովալել կիրպով դիմավորելու իր սիրեցյալ Հայրապետին: Քաղաքի կենտրոնում բարձրացած հայոց եկեղեցում հավաքվել է հոծ թաղմություն: Անընդհատ ղողանջում են եկեղեցու զանգերը, նրբ երեւիում է Վեհափառ Հայրապետի ինքնաշարժը, բազմությունը ուրախությունից ալեկոծվում է: Հազարավոր ձեռքեր օդ են բարձրանում և ծափահարում, Ամեն կողմից լսվում են բացականչություններ. «Բարի՛ գալուստ



ՎԻՃԱՔԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆՎՈՐԵՄ Է ՐԱԶՎԻ ՀԱՅՈՑ ՆԻՆՂԱՑՈՒՄ

Այնուհետև ինքնաշարժների շարանը լայն, սփառվածապատ ճանապարհով սլանում է դեպի Բաքու: Մերձակա և հեռավոր տարածությունների վրա երևում են նավթահորերի բազմաթիվ երկաթյա աշտարակները: Գրտնըվում ենք հարուստ նավթաշխարհի կենտրոնում՝ Բաքուում:

Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության լուրը մի քանի օր առաջ արդեն հասել է Բաքու և տարածվել ամբողջ եղբայրական Ադրբեջանով մեկ, ուր ապրում են հայեր, Հայաստանյայց եկեղեցու դավանանքի Բաքվի թեմը, Վեհափառ Հայրապետի այցելությանը, ապրում է ուրախության և խանդավառության մի հիշատակելի օրը Թե-

Վեհափառ Հայրապետին, «Կեցցե՛ Հայոց Հայրիկը», «Կեցցե՛ Ս. Էջմիածինը»: Դիմավորողների մեջ կան բազմաթիվ ադրբեջանացիներ և ռուսներ, եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց Վեհափառ Հայրապետը ղգեստավորվում է և ամպհովանու տակ, աղոթքով, խնկով և ճշրաշափառով հանդիսավորապես առաջնորդվում դեպի եկեղեցի: Փոթորկվում են հոգիները: Բուրդի դեմքերին և աչքերի մեջ փայլում են ուրախությունն ու ժպիտը: Ուրախ է նաև Վեհափառ Հայրապետը, Բազմություն միջից, թները թափահարելով, թռչում են տասնյակ սպիտակաթույր աղավիններ, ալեկոծվով Վեհափառ Հայրապետի շնորհաբեր գալուստը:

Դրսից, եկեղեցու արևմտյան դռան վերին-վում, կախված է Վեհափառ Հայրապետի մեծագորի նկարը, «Հովիտ քաղ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց» վերտառութիւնը: Ս. Սեդանի առաջ Վեհափառ Հայրապետը մտասուլջ աղոթում է: Ժողովուրդը անընդհատ եկեղեցուց ներս է հոսում:

Եկեղեցական արարողութեան ավարտից հետո, Աղբբեջանի և Թուրքեստանի թեմի առաջնորդական տեղապահ հոգեւորդ Տ. Տիրաւր վարդապետ Մարտիկյանը Վեհափառ Հայրապետին է դիմում բարի գալըստյան սրտագին ճառով:

«Վեհափառ Տե՛ր, Բաքվի և Աղբբեջանի հայ հավատացյալ ժողովուրդը վաղուց էր սպասում Ձեզ, այն օրվանից, երբ Դուք եկաք մեր թեմը իբրև առաջին արտասահմանյան եպիսկոպոսը: Հուլիս ուրախ ենք, որ այսօր Դուք գալիս եք մեզ մոտ արդեն իբրև Ամենայն Հայոց Հայրապետ: Այցելելով արտասահմանյան և մեր ներքին թեմերը, շնորհաբար նաև մեզ, մթն ցայտմ ընդհանրապես ժողովուրդն էր ամեն անգամ գնում Ս. Էջմիածին՝ այնտեղ մխիթարութիւն, հոգևոր լիցք ստանալու և վերանորոգվելու, ապա այսօր Դուք եք Էջմիածնից գնում ժողովրդի մեզ՝ տալու նրան այդ լիցքն ու հոգևոր վերանորոգութիւնը:

Մեր ժողովուրդը երջանիկ է այսօր, որ հանձին Ձեզ ունի եկեղեցաշէն, մեծ հայրենասեր և անձնդիր Հայրապետ:

Ներկա պայմաններում, երբ մեր ամբողջ ժողովուրդը՝ բանվոր, գյուղացի, մտավորական, համառորեն և աննահանջ պայքարում են խաղաղութեան հաղթանակի մեծ գործի համար, և երբ բարեխիղճ գիտական աշխարհը կոչ է անում մարդկությանը՝ թույլ չտալ, որ այսուհետև մեր կապույտ երկինքը ծածկվի պատերազմի կարմիր կրակներով, Դուք ես, իբրև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու քաղ հովիվ, Ձեր փառապանծ նախորդների նախանձախնդրութեամբ, պայքարում եք և կոչ անում ողջ մարդկությանը՝ շահագործել, որ խաղաղության և անմեղության սպիտակ աղավինն ուրիշ երկվի կարմիր արյունով:

Այսօր Ձեր շնորհաբաշխ այցելութեամբ այդ ոգին եք բերում մեզ:

Աղբբեջանի ամբողջ հայ հավատացյալ ժողովուրդը անհունապես հավատարիմ է ու նվիրված մեր դարավոր սրբություններին, մեր հավատի դարավոր կենտրոն Ս. Էջմիածնին, մեր հարազատ Հայրենիքին և Ձերդ թանկագին Վեհափառութեանը: Ես, իբրև առաջնորդական տեղապահ և թարգմանը մեր համայնքի հայ հավատացյալների զգացմունքների և խոհերի, հավատարիցանում եմ

Ձերդ Ս. Օծութեանը, որ մեր ժողովուրդը այսուհետև ևս միշտ թարմ ու վառ պիտի պահի հավատարմության այդ ազնիվ զգացմունքները: Ձեմ տարակուսում, որ մեր թեմում եղած ժամանակ, Դուք ամեն քայլափոխում առիթը պիտի ունենաք այդ նկատելու և պիտի շրջապատվեք խանդավառ և ջերմ սիրով, Ձեր զավակների անկեղծ գուրգուրանքով և հոգատարութեամբ:

Աղբբեջանի հայոց թեմի և անձամբ իմ անունից սրտագին ողջունում եմ Ձերդ Վեհափառութեան բարի գալուստը և ցանկանում Ձեզ երկար և երջանիկ օրեր՝ առաջնորդելու մեր Եկեղեցին և ժողովուրդը լավագույն կյանքի և ապագայի:

Համարում եմ Ձեր օծյալ Ս. Ալըք: Այնուհետև խոսում է Վեհափառ Հայրապետը:

«Ողջւ՛յն ձեզ, սիրելի՛ հայեր: Ս. Էջմիածնէն Ամենայն Հայոց Հայրապետը եկե՛ր է՛ ձեզ մոտ՝ բերելու ձեզ բոլորիդ, բոլոր հայ հավատացյալներուն՝ սիրտ ողջուն և հայրապետական օրհնություն և լավագույն մաղթանքներ ձեր բոլորիդ քաղաքային, ժողովրդային, կյանքի խաղաղության և ձեր բոլորիդ ցինարաբ գործոց հաջողության համար:

Շնորհակալ եմ ձեզմե, որ այսօր մեծ բով և հոգիի այսօր ջերմութեամբ դիմավորեցիք Մեզ, որպես հաւաքաւ գավակներ մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցի:

Ս. Էջմիածինը հայ ժողովրդի հավատի կեդրոնն է հազար վեց հազար տարիներ ի վեր: Բազում դարեր շարունակ հայ ժողովրդի բարեպաշտ հավատացյալներ իրենց հոգիի աչքերով մնացել են սևեռած դեպի Ս. Էջմիածին: Ս. Էջմիածինը հայ ժողովուրդը յուսավորել է, ավեր է անոր հոգեկան մխիթարություն և միշտ աղոթել հայ ժողովրդի երջանկության և բարօրության համար, բոլոր ժողովուրդներու եղբայրության ու խաղաղության համար:

Մենք, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, շատ զգացված ենք, որ Մեզ դիմավորեցին նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցիի, մուսուլմանական, ինչպես և մյուս կրոնական համայնքներու ներկայացուցիչները, որոնք Մեզ ուրախացուցին իրենց բարի գալուստի խոսքերով:

Մեծապես ուրախ ենք նաև այն բանի համար, որ Մեզ բարի գալուստի խոսքեր ուղղեց Աղբբեջանական ՍՍՌ Միեկստրներու Առվետին տարբեր Կրօնական գործերու խորհրդի լիազոր պ. Մամեդովը: Մենք խորապես մխիթարված կզգանք գՄեզ պ. Մամեդովի խոսքերով, որովհետև ան կենդանալացնէ՝ ոչ միայն Սրբական գործերու

խորհուրդը, այլև Ադրբեջանական կառավարությունը և ադրբեջանական ժողովուրդը:

Խույլ տվե՛ք Մեր սրտեն ողբույնի ջերմ խոսք ուղղել Ադրբեջանի կառավարության, ադրբեջանական և այստեղ ապրող մյուս բոլոր ժողովուրդներուն, կասպյան ծովի հարս փաղափ Բալվին:

Թող Տերը խաղաղության և երջանկության մեջ պահպանե այս փաղափը և անոր ժողովուրդը՝ ադրբեջանցիներ, ռուսներ, հայեր և բոլոր ազգություններու զավակներ, որոնք կապերն այս շեն, արևոտ և բարի Լեհիւն մեջ

հետ միասին և մեկտեղ պիտի ազդեցենք առ Աստված՝ վասն շինության Ս. Եկեղեցվոյս, հայ ժողովրդի և աշխարհի բեղմանու խաղաղության:

Թող Տերը օրհնէ ձեզ, զորացնէ և պահսպանէ այժմ և հավիտյանս, ամեն:

Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Մատուրիստ» հյուրանոցը:

Երեկոյան, Բաքվի հայոց առաջնորդանիսա ճկեղեցում պաշտովում է ժամերգություն, որին ներկա են լինում գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Վարդան սրբապաններն ու վարդապետները, ժամերգությունից հետո, հագեշնորհ Տ.



Կ Ա Չ Ա Հ Ա Մ Ր Ո Ւ Գ Ր Ը

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, Մենք Մեր հայրապետական այս առաքելության տարիվ երկու-երեք օր պիտի գտնվինք ձեր մեջ, քանի մը անգամ պիտի հավաքվինք այստեղ և ազդեցենք առ Աստված: Կիրակի օր Մենք պիտի մատուցանենք հանդիսավոր սուրբ պատարագ, պիտի ծանոթանանք ձեզ և պիտի աշխատինք Մեր մասնակցությունն ալ բերել Ադրբեջանի հայոց թեմի հոգևոր-եկեղեցական շինության գործին, մխիթարելով հայ հավատացյալները: Ահա Մեր ստափելությունը իմաստն ու նպատակը:

Մենք վստահ ենք, որ դուք ևս հոգևոր մխիթարության պահներ պիտի ապրիք Մեզ

Հայրիկ վարդապետը խոստում է քարոզ ծերանի՝ խաղաղարարաց, պի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» ընտրանով:

Սեպտեմբերի 21-ին՝ «Տօն ծննդեան Ս. Աստուածածնի ի յԱննայէն»:

Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը մատուցում է սուրբ պատարագ և քարոզում «Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում դժուրեան քում քանա զանօրէնութիւնս իմ» ընտրանով: Պատարագին ներկա է խուռն բազմություն:

Կեսօրին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Նիպամի Գլանջեիի ան-

վան Թանգարանը և 26 կոմունարների գեղեցիկ մարմնավարական խմբերը:

Ճերեկվա ժամը 3-ին, Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Շեյխ ուլ-Իսլամը և Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահի տեղակալ մուֆտի Ասադուլլան բարեկամական այցելություն են տալիս Վեհափառ Հայրապետին և ավելի քան մեկ ժամ շերմ և սիրալիր զրույց են ունենում Վեհափառ Հայրապետի հետ:

Շեյխ ուլ-Իսլամը, ողորմելիով Վեհափառ Հայրապետի ժամանումը Բաքու, ասում է. «Կարծում ենք, որ մեր այս հանդիպումը պետք է լինի սիրո և հղթարական հանդիպում: Վեհափառը շնորհակալություն է հայտնում սիրալիր այցելության համար և ընդգծում, որ ինքը երկրորդ անգամն է հանդիպում Շեյխ ուլ-Իսլամին, որին նկատում է իր լավ բարեկամը: Շեյխ ուլ-Իսլամը հաճությամբ ընդունում է Վեհափառ Հայրապետի հրավերը՝ ներկա լինելու հաջորդ օրվա պատարագին:

Շաբաթ օրը, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը իջնում է եկեղեցի և նախագահում կիրակամտի ժամերգության: Հավարտ ժամերգության, Վեհափառ Հայրապետը ոգեշունչ քարոզ է խոսում:

«Թանկ ի մեզ, Տէր ամենակալ, զնաւառ, գոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան:

«Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, գիշերային տղաքի այս պահուն, մեր Ս. Եկեղեցին կերգե Աստուծա փառք և կխնդրե Աստուծան, որ Ան ավիցեն, շառցեն հավատքը, հույսը և սէրը մեր հոգիներուն մեջ ու նաև առաքինասէր գործերը մեր կյանքի ընթացքին:

Վստան ենք, թե ձեզմե ամեն մեկը այս սառնուս խորապես հուզված է և հոգեկան խորունկ ապրումներ ունի, քանզի բոլորս միասին կառնվինք մեր սուրբ եկեղեցիին կամարներուն ներքե: Սուրբ սեղաններու առջև մեր սիրտը կրանաք Աստուծո, խաւառվանելով մեր մեղքերը, ձգտելով դառնալ ավելի կատարյալ մարդ:

Քրիստոնեակամ կրոնքի նպատակն է ավելի կատարյալ դարձնել մարդկային էակը: Մենք բոլորս ստեղծված ենք հոգեղեն եկութե և եերակա ենք սխալներու, սայրափումներու: Սակայն մեր սրտի և գիտակցության խորքերուն մեջ միաժամանակ ցանկությունը և իդար ունենք ավելի մաքուր և սուրբ դառնալու, ավելի արդար ըլլալու, ավելի կատարյալ, և եթե հնարավոր է, մոտենալու համար այն մեծ կատարելության, որ Աստված կկոչվի: Մենք մեր հոգիի ուժով կհավատանք, որ

կարող ենք մոտենալ այդ աստվածային կատարելության: Անա այս իմաստով է, որ մենք կաղաքենք մեր եկեղեցիներուն մեջ: Այս իմաստով էր, որ մենք տղաքեցինք «Թանկ ի մեզ, Տէր ամենակալ, զնաւառ, գոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան»:

Մենք կաղաքենք, որ Աստված ձեր հոգիներուն շերմութիւն շնորհե, ձեր մտքերուն՝ լույս և ձեր առաքինի գործերուն՝ հաջողություն:

Մեր Ս. Եկեղեցին ավելի քան 1 600 տարվան պատմություն ունի: Այդ երկար դարերու ընթացքին, մեր ժողովուրդը և եկեղեցին շատ հաճախ սև օրեր ապրեցան: Ներկայիս ուրախ ենք հաստատելու, որ դժկարության օրեր աճցած են և աճա, թե՛ լուստաճի և թե՛ դրացի հանրապետություններու ու արտասահմանյան երկրներու մեջ Հայ եկեղեցին կանգնած է ամուր ճիւղերու վրա, կայսրածառնա աճ և իր սուրբ առաքելությունը կշարունակե մեր ժողովրդի կյանքին մեջ:

Նույն ուրախալի երևույթը Մենք կհաստատենք նաև այստեղ, գեղեցիկ Բաքու քաղաքին մեջ, ուր հավաքված եք դուք բոլորդ՝ ցնծությամբ և շերմությամբ դիմավորելու համար Ամենայն Հայոց Հայրապետը և ստանալու Անոր օրհնությունը:

Ս. Էլմիածինը նստած, Մենք կմտածենք, թե ինչպե՛ս շնեցնենք մեր բոլոր թմերը, Ագրեքեանի թմն ալ մեք, որուն կեդրոնն է Բաքուն: Մենք ուրախ ենք, որ ձեզ նման հավատացյալներ շեն կպահեն Հայոց եկեղեցին: Մենք ու դուք հաջողությամբ պիտի պսակենք մեր եկեղեցաշեն գործերը, որովհետև Աստված մեզ հետ է և մենք կվայելենք բարյացակամ վերաբերմունքը Սովետական բարեխնամ կառավարության, և ձեր պարագային՝ Ագրեքեանի կառավարության, որ ամեն անգամ աջակցություն կընձայն ձեզ բոլորիդ:

Մեր ցնծկությունն է ա՛լ ավելի կազմակերպված տնտեսի Բաքվի այս մեծ թմը: Մենք ուրախ ենք, որ երկու տարին ի վեր, թմական խորհրդի հետ միասին, թմի գործերը ձեռնհասորեն կզեկավարե մեր սիրելի Տիրայր վարդապետը, Մեր երկայացուցիչն ու լիազորը:

Տիրայր վարդապետը տակավին շատ երիտասարդ է: Քիչ աճեցավ կապտանի, որ այսպիսի երիտասարդ վարդապետ մը այնքան խոհեմությամբ, լքությունը և շիրով ղեկավարե նման կտեսնե և մեծ թմ մը: Մենք ուրախ ենք, որ Տիրայր վարդապետը եղանակելով այս գործին, չխալեցանք, քանի որ կտեսնենք և կհաստատենք, որ աճ

իւր պարտականութիւնները կկատարեն հաշտութեամբ, նվիրումով և ջանքով:

Սիրելի՛ հաշտացեալներ, հաշտացած եղեք, որ Տիրայր հայր սուրբը կսիրէ ձեզ բոլորդ, հարազատ եղբոր նման: Մենք վրտան ենք, որ դուք ալ կսիրեմք զինք, կհաշտ-

վարդապետական լանջախաչ՝ որպէս հայրապետական գնահատութիւն, որպէսզի ան այստեղեւն ծառայի առաքել ջերմութեամբ, մինչև խոր ձերութիւն, և իւր պարտքը կատարէ, Հայ եկեղեցիի և հայ ժողովրդի հանդէպ:




ՀԱՅԻՍՏԱՆԳԻ ԱՊՈՍՏՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՐԱՆԻ ԲԱՆԻՍՏԱՆԻ ՇԱՅԻՆ ԵՊԱՐԿՈՍՈՍ

լեքեք և կօգնեք, որ այս քեմի գործերը հաջողութեամբ ղեկավարվին:

Դեռահատելով Տիրայր վարդապետի կատարած գործունեութիւնը և ընդառաջելով քեմական խորհրդի միջնորդութեան, Մեր հովվապետական այցելութեան առիթով մենք կը նորոգենք Տիրայր վարդապետին

Ապա Վահագն Հայրապետը Տիրայր վարդապետի վրից հանդիսավորութեամբ կախում է անհնաւոր, ասկիւօծ խաչը: Հաշտացալ ժողովուրդը խորապէս խոնգավառվում է այս հուշիչ տեսարանից և միաբերան ու մարծբուն ճանհատաւում է՝ «Արժանի՛ է, արժանի՛ է» վերջում Վահագն



Հայրապետը օրհնում է կատարված աշխատանքը, քահանայից դասը, թեմական խորհուրդը, հավատացյալ ժողովուրդը:

Պատարագից հետո հավատացյալ ժողովուրդը, մեկ առ մեկ, անհատաբար մոտենում է Վեհափառ Հայրապետին և ընթերցում համբուրում նրա օծյալ Աչք և սուրբ խաչը:

Սեպտեմբերի 22, կիրակի, Առաքելոսյան ժամերգությունից հետո եկեղեցում և նրա շուրջը՝ բակում ու մերձակա ճանապարհների վրա հավաքվել է հավատացյալների մեծ թաղմունք: Բազմի թեմը ապրում է անմոռանալի ու պատմական օրեր:

Առաքելոսյան ժամը 12-ն է: Վեհափառ Հայրապետը հյուրանոցից առաջնորդվում է հարց եկեղեցի, ուր դիմավորվում է ծափահարությամբ և ժողովրդական խանդավառ ցույցերով: Բազմի հայոց առաջնորդանիստ եկեղեցում հայրապետական հանդիսավոր առկար պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը, Վեհափառ Հայրապետին սպասարկում են Տ. Սահակ և Տ. Վարդան եպիսկոպոսները, Տ. Հայրիկ և Տ. Տիրայր վարդապետները, Տ. Հուսիկ աբեղան և Տ. Գրիգոր քահանան: Վերնատնից երգում է Ս. Էմիանի և Բաբիկ միացյալ երգչախումբը, ղեկավարությամբ պ. Հրանտ Գևորգյանի, ղեկավարությամբ պ. Հրանտ Գևորգյանի, ղեկավարության պատարագին ներկա են Աղոթեչանական ՍՍԻ Միեկամարմնի Սոփոտիկ աղոթից կրոնական գործերի խորհրդի լիազոր պ. Մամեդյան և այլ պաշտոնական անձնավորություններ:

Հայր մեր՝ ից առաջ Վեհափառ Հայրապետը խոսում է հոգեշունչ քարոզ:

«Ողջուն տու՛մ միմեանց ի համարս սրբութեան:

«Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, կողջունեմք ձեզ բոլորդ և կօրհնեմք Ս. Էմիանին անունով: Ձեզ ողջւն կրեմեմք Միածնաէջ Ս. Յանարեն, ուր 1600 տարիներ առաջ իջավ Աստվածորդին և ճիմքը դրավ ամենայն հայոց հավատի կեդրոն Ս. Էմիանին: Կրեմեմք ձեզ ձոջույն Մայր Աթոռի մեր միարանակից բոլոր եղբայրներեն, որոնք տիվ և գիշեր Մեզի հետ մեկտեղ կաղոթեն առ Աստված հայ ժողովրդի և Հայ եկեղեցիի կյանքի պայծառության և աշխարհի խաղաղության համար:

Ողջւն կրեմեմք ձեզ բոլորիդ Հայաստան աշխարհեն, ուր այսօր կապրի, կշինեն, կկառուցեն և կստեղծագործեն մեր ժողովուրդը:

Ողջւն կրեմեմք ձեզ մեր Վեհափառ Մասիսներեն, մեր Արագածին փառաբանող, Մեանեն և Մայր Արագածին:

Ողջւն նաև ձեզ բոլորիդ համայն հայ հավատացյալ ժողովրդին՝ ձեր հուրազատ եղբայրներեն և փայրերեն, որոնք կսիրեն ձեզ: Եվ կկամենայինք ավելցնել նաև՝ ողջւն ձեզ արտասահմանի ձեր հայ եղբայրներեն և փայրերեն, որ տխուր հակատագրի քերումով, փառափառ դաժան պայմաններում պատճառով, կապրեն ի սփյուռս աշխարհի ցրված, թվով ավելի քան մեկ միլիոն:

Դուք գիտեմք, որ անցյալ տարի, ինտերվար—մայիս ամիսներուն Մենք գացինք արտասահման՝ այցելության տալու մեր ժողովրդին: Ժիշտ է, Մենք չայցելեցինք մեր բոլոր թեմերը, բայց սեսանք ավելի քան կեսը հայ ժողովրդի: Մենք այցելեցինք Լիբանան, Եգիպտոս, Անգլիա, Իտալիա և Ֆրանսա: Ամեն տեղ հայ ժողովուրդը համախմբված է իր Ս. եկեղեցիին շուրջ, ամեն տեղ կապրի Ս. Լուսավորչի հավատով և Ս. Էմիանին տեսիլով ներշնչված: Արտասահմանի մեր բոլոր գաղութներում ազգային-եկեղեցական կյանքն ալ լավ կազմակերպված է: Սմեն տեղ դպրոցներ կան, ուր կուսանին մեր մանուկները մեր փառք հայոց լեզուն: Ամեն տեղ հայոց լեզուն կենդանի ազատ ու խոսիտ: Երբ Մենք այցելեցինք արտասահման, ամեն տեղ Մեզ կղիմավորեին խաղաղասիրտները, երգով ու շարականներով, կարտասանեին Սովետական Հայաստանի մեր բանաստեղծներու՝ Ավետիք Իսահակյանի, Սիլվա Կապուտիկյանի, Գևորգ Էմինի և ճին ու նուրալ բանաստեղծներու և գրագետներու գործերեն:

Արտասահմանի մեջ հարցուցին նաև Աղբրեջանի հայ ժողովրդի և մասնավորապես Բաբիկ և Լեռնային Ղարաբաղի հայերու վասին, որովհետև անոնք յսած էին, որ Մենք երեք տարի առաջ այ առիթը ունեցած էինք գտնվելու այստեղ: Մենք պատմեցինք անոնց ձեր հավատի ու կյանքի մասին: Անոնք խորապես կուրախանային լսելով ձեր բարի յուրերը, ձեր եկեղեցաշին և հանրագուտ աշխատանքներու մասին:

Մենք մեր անցյալին մեջ հաճախ վատ օրեր չառ տեսած ենք, բընամիներ հաճախ մեր սուր տառառները ավերե են, մեր ժողովրդի զավակները գերե և նահատակե են: Երկար է հայ ժողովրդի մարտիրոսացման պատմությունը և տխուր:

Մենք, սիրելի՛ հավատացյալներ, փառք պիտի տանք Աստուծո, որ այդ օրերը վաղուց անցած են: 40-րդ տարին է, որ Սովետական իշխանության շնորհիվ, խաղաղաբեր ուս մեծ ժողովրդի օգնությամբ, մեր Կովկասի ժողովուրդները՝ աղբրեջանցիները, վրացիները և հայերը, իրենց խաղաղ, շի-

նաւար կյանքն են գտած, կապրին եղբայրաբար իրենց հայրենի սանձաններուն մեջ: Այս շատ զնաճատելի է, և մենք ոչ մեկ բուսակ պետք չէ մօտեանք, որ Կովկասի ժողովուրդներու եղբայրությունը հաստատվեցավ շնորհիվ Առվեստական իշխանության: Ամեն մեկ հանրապետություն առանձին-առանձին է, բայց միացած ենք մեկ մեծ ընտանիքի մեջ, որ կկռչվի քաղաքացի Առվեստական մեծ Միություն:

հերուն հետ միասին մեր պարտքը կատարել մեր ժողովրդի և Աստուծո առջև: Մենք այցելեցինք գրեթե մեր բոլոր թեմերը, և այսօր կայցելենք Ադրբեջանի թեմը: Ասկե 52 տարի առաջ այստեղ այցելած է մեր կաթողիկոսներեն Երանաշենոն Խրիմյան Հայրիկը: Ձեզմե մեծերը թերևս կհիշեն այդ երջանիկ օրը, երբ Ամենայն Հայոց Հայրիկը այս եռյցն եկեղեցիին մեջ պատարագեց և ֆարոգեց: Այդ կես դարու ընթացքին շատ



ԿԻՐՈՍԿԱՆ ԳԻՐՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ Պ. ՄԱՐԵԳՈՎԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Առվեստական բոլոր ժողովուրդները խաղաղություն կցանկան: Խաղաղությունը իրականություն է այսօր մեր մեջ և այդ է, որ մեզ ուժ կուտա՝ խաղաղությամբ լուծելու մեր բոլոր հարցերը:

Մենք շատ շնորհակալ եղանք, որ այստեղ Մեզ դիմավորեցին ոչ միայն հայերը, այլ նաև եղբայրական ադրբեջանցի ժողովրդի ներկայացուցիչները, չեմս և քաղկականական խոսքերով: Մենք այս բոլորը պիտի պահենք Մեր հոգիին մեջ իբրև լավագույն հիշատակ: Մենք կաղոթենք, որ այս սերն ու միությունը մնան միշտ անփակտելի:

Միեկի՝ ժողովուրդ, հագիվ երկու տարի է, որ Մենք քաղաքացած ենք Ս. Լուսավորչի Աթոռին վրա և կաշխատենք մեր միաբան-

կապիություններ եղան: Բախու ֆաղաքը նոխացավ, փարթամացավ: Մեր եկեղեցին, տխուր օրեր ապրելիս հետո, այսօր վերստին հառաչընթացի մեջ է: Մենք ահա ետեն հավաքված ենք ձեզ հետ միասին այս սուրբ տաճարին մեջ աղոթելու: Մայր Աթոռ վերադառնալեն հետո Մենք հոգիով միշտ ձեզ հետ պիտի ըլլանք և Մեր ուշադրությունը պիտի սենեկենք նաև դեպի ձեր թեմը և Աստուծո ողորմությամբ ու Կառավարության օգնությամբ պիտի աշխատենք ա՛լ ավելի կազմակերպել ձեր հոգևոր կյանքը:

Կհրավիրենք ձեզ բոլորդ օր մը ուխտի գալ Ս. Էջմիածին, որպեսզի այնտեղ ալ, մեկ շունչ և մեկ հոգի դարձած, աղոթենք մեր պապերու Աստուծուն:

առաջ ժողովուրդների միջև գոյություն ունի դարավոր բարեկամություն, որը ոչ ոք չի կորույց միևարակել: Մեր նկեղեցիների միջև էլ գոյություն ունի իսկական բարեկամություն: Երկու նկեղեցիներն էլ բաժանել են պատահականների արհամիրքները և պայքարում են հանուն խաղաղության: Ինձ ծանոթ է հանդուցյալ Գևորգ Զ-ը, որի աշխատանքը խոշոր ներդրում էր խաղաղության ուժերի միավորման գործում: Ինչ հավատում եմ, որ նա այժմ էլ ապրում է մեր մեջ:

Իս, Բաքվի ռուս հոգևորականության և հավատացյալների անունից, սրտագին ողջունում եմ Ձեր բարի գալուստը Բաքու: Բաքվի ռուս և հայ հավատացյալների ու

Ապա Վենափառ Հայրապետը բաժակ է ստաջարկում հրեաների և բուսպիստների ներկայացուցիչների և հանձինս նրանց՝ և կնդեցիներն ու ժողովուրդների բարօրության համար:

Սեղանների շուրջ ստեղծված մթնոլորտը դառնում է ավելի և ավելի ջերմ և խանդավառ: Ճաշկերույթը վեր է ածվում տարբեր ազգերի ու կրոնական տարբեր համոզմունքների սեր մարդկանց համերաշխության և սիրուց ուլյցի:

Գերաշնորհ Տ. Սահակ արևիպիսկոպոսը խոսք ատենելով ասում է.

«Ամենից վեղեցիկը բնության մեջ միությունն է: Տարրեր գույնի և բույրի ծաղիկնե-



ՎԵՆԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԵՐՈ ՈՒՆԱԼԱՐԻ ԶԵՏ

հոգևորականության միջև գոյություն ունի ունի և բարեկամություն: Ձեր այցելության միայն բարեկամությունը է՝ ավելի պիտի ամրապնդվի: Փառասուն տարի է, որ ես աշխատում եմ այստեղ և արել եմ ամեն ինչ, որ պետքի այդ բարեկամությունը է՝ ավելի ուժեղանալ: Ինչ կարծում եմ, որ Ձերդ Մրբության այցը նոր էջ պիտի բաց անի մեր երկու ժողովուրդների բարեկամության պատմության մեջ:

Ձեզ մաղթում ենք հաջողություններ և երկա՞ր, երկա՞ր տարիներ:

րից կազմված փունջը շատ ավելի հոտավետ և հաճելի է յինսում: Այդպես են նաև մեր Սովետական Միության բողոքական ժողովուրդները: Ես հին մարդ եմ և յավ եմ հիշում, որ զարիզմի ժամանակ մի ժողովուրդին թունավորում էին մյուսի դեմ և կաղամակերպում աղգամիջյան ջարդեր: Այժմ այդ երևույթնությունն չկան: Մեր բոլոր ժողովուրդները սուրբում են եղբայրաբար և սիրով: Բաժակս բարձրացնում եմ սովետական բոլոր ժողովուրդների միության, եղբայրության և երջանկության կենացը:

Հուզված խոսում է նաև փաստաբան Ակսրովը.

«Ես կուզենայի առաջարկել այս բաժակը մարդկության բարօրության, խաղաղության և երջանկության համար. Առանց խաղաղության չի կարող լինել ոչ մի լավ բան. Անցյալում հոգևորականությունն արել է ժողովրդի համար այն ամեն բարին, ինչ հնարավոր է եղել. Այժմ աշխարհն ապրում է ծանր օրեր. Աիրտս խայտում է ուրախությունից, երբ այժմ հոգևորականությունը տեսնում եմ մի ընդհանուր և սրբազան գաղափարի՝ խաղա-

վեհափառ Հայրապետն ասում է եզրափակիչ խոսքը.

«Այս սեղանը եղավ ոչ միայն առիր մր ընտրեղեն բարիքներ հաշակելու, այլ մանավանդ հոգեպես գոհանալու և հագնելու, գիրար ավելի լավ հասկանալու ու քառակամանալու: Ահա երկու օրն ի վեր Մենք ծանոթություններ հաստատեցինք պ. Մամե-րովի և կրոնական զանազան գործիչներու հետ: Նվ Մեզ այնպես կթվի, որ մենք հին քառակամներ ենք: Խոր մտերմություն մը հաստատվեցավ մեր միջև: Որինակի համար.



ՎԵՂԱՓԱՌ ՀԱԳՐԱՊԵՏԸ ԲԱՔՎՈՐԻ ՍՏԵՓԱՆ ՀԱՀՈՒՄԳԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՄՈՏ

դության գաղափարին նվիրված. Հոգևորականությունը իր ձեռքին բռնած լուսավոր ջահը՝ առաջնորդում է ժողովուրդներին դեպի լուսավոր ապագա՝ դեպի խաղաղություն:

Ուստի ես խմում եմ ամբողջ հոգևորականության կենացը:

Խոսք են առնում նաև Ադրբեյջանի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետը, Տ. Վահան ավագ քահանայան և ուրիշներ:

Ծրզախումըը երգում է «Սուրբ, սուրբ», «Հայաստան, երկիր դրախտավայր», «Անդանն է առաստ», «Միժեռնակ», «Կուժն առաս» և ուրիշ երգեր:

Մենք նստելով պ. Մամեդովի կողքին, կիսասեինք ոռսերեն լեզվով, թեև Մենք լավ ոռսերեն չենք հասկնար, քայք, կարծեք, մեր խոսած լեզվեն անդին կար լեզու մը, որով մենք կատարելապես հասկցանք գիրար:

Շնորհակալություն կհայտնենք պ. Մամեդովին և քալորիդ, որ հարգեցիք Մեր սեղանը:

Թող Աստուծո օրհնությունը միշտ անպակաս ըլլա մեր վրայնե, ամեն:

Բոլորը ոտքի են կանգնում. Վեհափառ Հայրապետը «Հայր մեր»-ով և դժարանական աղոթքով փակում է սեղանը:

Անպատեմբերի 23-ին, կիրակի օր, ցերեկվա ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այցելու-

թյուն է տալիս Բաքվի ուսաց եկեղեցուն, եկեղեցու ներսը և դուրսը լիքը ժողովուրդ է՝ ուսա, հայ, ազգերջանցի, Զվարթագին հընչում են եկեղեցու դանգերը՝ Ռուսաց եկեղեցու հովիվ հայր Սերգեյը, քահանաների հետ միասին, ափսիսի վրա դրված մեծ խալով, հեկեղեցու մուտքի առաջ դիմավորում է Վեհափառ Հայրապետին և սիրալիր ողջունում, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է եկեղեցուց ներս, համբուրում է Ս. Սեդանը և լուռ աղոթում, Երգչախումբը քառածայն երգում է Հայրապետական մաղթերգը, Բոլորը հուզված են մինչև հոգու խորքերը թափանցող երգի հնչյուններից, Հատուկ արարողություն է կատարվում Հայ և Ռուս քույր եկեղեցիների ի Քրիստոս սիրու միություն, Վեհափառ Հայրապետի և ուսաց Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսի արևշատություն և ուշխարհի խաղաղության համար:

Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլոր ներկաներին և սրտագին բարեմաղթություններ անում Ռուս Ուղղափառ եկեղեցու հաշտության և ուսա ազնիվ ժողովրդի յուսավոր ապագայի համար: Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է ուսաց եկեղեցու առաջնորդարանը, որտեղ ընդունելություն էր կազմակերպվել ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Նույն օրը ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Շեյխ ուլ-Իսլամին, Վեհափառ Հայրապետին ընկերակցում են գերաշնորհ Ս. Սահակ և Ս. Սրգան սրբազաններ և Ազրբեջանի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Ս. Տիրայր վարդապետ Մարտիկյանը: Վեհափառ Հայրապետը Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Շեյխ ուլ-Իսլամի կողմից ընդունվում է ջերմագին և շատ սիրալիր կերպով, Վեհափառ Հայրապետի և Շեյխ ուլ-Իսլամի միջև տեղի է ունենում սրտագին զրույց, Շեյխ ուլ-Իսլամը ցանկություն է հայտնում զրույցի ժամանակ, որ նման փոխադարձ այցելություններ հաճախ լինեն, որպեսզի հայ և ազրբեջանցի ժողովուրդների պատմական բարեկամության կապերը առավել ամրապնդվեն: Բարգմանի դիրք կատարում է Ս. Տիրայր վարդապետը, Զրույցի վերջում Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Շեյխ ուլ-Իսլամից, շնորհակալություն հայտնելով ջերմ և անկեղծ ընդունելության համար:

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով պաշտոնական այցելություն է տալիս Ազրբեջանական ՍՄԻ Միևիստրների

Մովետի նախագահ և հայտնի գրող Միրզա Իրաֆիմովին և մոտ մեկ ժամ նրա հետ ունենում սիրալիր զրույց եկեղեցական խնդիրների վերաբերյալ, Վերջում Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Միևիստրների Մովետի պ. Նախագահից յավագույն ապավորություններով և քաղցր հուշերով:

Սեպտեմբերի 23-ին, երեկոյան ժամը 9.50-ին Վեհափառ Հայրապետը ճեպլնթաց զնացքով մեկնում է դեպի Կիրովաբադ, Վեհափառ Հայրապետին ընկերակցում են գերաշնորհ Ս. Սահակ արքեպիսկոպոսը, հոգեշնորհ Ս. Հայրիկ և Ս. Տիրայր վարդապետները և Մայր Աթոռի զինանախարակ պ. Հ. Առաքելյանը:

Բաքվի կայարանում Վեհափառ Հայրապետին ճանապարհում են քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները, մամուլի ներկայացուցիչներ և քաղաքի հավատացյալներ:

Առավոտյան ժամը 8.20-ին զնացքը մամանում է Կիրովաբադ, Կայարանում հավաքվել էր հսկայական լազմություն, որը խանդավառորեն և ջերմությամբ դիմավորում է Վեհափառ Հայրապետին, Դիմավորողների մեջ են Կիրովաբադի հայոց եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Ս. Նշան քահանա Բեյլեյանը և մյուս երկու քահանաները, եկեղեցալիս խորհրդի անդամները, քաղաքային քահանայի, մուսուլմանների ներկայացուցիչները, Վեհափառ Հայրապետի երևալը զնացքի աստիճանների վրա դիմավորվում է բոլոր, խանդավառ ծափահարություններով և ցնծությամբ լացականություններով, Վեհափառ Հայրապետը խալակցում է և օրհնում բոլորին, Դժվար է նկարագրել ժողովրդի խանդավառությունն ու ուրախությունը Վեհափառ Հայրապետի այս օրհնաբեր այցելության ժամանակ: Այդ օրը ամբողջապես կմնա մարդկանց հիշողության մեջ, որպես պատմական տարեթիվ:

Վեհափառ Հայրապետը ավտոմեքենաներով առաջնորդվում է դեպի հայոց եկեղեցի, Մեզ ուղեկցում են մոտ 50 ավտոմեքենաներ, որոնք անընդհատ ազդանշաններով ուղեկցում են Վեհափառ Հայրապետի մուտքը Կիրովաբադ, Հայոց եկեղեցու առջև հավաքվել է խուռն լազմություն, եկեղեցուց մի քանի հարյուր մետր հեռավորության վրա Վեհափառ Հայրապետի ավտոմեքենան կանգ է առնում, ժողովուրդը պարսպի ոլես կանգնել է ճանապարհի երկու եզրերի վրա: Այստեղից մինչև եկեղեցի ճանապարհին փոխված են գորգեր ու ծաղիկներ, Վեհափառ Հայրապետը ճշրաշարժառով ու զանգահարությամբ առաջնորդվում է եկեղեցի, եկեղեցու պարիսպների դարբասի վրա կապված է ծաղիկներից

կայն չկարողացանք ձեռն առնել անցնել, առանց ձեռք տեսնելու: Ահա ջատ ուրախ եմք, որ եկանք նաև ձեռք առնել, այս պատմական հաղափր՝ Նիզամիի հաղափր, ուր բոլոր ժողովուրդները ջատ հիմեն կապրեն եղբայրաբար և համերաջխ:

Ողջունենք մեծ Նիզամիի ճիշտականին և այս հաղափր քնակիչներուն՝ աղբյուրացանցիներուն, հայերուն, ռուսներուն:

Կարենեմ Աղբյուրացանի բարեխնամ կառավարությունը, Աղբյուրացանի աշխատասեր և ազնիվ ժողովուրդը և կաղոթենք, որ Տիրոջ Աջը լինի այս Երկրին վրա, որպեսզի բոլորը ապրեն խաղաղությամբ, սիրով: Մեր Եկեղեցին միշտ փառքած է խաղաղություն, որ պետքի այն տիրապետել, իշխել, և՛ մեր, և՛ բոլորի վրա:

Կաղոթենք ձեռք բռնող համար: Աստված ձեռք հեռու պահել ամեն փորձություններն և պարգևել խաղաղ, բարի և Երջանիկ օրեր:

Ողջ լուրջ բոլորդ, և սեր «Տեսա՞նք մերոյ Յիսուսի Քրիստոսի Լիդիի րճի ձեռք և րճի ամեն Եսեանդ, ամէն»:

Այնուհետև բարի դալատյան սրտագին և հուզիչ խոսք է ասում արժանապատիվ Տ. Նշան Բանանա Ռեյլիյանը.

«Վեհափառ Տե՛ր, Թույլ տվե՛ք, Ձեր շնորհաբեր այս այցելության ուրախ տոնի առթիվ, Կիրովոպոլսի համալսարանի հայ համայնքի կողմից սրտագին բարի դալատյան մաղթել Ձերդ Վեհափառության:

Շնորհազարդ Տե՛ր, Երազ ու բուռն ցանկություն էր տեսնել և վայելել Ձեր օրհնարներ ներկայությունը մեր միջ:

Այսօր, հաղար փա՛ռք Տիրոջ, որ ողջ ու առողջ եկել էք Ձեր հեռավոր դավանների այցելության: Ցնծում են մեր սրտերը, տեսնելով սիրելի և երիտասարդ, բայց կորույթի Հայրապետիկ քաջառուղի և կենսուրախ ժպիտով:

Կիրովոպոլսի ժողովուրդի, առաքելապարզ Հայրապետ, նման ուրախություն զբաղված է եղել շատ վաղուց: Սրանից՝ 60 տարիներ առաջ միայն, 1898 թվականին, այստեղ այցելել է երջանկահիշատակ Խրիմյան Հայրիկը: Այսօր, հայրապետական երկրորդ այցելության խանդավառությամբ է սուրբում հայ համալսարանի ժողովուրդը:

Եվ կարծեք ամեն տեղ հասնող, բոլորին կարեկցող, ուրախացնող, հայրենասեր Հայրիկն Հայոց, հարություն առած և մի քիչ էլ երիտասարդացած, շրջում է որպես հրավիրական Հայաստանյայց՝ բովանդակ հայությունը հավաքելու Մայր Հայրենիքի հողի վրա, Ս. էջմիածնի սուրբ կամարների տակ:

Վեհափառ Տե՛ր, այսօր նույն այդ ժողովրդի դավանները սիրում են Ձեզ կոչել նա՛ր

օրերի, մե՛ր օրերի Հայրիկն Հայոց ջերմ առնելով:

Հայրի՛կ... և Դուք այդ նվիրական անունով կոչվեցիք Մայր Աթոռից մինչև Փարիզ, Լոնդոն, մինչև գոնդուների քաղաքը՝ Վենետիկ, մինչև մայրիների աշխարհը՝ Լիբանան, երբեմնի փարավոնների աշխարհը՝ Եգիպտոս, մեծարվեցիք, սիրվեցիք, վայելեցիք Ձեր ժողովրդի սերը, գուրգուրանքը, նվիրվածությունն ու որդիական հարգանքը:

Եվ ահա, այդ բոլորից հետո, Վեհափառ Տե՛ր, Դուք այսօր մեր մեջ եք, մեր սրտում, մեր հոգում. Դուք բարով եկաք, հաղա՛ր բարով:

Այս սրտաբուխ խոսքերից զգացված՝ Վեհափառ Հայրապետը նորից խոսում է ժողովրդին, շնորհակալություն հայտնում ջերմ և սիրալիր ընդունելության համար, հորդորում համախմբվել Հայ Եկեղեցու շուրջ, Աղբյուրացանի առաջնորդական տեղապահ Տ. Տիրայր վարդապետի շուրջը և շենացնել Հայ Եկեղեցին և լինել օրինապահ, ազնիվ քաղաքացիներ:

Ապա ժողովուրդը ջերմությամբ ու կարոտով համբուրում է Վեհափառ Հայրապետի Աջը:

Եկեղեցու ընդարձակ և կանաչադարձ բակում եկեղեցական խորհուրդը կազմակերպել է ճաշկերույթ, որին մասնակցում է նաև ժողովուրդը: Վեհափառ Հայրապետը օրհնում է սեղանը, Ընդառաջելով հավատացյալ ժողովրդի բուռն թախանձանքին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է իր մեկնումը մեկ օրով հետաձգել և ներկա լինել երեկոյան ժամերգության: Այս լուրջ ժողովուրդն ընդունում է երկարատև ծափահարությամբ:

Խոսք է առնում Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի՛ ժողովուրդ, Մենք եկեղեցիին մեջ հոգևոր մխրաբություն ստանալեն հետո հրավիրվեցանք այստեղ ճաշի: Շնորհակալություն Կիրովոպոլսի ժողովուրդին և բոլոր անոնց, որոնք պատրաստած են այս նոխսեղանը: Մենք անգամ մեր այ համոզվեցանք այստեղ, որ հայ ժողովուրդը, ուր այ որ բլուր, կմեա, հառազատ ու հավատարիմ իր եկեղեցիին և Մայր Աթոռին: Հայ ժողովրդի փրկությունը անոր հավատին մեջ է. հավատի՛ դեպի այս եկեղեցին, հավատի՛ դեպի Ս. էջմիածինը և Մայրենի Հողը: Եվ ինչպես որ ամուր են այս եկեղեցիի ֆաբեր. այդպես այ ամուր է հայ ժողովրդի հոգին: Մենք փոքր ժողովուրդ ենք, բայց ինչպես բոլոր փոքր ժողովուրդները, եռյակապես և հայ ժողովուրդը իրավունք ունի ապրելու իր հավատով, աշխատանքով, ֆրոնտով և ազնիվ զգացումներով: Մենք չենք ուզել կորսվիլ, այլ ապրիլ, շինել ու ստեղծագուր-

ծել: Հայ ժողովուրդը երբեք պատերազմ չէ ուզած, երբեք չէ հափշտակած ուրիշներու ունեցվածքը կամ ուրիշի հողը, այլ ապրել է սիրով և խաղաղությամբ՝ բոլոր ժողովուրդներու հետ: Մենք շատ ուրախ ենք, որ կապրենք Սովետական իշխանության հովանիին տակ, իշխանություն, որ կհարգե ժողովուրդներու ինքնորոշման իրավունքը, կրճատական զգացումներու ազատությունը, աշխատանքը և բոլոր արդար իղձերը: Մենք խորապես կհավատանք, որ այս մեծ, լուսավոր ճանապարհը պիտի բացվի աշխարհի բոլոր ժողովուրդներուն համար: Մենք բո-

րոշորը ուղի են կանգնում և բուռն ծափահարությամբ միանում Վեհափառ Հայրապետի մաղթանքներին:

Նույն օրը, ցերեկվա ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը այցելություն է տալիս քաղաքային Սովետ, ուր արժանանում է շատ ջերմ և հարգալից ընդունելության:

Երեկոյան ժամը 5.30-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Կիրովաքաղից 16 կիլոմետր հեռու մեծ դրող և բանաստեղծ Նիկոլայի Գյանջևիի գերեզմանը, որի վրա կառուցված է փառավոր կոթող-հուշարձան: Վեհափառ Հայրապետին դիմավորում են սյ.



ԿԻՐՈՎԱՔԱՂԻՎ ԶԱՎԱՑԱԵՑՈՒՆ ԶԱՅ ԺՈՐ

լորս մեր դիրքերեն, մեզի բաժին ընկած չափով, մեր պարտականությունը պիտի կատարենք այդ լուսավոր ճամբուն վրա:

Թող երկա՛ր ապրի Սովետական մեր մեծ Հայրենիքը: Կեցցե՛ն Սովետական Միության բոլոր ժողովուրդները: Կեցցե՛ Ադրբեջանի եղբայրական ժողովուրդը: Կեցցե՛ մեր հա՛րազատ, մեր փա՛ռաւի, մեր շինարար հայ ժողովուրդը:

Մամեդովը, քաղաքային Սովետի, մուսուլմանների ներկայացուցիչները և բազմաթիվ հավատացյալներ: Աշխարհահռչակ բանաստեղծի շիրմի վրա Վեհափառը դնում է ծաղկեպսակ, որի վրա ադրբեջաներեն և հայերեն գրված է. «Ադրբեջանական մեծ բանաստեղծ Նիկոլայի Գյանջևիին, Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մայրապոլսյն Պատրիարք Վաղդան Ա-ից՝ ի նշան խորին հարգանքի»:

Վեհափառ Հայրապետը խոսք է արձակում:

Նիզամի Կյանքեին ոչ միայն Ադրբեջանի ժողովրդի սեփականությունն է, այլև ամբողջ մարդկության: Ան հպարտությունն ու պարծալն է ադրբեջանցի ժողովրդին: Ամեն սեռունդ, վստահ ենք, որ այսպիսի բարձր դիպեր պիտի դնե անոր ղադրանին, որովհետև նիզամին ալ անմահ ծաղիկներ է սփռած մարզոց ճոգիներուն վեջ: Նիզամին մեռած չէ: Քանի մարդկությունը կապրի, կապրի նաև նիզամին և կձառայե իբրև ճերշման ու ճոգիներու ազնվացման աղբյուր:

Գրել է նաև 25000 ոտանավոր: Մի ծերունի խոր ապրումներով արտասանեց մեծ քանաստեղծից կտորներ՝ աշխատասիրության, խաղաղության և բարեկամության վերաբերյալ:

Վեհափառ Հայրապետը հումանիստ բանաստեղծի գերեզման-հուշարձանից հրաժեշտ է արձակում լավագույն տպավորություններով:

Երեկոյան ժամը 6-ն է: Վեհափառ Հայրապետին առաջնորդում ենք եկեղեցի, ուր հավաքվել է մեծ բազմություն, նկել ձև բուրբ, երիտասարդ թե ծեր, փոքր թե մեծ,



ՊԵՆՈՒՄ Է ՎԵՎԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վերջում Վեհափառ Հայրապետը իր տպավորություններն է գրի առնում այցելուների ոսկեմաշանում:

Դամբարանի պատերին կան նկար-գրվագներ մեծ քանաստեղծի հուշավոր երկերից՝ «Խոստով և Շիրին», «Լեռի և Մեջնուն», «Երկանդար նամե», «Մոթ գեղեցկուհիներ» և այլն: Նիզամին եղել է շատ բեղմնավոր գրող: Բացի վերոհիշյալներից նիզամին

հազարներով, Հավաքված բազմությունը անվերջ ծափահարությամբ և սրտագին կնքեցներով է դիմավորում Վեհափառ Հայրապետին: Այդ հուզիչ և սրտառուլ տեսարանը միայն բավական է համոզվելու համար, թե որպիսի համակրանք է տածում հայ հավատացյալ ժողովուրդը իր սիրելի Վեհափառ Հայրապետի և իր հարազատ եկեղեցու հանդեպ: Եկեղեցում պաշտված երեկոյան

ժամերգությունից հետո Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է անում Կիրովարադի հավատացյալ և հուրասեր հայ ժողովրդից. օրհնում բոլորին, հորդորում միշտ հարազատ մնալ մեր սուրբ կրոնին, մեր հավատին և մեր Հայրենիքին:

Մեպտեմբերի 25-ին, շորեքշաբթի օր, լավաբուրն տպավորություններով և քաղցր հուշերով թողնում ենք Կիրովարադը և վաղ առավոտյան ավտոմեքենաներով հանապարհվում դաշտային Ղարաբաղի միջով. ապա հասնում լեռնային Ղարաբաղ, Թվում է, թե մենք մտել ենք մի նոր աշխարհ, որն

դորձադիր կոմիտեի խորհրդի նախագահ պ. Ռուբեն Շահրիմանյանը և կուլտուրայի բաժնի պետ պ. Արտաշես Բայայանը հարգալիք պատասխանում են Վեհափառ Հայրապետի մի շարք հարցումներին՝ Ղարաբաղի ազգաբնակչության, մշակույթի, գյուղատնտեսության, արդյունաբերության և այլ մարզերի վերաբերյալ: Ղարաբաղի ինքնավար մարզը ունի մոտ 150 000 ազգաբնակչություն. որի 95 տոկոսից ավելին կաղմում են հայերը: Հայաբնակ լեռնային Ղարաբաղի ամեն գյուղում կա հայկական յոթնամյա և տասնամյա դպրոց, իսկ Ստեփանակեր-



ԿԻՐՈՎԱՐԱԴԻ ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԻՄ

իլ քաղաքներով և գյուղերով, աշխարհագրական դիրքով և քնակաճ գեղեցկություններով հարազատ է մեզ, մոտիկ մեր սրտին: Գուցե այդ նրանից է, որ այստեղ ամեն մի կտոր հողի, քարի և հուշարձանի վրա արձանագրվել են մեր ժողովրդի դարավոր պատմության հերոսական էջերը:

Ստեփանակերտում իջևանում ենք հայկական ուժով շինված գեղեցիկ և մաքուր հյուրանոցում:

Կարճ հանգստից հետո Վեհափառ Հայրապետը այցելություն է տալիս Ղարաբաղի մարզպետի կոմիտեի խորհրդին, ուր շերմորեն ընդունվում է և հյուրասիրվում: Մարդային


տում՝ օրենք չլիմ միջնակարգ դպրոցներ և մի քանի տեխնիկականներ: Ղարաբաղցիք իրենց բարձրագույն կրթությունն ստանում են Երևանում, Բաքվում և Միության մյուս բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ղարաբաղում լույս են տեսնում «Սովետական Ղարաբաղ» և այլ հայերեն թերթեր: Ժողովուրդը հիմնականում զբաղվում է երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով: Ղարաբաղում աճում են ցորեն, փաղոց, եփալսուցորեն և այլ կարևոր փոփոխություններ: Կան վահուճի, փայտամշակման, գինու, կոնյակի, տրիփոսածի գործարաններ: Վերջերս հայտնաբեր-

վել են տուֆագույն մարմարի հանքեր շատ մեծ պաշարներով:

Հարաքաղի կենտրոնական քաղաքն է Ստեփանակերտը, որն ունի 18 000 հայ բնակչություն: Այս քաղաքն ունի ընդամենը

դարձ հիանալի շենքերով, տիրույն և երիտա-սարդ քաղաք է Ստեփանակերտը:

Ստեփանակերտից 16 կիլոմետր հեռավո-րությամբ վրա, 1400 մետր բարձր լեռների



ՆԻՋԱՄԻ ԳՅԱՆՋԵՎԻԻ ԴԱՄԱՐԱՆԻ ՄՈՏ

մի քանի տասնյակ տարիների պատմու-թյուն: Իր մաքուր, ասֆալտապատ փողոց-ներով, փարթամ պուրականներով, կամարա-

վրա թառիլ է պատմական Շուշին, որն անց-յալում այնքան կարևոր դեր է խաղացել մեր ժողովրդի կյանքում, իբրև մեր մշա-

կույթի և լուսավորության խոշոր կենտրոն-
ներից մեկը:

Մեկնում ենք Շուշի:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում են
Սարգստործկոմի կուկտուրայի բաժնի պետ
պ. Ա. Բալայանը և պ. Մամեդովը: Մեր մե-

քաղաքի միջից քալելով դնում ենք դեպի
նշանավոր Ամենափրկի: Եկեղեցին, որը
կոչում են Ղազանչեցոց եկեղեցի: Շինված է
մոտ 180 տարի առաջ, կաթնադույն կարծր
քարից: Եկեղեցու արտաքինը մեզ հիացնում
է իր ճարտարապետությամբ: Վեհափառ Հայ-



ՇՈՒՇԻԻ Ս. ԳԻՐԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒ ՋԱՆԳԱԿԱՅԱՆ ԱԹԱՋ

քենաները բարձրանում են ոլորապտույտ
ճանապարհներով դեպի վեր, սարն ի վեր:
Հեռվից էրևում են Շուշիի մեծ գերեզմանո-
ցը, եկեղեցին և փլատակների մի մասը:

րապետը լուռ աղոթում է: Աղոթում ենք և
մենք ու մտովի խոնարհվում նրանց առջև,
որոնց ճարտար ձեռքերով կառուցվել է այս
հրաշակներտ եկեղեցին: Մանրակրկիտ դիտում

ենք նրա առանձին մասերը, յուրահատուկ ձևով շինված երկշարք սյուների, խորանների, ամենման կամարները: Ամեն ինչով հիասթափ ենք և հափշտակված: Եկեղեցին շատ լուսավոր է և ընդարձակ: Վեհափառ Հայրապետը մտածում է անմիջական որոշ նորոգություններ կատարելու մասին, որպեսզի պատմական այս հույակապ կոթողը պահպանվի:

Ամենափրկիչ եկեղեցուց քալելով դնում ենք դեպի Շուշիի մյուս ծայրում գտնվող փոքրիկ եկեղեցին, որը կոչվում է Կանաչ եկեղեցի:

Ներսիս և անտառապատ լեռներով Որջան մոտենում ենք Գանձասարի կողմերին, այն-քան ավելի անտառները թանձրանում են: Գեղեցիկ է Լեռնային Ղարաբաղի թանգարանը: Հասնում ենք Վանքաշեն գյուղը: Գյուղացիները, մի պահ իրենց աշխատանքը թողած, կալերից ընդառաջ են վազում Վեհափառ Հայրապետին և երկյուղածությամբ համբուրում նրա Աչք: Վեհափառ Հայրապետը պուրջում է նրանց հետ և բոլորին բաժանում Ս. Էջմիածնից բերած փոքրիկ խաչեր: Ապա գյուղի միջով անցնում ենք քալ-



ԳԱՆՁԱՍԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՆՔԸ

Ներկոյան Վեհափառ Հայրապետը իր հեռուորդներով վերադառնում է Ստեփանակերտ:

Սեպտեմբերի 28-ին, հինգշաբթի օր, ավտոմեքենաներով առավոտյան ժամը 9-ին մեկնում ենք դեպի Գանձասար, Ստեփանակերտից մոտ 75 կիլոմետր հեռավորության վրա: Մեզ ուղեկցում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի գործադիր կոմիտեի կուլտուրայի բաժնի վարիչ պ. Ա. Բալայանը: Անցնում ենք դժվարանցանելի ճանապարհ-

չելով: Մենք գտնվում ենք սարի ստորոտում, տրոհից մինչև Գանձասարի վանքը մեկ ու կես կիլոմետր է: Ավտոմեքենան վեր է բարձրանում, մագլցելով քարից քար, թփից թուփ: Այնուհետև կանգ ենք առնում և կամաց-կամաց քալելով բարձրանում վանքը, որը շուրս կողմից շրջապատված է բարձր պարիսպներով: Մտնում ենք վանքը, աղոթում և բոլորս մեկ երգում «Ուրախ լեր, Ս. Եկեղեցի» շարականը: Համբուրում ենք Ս. Սեղանը և ապա ծանոթանում վանքին, որը կառուցվել է 12-րդ դարում և այժմ էլ

գտնվում է համեմատաբար բարձր փինակում: Գավթիթը կամ ժամատումը, ինչպես երևում է, ամփոփված է կառուցվել: Հողակալ է կաթողիկեն իր բազմաթիվ նուրբ բանդակներով: Վանքի եկեղեցին շատ մեծ է, բայց հույժ գեղեցիկ է: Ներսիս սյուներ չկան, սակայն կան բազմաթիվ կամարներ, Որմերի վրա կան բազմաթիվ արձանազոտություններ: Գավթում կողք-կողքի թաղված են Գանձասարի կաթողիկոսները, որոնց գերեզմանների վրա կատարում են հոգեհանգիստ: Վանքի ամեն մի քարը, որմը, կամարը և քանդակը խոտուն վիճակում են մեր ժողովրդի ճարտարապետական հանճարի:

Այնուհետև մտնում ենք միաբանական խուցերը, Վեհարանը, որոնք քայքայված վիճակում են:

Գանձասարի վանքը, իբրև ճարտարապետական փառահնդ կոթող, մեր հին և արժեքավոր եկեղեցական հուշարձաններից մեկն է: Սակայն նրա արժեքը միայն սրանում չէ, Գանձասարի վանքը եղել է մեր հոգևոր և իմացական մշակույթի մեծ կենտրոններից մեկը, ինչպես նաև մեր ազգային-ազատագրական շարժման օջախներից մեկը: Այստեղ են դարձնվել հայ ժողովրդի ազատագրության լուսավոր գաղափարներն ու ծրագրերը, այստեղ են դրոշմվել մեր ազգային ազատագրական շարժման հայրենասեր և անձնավոր գործիչները՝ Խարայի Օրին, Մինաս վարդապետը, Սայի և Հովհան կաթողիկոսները և ուրիշներ:

Գանձասարի վանքի դիրքը չքնաղ է: Չորս լողորդ փարթիժով պանաղ է, արտոններ, անտառներ, իրենում ենք խոր ձորը և ըմպում սառնորակ ջուրը աղբյուրի, որ կոչվում է Վանքի աղբյուր: Այստեղ են հավաքվել վանաշենի աշխատասեր, հյուրասեր և հավատացյալ գյուղացիները, որոնք Վեհափառ Հայրապետի տոբերի առաջ ոչխար են մտրթում և ճոխ սեղան պատրաստում: Սեղանի վրա Վեհափառ Հայրապետը հոգեշունչ և հայրենասիրական խոսքեր է ասում վանաշենցիներին և հորդորում հավատարիմ մնալ մեծ սուրբ հավատին և Մայր Հայրենիքին:

Սեպտեմբերի 27-ին, ուրբաթ օր, մեկնում ենք Ստեփանակերտից դեպի Ամարասի վանքը, անցնալով մոտ 80 կիլոմետր ճանապարհ: Վեհափառ Հայրապետին ընկերանում են պ. Մամեդովը, պ. Ա. Բալայանը, Ամարասի կողմերում լինող մերկանում են պանաղից և ամալանում: Հեռվում, ձորի մեջ երևում է Ամարասի վանքը, կառուցված, ըստ ավանդության, Ե դարում և հիմնովին վերաշինված վերջին դարերում: Այստեղ թաղված է Ս. Գրիգոր Լուսավորչի թոռ

Գրիգորիտը, որն Աղվանից կաթողիկոսն էր: Վանքը փոքր է և նման հղկված քարերով շինված քառակուսի տան: Ավելի գեղեցիկ է այն ներսից: Վանքը շորս կողմից շրջապատված է երկհարկանի բարձր շենքերով, Դռանք եղել են միաբանների խուցերը, առաջնորդարանը, հյուրանոցը և այլն: Շրջակա ընդարձակ տարածությունները ծածկված են թթենու անտառներով:

Գրուդի կուտնտեսության նախագահը Վեհափառ Հայրապետին հրավիրում է այդի: Սկսվել է այգեկուղը: Աշխատանքը թողած, բոլորը հավաքվում են մեր շուրջը: Վեհափառ Հայրապետն օրհնում է բոլորին, այգիները, դաշտերը և նրանց արդար աշխատանքը: Ուզում են հատուկ սեղան պատրաստել, բայց ժամանակը չի թույլատրում սպասելու:

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ օր, առավոտյան ժամը 9-ին ինքնաթիռով մեկնում ենք Նրևան և հասնում ժամը 10.50-ին: Օդանավակայանում Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը ջերմորեն դիմավորում է Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու է եկել նաև Հայկական ՍՍՄ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու դոբերի խորհրդի նախագահ պ. Ս. Գասպարյանը:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է դեպի Ս. էջմիածին: Վանքի դարասից, զգեստավորված, միաբանության և Հոգևոր Ճեմարանի աշակերտության ու հավատացյալների խումբ քաղաքական ուղեկցությամբ, Վերադարձում է ինկով ու զանգերի ցրածադին լողանալով Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր Տաճար և գահաբանական աղոթք մատուցում իրան Ս. Սեդանի աղյու:

Գերաշնորհ Ս. Եգեիկ եպիսկոպոսը ամբողջ միաբանության անունից ջերմ խոսքերով բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում խոսք ասելով, ասում է.

«Շնորհակալ եմ, որ Եգեիկ սրբազանը, Մայր Աթոռի միաբանության անունեն, չեմ խոսքերով կղմավորել Մեզ:

Մեր եւրֆին քմեւուն այս վերջին հայրապետական այցելությունն էր, որ տվին: Ինչպես ամեն առիթով, այս անգամ ևս տեսանք և հաստատեցինք, որ մեր ժողովրդի օավակները, ուր այ որ գտնվին, իրենց սրտի բոլոր թելերով ամուր կապված են Ս. էջմիածնին և մեր վերածաղկած Մայր Հայրենիքին: Մենք տեսանք, որ Աղորեյանի մեջ ապրող հայությունը ևս անբաժանելի մասը կկազմեն այն մեծ զանգավածին, որ

կկոշվի հայ ժողովուրդ: Իրոք շափազանցած չէինք բլլար, եթե ըսեինք, որ թե՛ Մենք և թե՛ այնտեղի հայերը ապրեցանք պատմական օրեր: Մեր ակնկալածեն շատ ավելի չեմ սիրո և խանդավառության արտահայտություններ տեսանք այնտեղ:

Այցելեցինք Բաբու, ուր պատարագեցինք և քարոզեցինք հոծ բազմության ներկայությամբ:

Իսկ այն, ինչ պատահեցավ կիրովաբադի մեջ, աննկարագրելի է: Միայն տեսնել պետք էր ժողովրդի այն բազմությունը, որ կնոսեր դեպի եկեղեցի:

Ապա անցանք ինձնավար Լեոնային Ղաբարադ և երկու օր մնացինք ահա սիրուն մայրաքաղաք Ստեփանակերտի մեջ: Այստեղ այլ Մենք շրջապատվեցանք ժողովրդի և իշխանության սիրով և շնորհությամբ:

Այցելեցինք նաև Շուշի, տեսանք հին անցյալին մնացած տխուր ավերակները, ինչպես նաև Ամենափրկիչ հոյակապ տաճարը, որն իր ներքին հորինվածքի ձևով կրեմանք համեմատելի այս Ս. Տաճարին հետ:

Ապա գացինք ուխտի Գանձասարի վանքը: Բարձր լեռան մր գագաթին հաղորական

կանգնած է ԺԹ դարուն կառուցված այդ հոյակապ տաճարը և շատ լավ վիճակի մեջ է: Մեր նախնիքները այնքա՛ն ամուր են շինեց այդ վանքը, որ հետագա ոչ մի փոքորիկ չէ երցեր գայն ավերակի վերածել: Գանձասարի վանքին մեջ է, որ ավելի քան 200 տարիներ ստալ սկսավ խմորվիլ հայ ժողովրդի ազատագրական շարժման գաղափարը: Դավիթ բեկ, Խաչյեյ Օրի, Միլաս վարդապետ և ուրիշ գործիչներ ապրած են այնտեղ, ծրագրած և գործած են հանուն հայ ժողովրդի ազատագրության:

Վերջապես երեկ այցելեցինք Ամարասի վանքը, որ սկիզբ կառնե Խ դարեն և ուր կապահվին մասունքները Ս. Գրիգոր Լուսավորչի քոռան՝ Գրիգորիսի:

Մենք վերադարձանք հովվապետական Մեր այցելությունեն ավելի ոգեշնչված, ավելի խանդավառ և ավելի լավատես:


Թող Տերը օրհնե հայ ժողովուրդը, Մայր Աթոռը և մեր միաբանությունը, և առաջնորդի մեզ իր յուսով, իր իսկ հիմնած Հայաստանայց Ս. եկեղեցիին փառքին համար, ամեն:

ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ,





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

 Մեր ժողովրդի պատմության, ինչպես նաև Հայաստանյայց եկեղեցու տարեգրության մեջ կան նվիրական ու սաղոթք դարձած քաղմաթիվ տարե-
հրանաշնորհ հայրապետների լավականին ստվար մի խումբ, որն արժա-
նացել է հայ ժողովրդի սիրուն ու հարգան-
քին, շինարար ու շնորհակալ գործ է կատա-
րել մեր եկեղեցու, Հայրենի Հողի և մեր ժո-
ղովրդի անցյալի փոթորկահույզ կյանքի
պայծառության, քարգավաճման և խաղաղու-
թյան համար։ Այդ հայրապետների պայծառ
անունները սրբացած են մեր պատմության
մեջ և հայ ժողովրդի երախտագետ սրտում։

Այսօր, մեր երախտաշատ հայրապետների
լուսափաղանգի մեջ, իր արժանի և արդար
տեղն է գրավում մեր սիրելի և աստվածաբ-
յալ Հայրապետը՝ Նորին Ս. Օծուխյուն Տ. Տ.
Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ո-
րի գահակալության երկրորդ տարեդարձն է
տոնում հայ ժողովուրդը ամեն տեղ, այդ
համոզմունքով և սրտառուչ երախտագիտու-
թյամբ։

Անցել են ազգային-եկեղեցական գործու-
նեություն երկու խաղաղ և արդյունավետ
տարիներ և Վեհափառ Հայրապետը նվաճել
է բոլորի հարգանքը, երախտիքն ու սերը։

Վեհափառ Հայրապետի գահակալության տո-
նը հայ ժողովրդի տոնն է, Ս. էջմիածնի
տոնն է։

Մեր ժողովրդի ազգային-եկեղեցական այս
մեծ տոնի առթիվ, մեզ հետ միասին ուրա-
խանալու համար, Մայր Աթոռ էին ժամանել
նաև թանկագին հյուրեր, ինչպես Համայն
Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին
Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը և Մոսկվայի
և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սըր-
բություն Ալեքսիի ներկայացուցիչ, Աստրա-
խանի և Ստալինգրադի եպիսկոպոս Նորին
Սրբազնություն Սերգեյը։

Շարաթ օր է, ասուն Սրբոց Թարգմանչաց
վարդապետացն մերոցն։

Վաղ առավոտյան պաշտվում է ժամեր-
գություն և սուրբ պատարագ, որի ըն-
թացքում կատարվում է լորս սարկավազնե-
րի և կիսասարկավազների ձեռնադրույու-
նը։ Այսօր տոն է Թարգմանչաց մեծ վարդա-
պետների, տոնն է Հոգևոր Ճեմարանի ու-
սանողության և նախատոնակը Վեհափառ
Հայրապետի գահակալության երկրորդ տա-
րեդարձի։ Մայր Աթոռում հանդիսավոր իրա-
դրություն է։ Ուրախ են բոլորը։ Այդ ուրա-
խությունը կրկնապատկվում է Համայն
Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին

Սրբութիւն Մելքիսեդեկ Գ-ի շնորհաբեր այցելութեամբ Մայր Աթոռ։

Առավոտ է, Ս. Էջմիածնի խունկ ու խորհուրդ բուրդող անմոռաց առավոտներից մեկը։ Մայր Աթոռի միաբանութիւնը, Վեհափառ Հայրապետի գլխավորութեամբ, մեկնում է Երեւանի երկաթուղային կայարան՝ հանդիսավորութեամբ և արժանավայել կերպով ընդունելու համար մեծանուն հյուրին։

Կայարանում արդեն իսկ հավաքվել է ժողովրդի հոծ բազմութիւն։

Մոտենում է ժամը և լսելի է լինում վայրաշարժի շշուկի ճիւղ։ Վեհափառ Հայրապետը, միաբանութեան անդամներով, գերաշնորհ Տ. Սիւն, Տ. Հայկազուն սրբազանների և հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանի ընկերակցութեամբ դուրս է գալիս սպասման հատուկ սրահից և, շըրջապատված ժողովրդի հսկա բազմութեամբ, սպասում է ժամանող գնացքին։

Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոսին դիմավորելու համար կայարան էին եկել նաև Հայկական ՍՍՌ Միևիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Սարգիս Գասպարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեւորները, Հոգևոր Ժեմարանի դասախոսական կազմը, Երեւանի եկեղեցիների քահանայից դասը, թղթակիցներ և մամուլի ներկայացուցիչներ։

Ժամը 9.30-ին գնացքը կանգ է առնում կառամատուցի առաջ։ Երկու վարդապետներ բարձրանում են գնացք՝ ողջունելու Վրաց-Կաթողիկոսի ժամանումը։ Ժողովրդի բուռն ծափահարութիւնների տակ գնացքից իջնում է Համայն Վրաստանի ալեփառ Կաթողիկոս Նորին Սրբութիւն Մելքիսեդեկ Գ-ը։ Երկու Հայրապետները, սաստկացող ծափողույնների ուրուտի տակ և ցնծուական աղաղակների մեջ ողջագոյրվում են. «Ողջույն տուք միմեանց ի համբոյր սրբութեան...»։ Ինչքան գեղեցիկ է ու հատկանշական քրիստոնեական սիրոյ այսօրինակ ողջագոյրումն ու համբույրը։ Այդ համբույրը երկու քույր Եկեղեցիների և երկու հարեան և եղբայր ժողովուրդների սրտակցութեան ու միասնութեան վառ ու սրտառուլ արտահայտութիւնն է։

Այնուհետև երկու Վեհափառ Հայրապետները թեանցով, հավատացյալ ժողովրդի խանդավառ ցույցերի միջով, առաջնորդվում են կայարանի պաշտոնական ընդունելութեան սրահ և մի փոքր հանգստանալուց հետո, ինքնաշարժներով մեկնում են դեպի Ս. Էջմիածին։

Դիմավորող ինքնաշարժների շարանը անցնում է գեղակերտ Երեւանի ծառազարդ պո-

դոտաներով, լճերի հրապարակով, Ամիրյան փողոցով և Հաղթանակի հոյակապ կամրջի վրայով ուղղութիւն վերցնում դեպի Ս. Էջմիածին։

Ահա Արարատյան զմրուկայա դաշտը, իր գեղեցիկ ալեգետանների անսպառ ոսկեփառներով։ Ահա ճանապարհների վրա հիանալի ծառուղիները և փարթամ կանաչների մեջ թաղված գուլերի շարանը մինչև Ս. Էջմիածին, ուր դեպի երկինք են խոյացել մեր մամոռտած հինավուրց վանքերի սուրբ դմբիթները։

Ճանապարհին ինքնաշարժի մեջ երկու Վեհափառ Հայրապետները մտերմորեն զրուցում են, Պատմական Զվարթնոցի մոտ լսելի են լինում Մայր Տաճարի դանգերի զվարթաձայն ղողանջները։

Վանքի գլխավոր դարբասի մոտ, ղգետաւորված, սպասում է Մայր Աթոռի միաբանութիւնը, Հոգևոր Ժեմարանի ուսանողութիւնը և ժողովրդի հսկա բազմութիւնը։ Կազմվում է եկեղեցական թափոր։

Հաղթանակի երգի նման հնչում են Մայր Տաճարի դանգերը՝ ավետելու համար, թե Մայր Աթոռ է ժամանում Քրիստոնեայ եկեղեցու պատկանելի իշխանապետներից մեկը, ծնրագիր աղոթք առաքելու համար առ Աստված, Իջման սրբազնասուրբ խորանի առաջ։ Ամպհովանու տակ, խաչով ու խաչվառով, մոմերով ու բուրվառներով և շարականների դաշն երգակցութեամբ երկու Վեհափառ Հայրապետները առաջնորդվում են դեպի Մայր Տաճար։

Տաճար մուտք գործելիս նորին Սրբութիւնը ծնրադիր, սրտառուլ համբույր է դրոշմում հաղարամյա քարերի վրա և խորին երկյուղածութեամբ ուսը դնում ներս։

Իջման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետները կանգ են առնում և ապա Նորին Սրբութիւն Մելքիսեդեկ Գ Կաթողիկոսը ծնրադիր, բաց ղուփսով, համբուրում է Ս. Սեղանը և իր շնրմագին աղոթքը մրմընջում։ Խոր ու վեհ լուրթիւն է տիրում սրբազան այդ պահին. ամեն ինչ կարծեք աղոթող հոգի լինի...։

Ապա միեւնույն հուզումները Իր սրտի մեջ, Իջման Ս. Սեղանն է համբուրում հայոց Վեհափառ Հայրապետ և դառնալով Նորին Սրբութեան, ասում։

«Մելիսեդեկ Գ Սրբազնագույն Կարողիկոս Համայն Վրաստանի և Նորայր Մեհ ի Քրիստոս»։

Այս երգանիկ առիթով ուղղելով Ձեզ Մեհ խաւր, Մեհ սրտի ահեռն բերկրաբեզ կողջունեմք Ձեհ քաւրի գալուստը Մայր Աթոռ։ Պատմական է օր այնօրվան, վասնզի, ա-

վելի քան հազար տարվա մեր պատմության ընթացքին, քիչ անգամներ վրաց կաթողիկոսը առիթը ունեցած է այցելելու Ս. Էջմիածին: Թող օրհնելով բլլա այս օրը, և այսօրվա հիշատակը թող միշտ վառ պահվի ու պահպանվի Մեր և Մեզմե հետո եկող սերունդներու սրտերում մեզ, և թող այսօր քաղ մեր ևս դեռ Մեր երկու ֆուլը եկեղեցիներու և ժողովուրդներու դարավոր պատմության հնադարյան ու ամրակուռ շենքին վրա:

Մեր սրտերում մեզ, տակավին շատ թուրմ են այն բոլոր բարի հիշատակները, զորս ապրեցանք Մեր այցելության առիթով վրաստան, հրավերովը Մեր ձերուհազարդ Նորո՛ւ Համայն վրաստանի կաթողիկոս Մելիքսեղեկ Գ-ի:

Այսօր Մենք խորապես մխիթարված և զոհ կզգանք զՄեզ, որ այնպա՜ր Հայրապետը այնչափ հոգևորական հաճե՛ն առած, Սեզի այցելության կուգա, քերելու համար եկիրական աղբյուրներ Ս. Մցխեթայի և համայն վրաց ժողովրդի՝ մեր Ս. Էջմիածնին և հայ ժողովրդին:

Կլամենայի ավելցնել նաև անձնական զգացում մը սիրու և երախտագիտության՝ հանգեալ Նորին Սրբության: Մեր այցելության ընթացքին հաճեցանք զինքը և առավելագույնս սիրեցինք: Վստահությամբ կրեանք քսել, որ Մեր անձնական համակրանքի և սիրո զգացումներն ալ շինարար դեր մը ունեն, և կհավատանք, որ վերստին Մեր հանդիպումը այս քաղաքային կամարներում ենք՝ և առավել պիտի օգնե մեր ֆուլը եկեղեցիներու պայծառության և եղբայր ժողովուրդներու քաղկալության սրբազան գործին: Կհավատանք, որ առավել չափով հաջողությամբ պիտի պսակվին և՛ Մեր, և՛ Նորին Սրբության շինարար աշխատանքները:

Կրկին ողջունելով Ձերդ Սրբության ժամանումը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ի սրտե կաղօթենք առ Աստված, որ Ձեր կյանքի օրերը ավելի շատնաս, տեսնեք Ձեր Ս. եկեղեցի պայծառությունը և Ձեր ժողովրդի ա՛յ ավելի երջանիկ կյանքը, ամենա՛:

Վեհափառ Հայրապետի ողջույնի և բարի գալուստյան այս սրտագին խոսքերը տեղի ունեցնելով քաղաքին և թարգմանում պ. Ավդյանը՝ Այնուհետև Համայն վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելիքսեղեկ Գ-ը բարձրանում է Իջման Սեղան և ասում:

«Ձերդ Սրբություն և այստեղ հավաքված սիրելի հավատացյալներ.

Նախապես ուզում եմ Ձեզ հայտնել այս առթիվ իմ ապրած խորունկ երջանկությունը, որ երկնավոր Աստուծո ռոմբությունը ար-

ժանցառ տեսնելու այս փառապանծ և սրբազնասուր Տաճար՝ Ս. Էջմիածինը:

Ո՛վ բարի Աստված, շնորհակալ եմ Քեզանից այս անհուն երջանկության համար:

Շնորհակալություն նաև Ձերդ Ս. Օծություն, որ Ձեր սիրալիկ հրավերն ինձ հնարավորություն տվեց տեսնելու այս հազարամյա Սրբությունը, որը իմ տարիների ցանկությունն է եղել:

Սա ուրախությամբ բերում եմ Ձեզ վրաց Ս. եկեղեցու՝ Մցխեթայի և վրաց ժողովրդի սրտագին ողջունները:

Երեք—չորս ամիս է անցել և՛ հրավերով Ձեր Թրիխի այցելության ժամանակվանից, և Դուք անմեղաձայնի ապավորություններ ու հիշողություններ եք բողբել անձամբ իմ, վրաց բոլոր եկեղեցականների և ժողովրդի վրա:

Այսօր այդ նույն այցելությունն է շարունակվում այստեղ նույնչափ հուզիչ և քաղաքականացող: Ձե՛ք որ մեր փոխադարձ այցելությունները արտահայտում են մեր փոխադարձ սերն ու հարգանքը: Իմ այստեղ գալը և Ձեր այցելությունը Թրիխի վաղ կերպով ցույց են տալիս, որ մեր կրոնական և եկեղեցական համագործակցությունը ահում է և լավագույն արդյունքներ է տալիս մեր ժողովուրդների և եկեղեցիների քաղկալականությունը առավելապես ամրապնդելու տեսակետից: Իմ պատվիրակության մեջ մի հայ էլ կա, որը ներկայացնում է վրաց ժողովրդին և Ս. եկեղեցուն: Արդյո՞ք այս ևս փոքրիկ, բայց լիմաստ արտահայտությունը չէ՞ մեր անկեղծ քաղկալության, որ արդեն դարերի պատմություն ունի:

Աղոթե՛նք առ Աստված, որ այս այցելությունը առավելագույն չափով ամրապնդի մեր քաղկալությունն ու սերը՝ ի պայծառություն մեր ֆուլը եկեղեցիների և ի քաղաքություն մեր երկու ժողովուրդների: Թո՛ղ Աստված օրհնի մեր բոլորիս:

Վերջին անգամ Ձեզ ողջունելով կասեմ, որ Դուք հպարտ պիտի լինեք, որ գլխավորում եք այս խաղաղասեր ժողովրդի Ս. եկեղեցին:

Թո՛ղ Աստված պանի-պանպանի Ձեզ, Ձեր ժողովուրդն ու եկեղեցին, ամենա՛:

Մինչ Նորին Սրբություն Մելիքսեղեկ Գ Կաթողիկոսը իր շնորհակալության խոսքն էր ասում, Մայր Տաճար է ժամանում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի և Ռուս Պապոսյավ եկեղեցու ներկայացուցիչ, Աստրախանի և Ստալինգրադի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերգեյ եպիսկոպոսը՝ Նորին Սրբազնությունը խոնարհվում է Նորին Ս. Օծության առաջ և ուսական բամբ ու հնչեղ Հայնով Հաղորդում է Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի ջերմ ողջույններն ու բա-


րեմադրությունները Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ և ցանկանում է նրան արեւշատություն ու բեղմնավոր կյանք:

Վեհափառ Հայրապետը նորին Սրբազնության դիմում է ողջույնի հետեւյալ խոսքով:

«Ուրախությամբ կօղջունենեմ Ձերդ Սրբազնության քարի ժամանումը Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Մենք կրկնապես կօրախանանք՝ մեր մեջ ունենալով Սեբգեյ եպիսկոպոսը, որպես ճերկայացուցիչը Մեր սիրելի եղբոր՝ նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի, որ

բերություններ կհաստատվին և Մենք գոհ լինեմք Աստուծոմե: Թող Անոր օրհնությունը անպակաս ըլլա Ռուսաց Պապսւյւմ եկեղեցւո և առաւմեծ ժողովրդին վրա, ըող Աստված երկար կյանք և առողջություն պարգևե նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին, որպեսզի Ան երկար տարիներ յաւունակե Իր իմաստուն հովվապետությունը: Կրկին անգամ Ձեզ ողջունելով կրսենք՝ քառով եկաք Մայր Աթոռ Ս. Էջմիածին»:

Գերաշնորհ Տ. Սեբգեյ եպիսկոպոսը, խորապես զգացվելով Վեհափառ Հայրապետի խոսքերից, վերստին դիմելով նորին Ս. Օծու-



ՄԱՅՐ ՏԱՄԱՐՈՒՄ ՊԱՏՐԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿ

հեռագրով մըն ալ քարեհանած է Մեզ շնորհավորել: Սակայն այդֆառով չէ գոհացած և քարեհանած է քաղհաստիհան հոգեւորական մըն ալ դրկել՝ մեր հանդիսությանց բաժնեկից ընելու համար նաև Ռուս Պապսւյւմ Սկեղեցիին:

Ի սրտե շնորհակալություններ կհայտնենք: Հայս աւելին, որ նորին Սրբազնությունը այս ֆանի մը օրերու ընթացքին հոգեկան ճշմարիտ մխիթարության օրեր պիտի ապրի Ս. Էջմիածնի և մեր սիրելի Հայրենիքին մեջ:

Կոմունակություն կհայտնենք Իր հաղորդած ջերմ զգացումներուն համար: Վստահ ենք, որ նորին Սրբազնության և Մեր միջնույնպիսի քարեկամական սիրալիք հաւա-

Յյան, հայտնում է, որ իր խոսքերը ըխում են Ռուս եկեղեցու ներկայացուցչի և առաւարդու ջերմ սրտից հավասարապես, թե ինքը խորապես հուզված է սրտաբաղ ընդունելության համար և հիացած է հայոց Հայրենիքով և բազմադարյան Ս. Էջմիածնի Մայր Տաճարով, որ իրեն համար երջանիկ առիթ է աղոթել Ս. Էջմիածնի հնադարյան Մայր Տաճարի մեջ, որը հանդիսանում է հայ ժողովրդի Սրբություն Սրբոցը և հայ հանճարի մեծագույն արգասիքներից մեկը: Ապա նա մաղթում է խաղաղություն աշխարհին, պայծառություն՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն, և երջանիկ կյանք ու արդյունա-

վետ գործունեություն՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Գերաշնորհ սրբազան հոր սրտառու խոսքերից հետո թափորի երկար շղթան ձգվում է դպիչ Վեհարան: Միտում է խունկը, հնչում են դանգերը և երգվում են մեր հոգեզմայլ ջարակները: Երկու Վեհափառ Հայրապետները, բազմաթիվ հավատացյալների քաղցր հայացքի տակ, ամպհովանու ներքև առաջանում են դպիչ Վեհարան: Տաճարից դուրս գալիս հնչում են ծափողջուլիները:

Վեհարանի մեծ դահլիճում, Վեհափառ Հայրապետի ռեզիդենսիլ-ով ավարտվում են ընդունելության եկեղեցական արարողությունները:

Ապա Վեհափառ Հայրապետները բազմում են իրենց աթոռներին և սկսվում է բարի գալուտի հուզիչ ուղարկումները: Վեհափառ Հայրապետը Նորին Սրբության ներկայացնում է Միյուռքից ժամանած հյուր հոգևորականներին՝ գերաշնորհ Սիրն, Հայկազուն սրբազաններին և հոգեշնորհ Ասողիկ ծայրագույն վարդապետին: Ապա ներկայացվում է ամբողջ միաբանությունը:

Նորին Սրբությունը խորապես զգացվեց, երբ Նրան ներկայացան ղեռ քիչ առաջ ձեռնադրված չորս նորրեմա շնորհունակ սարկավազները, որոնց նա ուղղեց իր շնորհավորանքի ջերմ խոսքերը:

Կիս ժամ հետո Վեհարանում տրվեց նախաճաշ ի պատիվ հյուրերի, որն անցավ ջերմ և սրտազին մթնոլորտում:

Մի փոքր հանգստից հետո, երկու Վեհափառ Հայրապետները իրենց շքախմբերով և հյուրերով դուրս եկան շրջապատության վանքի բակում: Նորին Սրբությունը Մեկքիսեղեկ Գ Կաթողիկոսը հանգամանորեն ծանոթացավ Մայր Տաճարի ճարտարապետական և մանրանկարչական առանձնահատկություններին, եղավ Մայր Տաճարին առնթիւ եկեղեցական-հնագիտական թանգարանում և Մայր Աթոռի գանձարանում: Ապա նրանց վանքի բակում ծանոթացան կատարված ու կատարվելիք շինարարական աշխատանքներին, որոնց համար ջերմորեն շնորհավորեցին Նորին Վեհափառությունը:

Ապա հյուրերը առաջնորդվեցին դպիչ Հոգևոր Ծննդարանի բակը, որտեղ նրանց սրտատրոփ սպասում էին ուսանողները: Վեհափառ Հայրապետների ժամանումը ուսանողների կողմից ընդունվեց ջերմությամբ և բուռն ծափահարություններով:

Նորին Սրբությունը Մեկքիսեղեկ Գ Կաթողիկոսը հուզիչ խոսքեր ուղղելով ուսանողության ասաց.

«Երիտասարդությունը ամեն ինչի տղն ու ավելն է, առանց երիտասարդության չկա

կենդանություն, հետևաբար չկա և ոչինչ: Այս տեսակետից էլ ելնելով պետք է ասել, որ Իմերի Ջեր Ս. Նկեղեցին ունի ձեզ նման երիտասարդներ, նա ման չի կարող ունենալ, նա մշտապես կմեա կենդանի՝ իր ժողովրդի մխրբաբության համար: Դուք շատ մեծ ուսուցիչ գործունեության եք պատրաստվում, ձեր ուսերին ու ձեր խղիքի վրա դրված է շատ մեծ պատասխանատվություն: Դուք պետք է, որ այն սրբությամբ կուսարեք:

Ես առաջին շատ եմ սիրում երիտասարդության, ուստի քաղնադրում եմ ձեզ աստվածային օրհնություն ձեր ուսումնական գործերի նախադրության և ձեր կյանքի առողջության համար: Օրհնելով իմեք:

Ծննդարանի վերադառնալ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը ուսանողության առնչից Նորին Սրբության հայտնեց խորին շնորհակալություն իր շնորհաբեր այցելության և սրտազին խոսքերի համար:

Ծննդարանի մուտքի աստիճանների առաջ Վեհափառ Հայրապետները նկարվեցին Հոգևոր Ծննդարանի դասախոսական կազմի և ուսանողության հետ:

Ժամը 3-ին Վեհարանի սեղանատանը կազմակերպվեց ճաշկերույթ: Սեղանի վրա առաջարկվեցին սրտազին կենացներ՝ սրբաբուխ քաղնադրություններով:

Նույն օրը երեկոյան ժամը 8-ին Նորին Ս. Օթություն Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ գերապատիվ Տ. Սիրն, Տ. Սահակ և Տ. Հայկազուն սրբազանների, հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետի և հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի, մեկնեց Երեւանի փոխադարձ այցելություն տալու Համայն Վրաստանի Պատրիարք Կաթողիկոս Նորին Սրբությունը Մեկքիսեղեկ Գ-ին:

Այցելությունն անցավ ջերմ մթնոլորտի մեջ, սրտազին զրույցներով:



Կիրակի է, 12-ը հոկտեմբերի: Վաղ առավոտյանից ուխտավորների հոծ բազմությունը լցրել է վանքի բակը: Մայր Աթոռը տունական եռուզեռի մեջ է, ամեն կողմ տիրում է հանդիսավոր իրադրություն:

Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի երջանիկ առիթով, հրեւում են Մայր Տաճարի զանգերը:

Մայրաքաղաքից, շրջաններից, մոտ ու հեռու վայրերից հոսում է ուխտավորների շարանը Մայր Աթոռ: Գալիս են Երևանից պաշտոնական հյուրեր և Մայր Տաճարի երկու դասերում գրավում իրենց տեղերը:

Առավոտյան ժամը 11-ին սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը: Վանքի բակում արեւելքից է ժողովրդի բազմությունը և անդրադարձվում Վեհարանից Մայր Տաճար տանող

շքերթի ճանապարհի վրա: Շարժվում է եկեղեցական թափորը իր ողջ գեղեցկության և փառաշուք հանդիսության մեջ:

Հայրապետական ամպհովանու տակ կանգնած են երկու Վեհափառ Հայրապետները: Թնդում է ծափահարությունների ուրախ ուրուտը, մինչ երկու վարդապետներ խնկարկում են և այդ խնկի անուշության մեջ հայ հավատացյալի սերն ու երախտագիտությունն է մատուցվում որպես սիրո կնդրուկ երկու Հայրապետներին:

Ժողովրդի ծովածավալ բազմությունը ավելի և ավելի է խտանում թափորի շուրջը, մինչ հուշիկ բարձրանում են Հայրապետների Ս. Աղեբը՝ օրհնելու համար հավատացյալ ժողովրդին:

Նղիշե, Տ. Վահան, Տ. Մեսրոպ և Տ. Մուշեղ վարդապետները:

Հնչում են հայոց պատարագի հուզումնալից մեղեդիները: Խնկի ծուխը, մոմերի մեղմ պլպլացումների և երգվող մեղեդիների հետ, անիմանալի խորհրդավորություն և վեհ հանդիսություն է ստեղծում Մայր Տաճարի բազմադարյան կամարների տակ: Աղոթում են բոլորը ռվասն Հայրապետին Ամենայն Հայոց և ռվասն խաղաղության ամենայն աշխարհի:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատարագի զերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆաանը:

«Այսօր, Մայր Տաճարի պատմական կամարներուն ներքև, ջնծագին կփառարանենք



ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՂՔԱՆՔԻ ՊԱՂԻՆ

եկեղեցական թափորը հանդիսությամբ մտնում է Մայր Տաճար:

Վեհափառ Հայրապետը ռազմում է իր Հայրապետական Գահի վրա, աջակողմյան դասում, իսկ Վրաց Կաթողիկոս Նորին Սըրբություն Մելքիսեդեկ Գ-ը ձախակողմյան դասում, հատկապես պատրաստված հայրապետական գահի վրա:

Վեհափառ Հայրապետի զահակալության առթիվ հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում գերապատիվ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆաանը, որին սպասարկում են Տ.

զահակալության տոնը Ազգիս երանաշնորհ Վեհափառ Հայրապետին:

Հանդիսավոր սուրբ պատարագին երկուդածություն մեր դուխները հակած այս նվիրական սրբատաշ հատակին, ամենքս նույն հավատքով լեցված, քաղցր հուզումներով զեղուն, կրկին ու կրկին մեր ալոթքին մեջ կհայցենք ամենակալն Աստուծո՛ւմ: Կարգե՛նք Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վաղգեն ազգընտիր Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին արեւշատություն և բարօրություն:

Իբրև հարազատ զավակներ Հայաստան-
յայց Առաքելական Ս. Եկեղեցվո, որուն ա-
վանդություններն ու կանոնները ոչ միայն
անվթար, այսպե նաև ավելի զորացած մեզի
հանձնեցին մեր հավատավոր հայրերն ու
առաքինազարդ մայրերը, կուգանք ահա այս-
պես համախումբ ու շերմեռանդ տոներու մեր
Հոգևոր Պետին զահակալության տունը, Անոր
Գահին խորհուրդը, որ վեժն ու գլխավոր ազ-
դակը կհամարենք հայ ժողովրդի մշտատև
միություն:

Սքանչելագործ այս Մայր Տաճարի Ս. Սե-
ղանին առջև ծնրադիր, ուխտ են կատարեր
ազգրնտիր զահակալներ՝ Ս. Գրիգոր Լուսա-
վորչեն մինչև Մակար Ա, Խրիմյան Հայրի-
կեն մինչև Գևորգ Զ և Վազգեն Ա Վեհափառ
Հայրապետները, իրենց անձին, իրենց հո-
գին և իրենց բարձր իմացության շնորհե-
րը տարածելով ավանդապաշտ հոգևոր զա-
վակաց վրա անխտիր:

Հուզումով ու հրճվանքով կեցելինք այն
խկ իրողության համար, որ զինքը նախոր-
դող լուսապայծառ հայրապետներու արժա-
նավոր հաջորդը՝ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն
Հայոց շնորհազարդ Հայրապետը, որուն զա-
հակալության երկրորդ տարեդարձը տոներու
համար այսպես համախումբ աղոթք կմատու-
ցանք հավատացյալ հայ ժողովուրդը ամե-
նուրեք, կշարունակե արդյունավոր ընծայել
իր ստանձնած սրբազան առաքելությունը ե-
րիտասարդի ավյունով, բարձր իմացությամբ
և խոհուն ու կանոնական գործելակերպով:

Երկու տարի առաջ այս Սրբավայրին միջ
ժողովի նստած մեր Եկեղեցվո իշխաններն
ու ազգային պատգամավորները, Աստուծո
իմաստությամբ առաջնորդված էլմիածնի
Մայր Աթոռի թափուր մնացած Գահին վրա
բազմեցուցին նոր Գահակալ մը, հանձին
գերաշնորհ Տ. Վազգեն սրբազան եպիսկո-
պոս Պալճյանի, անոր տալով Մայրագույն
Պատրիարքի և Ամենայն Հայոց Հայրապետի
բարձր պաշտոնը, որուն ամենեն ավելի ար-
ժանի էր ինքը, և որը դարձյալ ամենեն շատ
պիտի արժեցնե ինքը:

Մենք, որ իբր առաջնորդը Հյուսիսային
Ամերիկայի հայոց Արևելյան թեմին կմաս-
նակցինք հայրապետական զահակալության
այս հանդիսավոր արարողության և ժողո-
վրդական տոնախմբության, կրենքք մեր
հատին արտագին բարեմաղթանքներն ու
շնորհավորությունները Նորին Սրբության:

Հայրապետական ու զահակալության մաղ-
թանքները մեր ժողովուրդը կկատարե հա-
վատքով ու երկյուղածությամբ, միշտ վեր ու
բարձր պահելով այն զմայելի ավանդությու-
նը, ըստ որում Ս. էլմիածնի Մայր Աթոռի
Գահին վրա բազմած Գահակալը է և կմնա

իրավամբ Գերագույն Պետր Հայաստանյայց
Եկեղեցվո:

Հոգեկան այս կապի ամրացումը ավելի ևս
շեշտ կստանա, երբ Նորին Ս. Օծովյունը
ատեն-ատեն ուղևորության կելլե Մայր
Աթոռին մերձ ու հեռավոր թեմերուն, ամե-
նուրեք գտնելով մեր ժողովրդին ջերմագին
ընդունելությունը, որ կբխի Ս. էլմիածնի և
Հայրապետական Գահին հանդես տածված
սերեն ու որդիական ակնածանքեն, ինչպես
նաև պարտականության սրտագրավ կան-
չեն:

Ամերիկայի մեր ժողովուրդը կհուսա և ան-
համբեր կսպասե Վեհափառ Հայրապետի
օրհնաբեր այցելության, և մենք սիրով
կկրկենք մեր հրավերը, ակնածանքով ա-
կընկալելով, որ Նորին Սրբության շնորհա-
բեր ներկայությամբ պիտի փառավորվին մեր
եկեղեցիները և հրճվանքով պիտի լեցվին
սրտերը մեր հավատացյալներուն:

Հանուն ողջ հայության կաղոթենք առ
Աստված, որ երկար կյանք ու արեւատություն
պարգևե մեր Սրբազնագույն Վեհափառ Հայ-
րապետին:

Թող Տերը բազմապատկե Անոր եռանդն ու
ուժը Հայաստանյայց Եկեղեցվո պայծառու-
թյան և հայ ժողովրդի մելիթարության ու եր-
ջանկության համար: Ամենա:

Պատարագիչ սրբազան Հոր հուզիչ քարո-
զից հետո միևնույն հանդիսավորությամբ
շարունակվում է սուրբ պատարագը:

Պատարագին ներկա էին Հայկական ՍՍՏ
Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկե-
ղեցու գործերի Խորհրդի նախագահ պ. Ս.
Գասպարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի
անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախո-
սական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեու-
թյունը, մտավորականներ, ճարտարապետ-
ներ, մամուլի և ռադիոյի ներկայացուցիչներ:
Հավարտ սուրբ պատարագի, իջման Ս. Սե-
ղանի առաջ, հազարավոր հավատացյալների
սրտաբուխ աղոթքի մրմունջների հետ միա-
սին կատարվում է Հայրապետական հանդի-
սավոր մաղթանք:

Այնուհետև երկու Վեհափառ Հայրապետնե-
րը հանդիսավոր թափորով առաջնորդվում են
Վեհարան, Հավատացյալ ժողովրդի բազմու-
թյունը երկյուղածորեն դիմավորում է նրանց:
Վեհարանի դարբասի մոտ Վեհափառ Հայ-
րապետն օրհնում է իր հավատացյալ հոտը:

Թափորը շարականների երգակցությամբ
բարձրանում է Վեհարանի Մաղկյա դահլիճը,
որտեղ Վեհափառ Հայրապետը բազմում է
Հայրապետական Գահի վրա, ընդունելու հա-
մար իր զահակալության երջանիկ երկրորդ
տարեդարձի առթիվ պաշտոնական շնորհա-
վորանքներ:

Նորին Ս. Օծուխյան կողքին հատուկ բազմաթուղի վրա բազմել է Նորին Արքուքյուն Մելքիսեդեկ Գ. Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոսը:

անդամ, Հայրապետի Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերապետիվ Ց. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը:
«Շնորհազարդ Հայրապետ»:



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՂԹԱՆԹԸ ԾԱՌԻ ԶԱԽԱՐՈՒՅՈՒ

Հանուն հայ հոգևորականության և համայն շախմատագույն ժողովրդի վեհափառ Հայրապետին ուղղված շնորհավորանքի ջերմ խոսք է ասում Գերագույն Հոգևոր Խորհրդի

Ձեր Հայրապետական օծման և դահակալության այս երկրորդ տարեկիցին առթիվ բախտավոր կզգամ ինքզինքս, որ Տիրուհոր մոլորմամբ ներկա կգտնվիմ դարձյալ, ինչպես ամեն տարի, և ցնծությամբ կուզամ Ձեր

Արքուժյան մատուցանելու իմ սրտագին հարգանքի ու անկեղծ սիրո տուրքը, և Հարավային Ամերիկայի վիճակի մեր ժողովրդի կողմն խոնարհելու Ձերդ Ա. Օծուկյան սիրելի և հարգամեծար անձին առջև, իբրև աստվածընտիր Հայրապետի՝ Ա. Լուսավորչի Քահանայնույն պես և ավելի սրտազեղ սիրով ու որդիական հարգանքով կուգամ Ձերդ Սրբության հայտնելու Հայ Եկեղեցվո Հոգևոր պաշտոնեության, այսինքն եկեղեցական դասուն սիրազեղ ու սրտաբուխ սիրո զգացումները, իր արժանընտիր Հայրապետին, աստվածարայ Հոգևոր Պետին ու Քահակալին, որ իմաստության մեջ ու հայրաբարով Հոգածության մեջ ու Նոգվույն անաշխարհական մեջ կվարեն Հայ Եկեղեցվո նավուն ղեկը դեպի խաղաղ նավահանգիստը:

Վեհափառ Տեր, Դուք Ձեր բարի անձին հմայքով, Ձեր մեծ ու սիրաբարով արտին բարխումովը ու տերունական հեղուկյան օրինակովը և քաջ ու բարի Հովվապետի իմաստության մեջ առնչված եք Ձեր զավակներուն սիրտը, հայաժեք եք Ձեր գործակիցներուն հոգին ու զանոնք շինարար գործի լծած եք: Ոչ միայն Հայրենիքի ժողովուրդն ու մտավորական և արվեստագետ դասը, այլ նաև արտասահմանի հայությունը կսիրեն ու կհարգեն Ձեզ, Ձեր մեծ տեսնելով Լուսավորչի Աթոռին արժանավոր ու ազգընտիր Քահակալը և բարեգութ Հայն ու Ընդհանրական Հայրապետը նախամեծար Մայր Աթոռ Սրբո լէ միածնի:

Շնորհիվ Ձերդ Սրբության հեռատես ու իմաստուն գործունեության և հայրախնամ հոգածության, այսօր, Հայ Եկեղեցին կապրի վերածննդի նոր շրջան մը Հայրենի պայծառ երկնքի տակ, կրօնորեն հոգևոր ու կրոնական զարթոնքի ժամանակաշրջան մը՝ վեհափառ Արարատի հովանին տակ ու Հայրենի բարեխնամ կառավարության բարյացակամ աշքին տակ:

Մեր սիրտը կհրճվի տեսնելով տարվե տարի Մայր Աթոռ պայծառացումը, Հոգևոր Զեմարանի մակարդակի բարձրացումը և աշակերտության թիվի աճումը և հոգևոր ուսնացումը՝ արդեն իսկ տասնյակ մը նորոնծա սարկավաճներ, ինչպես նաև քահանաներ ու վարդապետներ կրոնական նոր կենսունակություն և ոգևորություն ստեղծեն՝ են Մայր Աթոռն ներս, որ Ձեր հայրական խնամքին շնորհիվ կկազմակերպվի հետզհետե, Մայր Տաճարը իր գեղակառույց ճարտարապետության մեջ վերանորոգված է ու շքեղացած, իր շրջափակով, ընդարձակված ու գեղազարդված, որով Մայր Աթոռը կցույցնեն իր վաղեմի փառքն ու շքեղությունը:

Մեր ցանկությունն է, որ վերանորոգվին Հայաստանի պատմական ու հինավուրց վանքերն ու սրբատեղիները՝ իբրև նվիրական ուխտատեղիներ ու վառարաններ հավատքի ու լույսի, վերաբացվին բոլոր հայ եկեղեցիները Հայրենիքի ու դրացի երկիրներու մեջ:

Շնորհազարդ Տեր, անցնող տարվան ընթացքին Ձեր եկեղեցաշեն ու ազգանվեր գործունեությամբ, Դուք պայծառացուցիք Հայաստանյայց Ա. Եկեղեցին, որուն համար երախտադեռ սիրո և սիրալիր հարգանքի արժանի եք՝ բովանդակ հայության կողմն: Անշուշտ, մենք միամիտ չենք ըսելու համար, թե մենք ինչ վարդապետն է, ու չենք կրնար անտես ընել արտասահմանի մեջ մեր Եկեղեցվո մեծ տաճնապը, ու կաղոթենք, որ Աստուծո շնորհիվ ու Ձեր հայրախնամ իմաստության կարենաք հարթել դժվարությունները ու վերահաստատել Հայաստանյայց Եկեղեցվո հոգևոր միությունը՝ ի սփյուռս աշխարհի:

Երեկ, Սրբոց Թարգմանչաց տոնն էր: Անոնք նոր լույս մը տեսան Աստվածաշունչ մատյանին մեջ և հնարեցին հայ տառերը ու Աստուծո խոսքը տվին հայ ժողովրդին՝ իր մայրենի լեզվով: Ինչպես շարականը կըսեն՝ «Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստաներին, հաստատելով յերկրի զգիր կենդանի, հովուով զհօտ նոր Խրայելի»: Կմաղթենք, որ Դուք, Վեհաշնորհ Տեր, թարգմանիչներու իմաստությամբ հովվեք նոր Խրայելի, այսինքն հայության քանավոր հոտը:

Մեր սրտագին մաղթանքն է, որ բարությանց Տերն ու Մեծ Հովվապետը զորավիդ հանգիստնա Ձեզի Ձեր աստվածահաճ ու սրբազան պաշտոնին մեջ, ու կաղոթենք առ Տեր ու կերպենք շարականագրին հետ, ըսելով.

«Ազգիդ կենաց և փրկութեան մերոյ՝ Հոգի Հօր և Որդւոյ... շնորհազարդ պայծառացողազան իշխանութեան մերոյ Հայրապետին, զի օրհնեսցուք զԹեզ, Տէր, այժմ և յաիտեան»:

Կաղոթենք, որ հայրապետական դավադանը ծաղկի Ձեր օծյալ սուրբ ձեռքին մեջ:

Ապա իր շնորհավորություններն է բերում Համայն Վրաստանի Պատրիարք-Աթոռիկոս Նորին Արքեպիսկոպ Մելիքիսեղեկ Գ-ը:

«Ձերդ Սրբություն».

Շնորհավորում եմ Ձեր զանալուրյան եկեղեց տաճարին այն օրվանից, երբ Դուք բարձրացաք համայն հայության պատրիարք-Աթոռիկոսների. ճեղղարյան փառապանծ գանդ: Ձեր Սրբությամբ ցանկանում եմ բազում տասնյակ տարիներ տոնել այդ զանալուրյունը և փառավորել հայ պատրիարք-կաթողիկոսների ճեղղարյան Գանդ, որ փառավորված է Ձեր պանծալի բազմաթիվ ճարտգների կողմից:

Ապա բոլլ տվե՛ք ի՞նձ մի ֆանի խոսք մտնել մեր փոխադարձ այցելությունների մասին:

Ձերդ Սրբություն՝

Երե՛ք ամիս անցել է այն անմոռանալի օրերից, երբ իմ հրավերով Վրաստան և Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի Ձեր կատարած այցելությունը մե՛ծ ռախտություն պատճառեց և՛ վրացիներին և՛ Վրաստանում ապրող հայերին՝ նրանց մեջ զարթեցնելով եղբայրական ու բարեկամական զգացմունքներ:

Այժմ այստեղ միևնույն հանգամանքն է շեշտվում իմ փոխադարձ այցելությամբ, երբ Ձերդ Ս. Օծություն հրավերով եկա Ս. Էջմիածին:

րություններ տեղի են ունենում նաև որպես ռախտական, եկեղեցական հաստատությունների միջև:

Սեր փոխհարաբերություններ, Ձերդ Սրբություն, միևնույն զաղափարի արտահայտությունն են, ինչպիսի զաղափար ու արտահայտում են զանազան պատմիչությունների միջոցով կատարված փոխադարձ այցելությունները: Դրանք արտահայտում են խաղաղության զաղափարը, փոխադարձ սիրուհեղբայրության, բարեկամության, համագործակցության զաղափարը և նպատակ ունեն զարգացնելու հաստատելու ու ամրապնդելու այդ զգացմունքները ժողովուրդների մեջ:



ՎԵՆԵՐԱՆԻ ՄԱՂԱՑԱԾ ԴԱՆՈՒՃՈՒՄ ԽՈՍՈՒՆ Է ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴՈՐՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. Ս. ԴԱՍԹԱՐՅԱՆԸ

Մե՛ծ Հոկտեմբերը նոր յարաշրջան բացեց և փոխեց նաև ազգամիջյան հարաբերությունների ձևերը: Դիվանագետների միջոցով տեղի ունեցող միջազգային հարաբերությունների հիմն ձևեր Սովետական իշխանությունը ոգու շնորհիվ, այդ իշխանության մեր օրերի ներկայացուցիչների շնորհիվ՝ փոխարինվել է ժողովուրդների փոխհարաբերությունների նոր ձևով. ներկայումս այդ փոխհարաբերությունները տեղի են ունենում կառավարական պատմիչությունների միջոցով ու գիտական, գրականական, տեխնիկական և զանազան այլ հաստատությունների պատմիչությունների միջոցով. նման ձևով հարաբե-

րել բոլոր ժողովուրդները և հասարակական-ժողովրդական բոլոր կազմակերպություններն ուրախ են Սովետական իշխանության այդ զաղափարով, ուրախ են ժողովուրդների միջև խաղաղություն, փոխադարձ սեր, եղբայրություն, համագործակցություն հաստատելու ձգտումով, ապա ոչ պակաս ուրախ է նաև Քրիստոսի եկեղեցին, որը Քրիստոսի կողմից հիմնվել է մարդկության մեջ խաղաղություն, սեր և եղբայրություն հաստատելու համար:

Նրե մարդիկ շնորհակալ են Սովետական իշխանությունից միջազգային խաղաղության և եղբայրության նրա ձգտման համար, ապա

ստեղծվ շնորհակալ չէ և Քրիստոսի Եկեղեցին, որի խնդիրն է խաղաղություն և եղբայրություն հաստատել մարդկանց մեջ. ուստի և նա ամեն կերպ մասնակցություն է ցույց տալիս բովանդակ աշխարհի խաղաղության համար մղվող պայքարում:

Մենք Ձեզ հետ միասին, Ձերդ Սրբություն, մեր փոխայցելություններով արտահայտում ենք միջազգային խաղաղության բնականորեն ձգտումը և այդ այցելությունները երևան են բերում, դրսևորում են իսկական եղբայրություն, որ գոյություն ունի մեր ժողովուրդների՝ հայերի և վրացիների միջև:

Ուրեմն բոլր կեցցե՛ն Սովետական Միության ժողովուրդները, որոնք ձգտում են միջազգային խաղաղության և եղբայրության հաստատմանը:

Կեցցե՛ Սովետական իշխանությունը, որը համաշխարհային կյանքի մեջ շատ նոր և օգտակար բաներ մացրեց, այդ բովում և ժողովուրդների փոխհարաբերությունների ներկայացուցչական ձևը, մի ձև, որ հաստատում և ամրապնդում է ժողովուրդների միջև խաղաղություն, սեր, բարեկամություն և համագործակցություն:

Կեցցե՛ն և մեր եղբայրական Եկեղեցիներն ու ժողովուրդները՝ հայ և վրացի ժողովուրդները, որոնք ըստ կարողության իրենց լույսն առնում են համայն աշխարհի խաղաղության համար մղվող պայքարում:

Հանուն Մայր Հայրենիքի կառավարության, շնորհավորանքի չեքմ խոսք ասաց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Ս. Գասպարյանը.

«Ձերդ վեհափառություն.

Քույր տվե՛ք Հայաստանի Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ կողմից չեմոնեն շնորհավորել Ձեզ Ձեր գանակայության երկրորդ տարեդարձի առթիվ:

Այսօրվա հանդիսությանը ներկա են նաև Համայն Վրաստանի «առիարհ-կաթողիկոս Նորին Սրբություն Մելիսեդեկ Գ-ը իր ջիւղով, Ռուս Ուղղափառ օկեղեցու ներկայացուցիչ Սերգեյ եպիսկոպոսը, Հորավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ Սիմեոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արեւիյան քեմի առաջնորդ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամներ Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը և Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանը, որոնց բոլորին չեմոնեն բարի գալուստ ենք մտըրում:

Անցած երկու տարիների Ձեր բեղմնավոր գործունեությունը վկայությունն է այն իրո-

ղության, որ հանձին Ձեզ Հայ Եկեղեցին առնի իր հմուտ, արժանավոր և հայրենասեր զեկավարը: Ձեր գանակայության երկրորդ տարեդարձի տոնակատարության այս հանդեսավոր պահին ես ուրախ եմ նշելու, որ Ձեր գործունեության այս շուրջ երկու տարիների ընթացքում Հայ Եկեղեցու և մեր երեքի Պետական իշխանությունների միջև փոխհարաբերություններն ընթացան միանգամայն ներմայ և արդյունավետ: Այդ փոխհարաբերությունները խառնվում են Սովետական պետության կողմից սահմանված այն օրենքի վրա, որով Եկեղեցին անբաժանելի է Պետությունից և նա միանգամայն ազատ է տնօրինելու իր ներքին և արտաքին բոլոր Եկեղեցական գործերը: Դրանով իսկ ապահովված է բոլոր քաղաքացիների խղճի ազատությունը: Դա իրավունք է տալիս մեզ փստանցնելու Ձեզ, որ այն նորմալ փոխհարաբերությունները, որոնց մասին ես հիշատակեցի, այդպիսին կլինեն նաև հետագայում:

Երկու տարվա կարճ ժամանակաշրջանում Ձեր բազմապիսի Եկեղեցական-կրոնական գործունեության հետ միաժամանակ Դուք անդով կերպով ծավալել եք խոշոր շինարարական աշխատանքներ, որոնց իրականացման ընթացքում Կաթողիկոսությունը ստացել է նաև մեր շինարարական և հարտարարական մարմինների լայն աջակցությունը:

Հայ ժողովրդի մի զգալի հատվածն այսօր դեռ ապրում է արժաստանների տարբեր երկրներում, օտար երկրներում: Սակայն նրանք, բոլոր բնիքով և չեմո գզացմունքներով կապված են Մայր Հայրենիքի հետ և մեզ հետ միասին ուրախանում են իրենց վերածնված Հայրենիքի զարգացմանը և բարգավաճմանը: Այդ հայրենասիրական զգացմունքներն արտահայտվեցին նաև Ձեր արժաստանեայն հովապետական այցելության ընթացքում: Դուք այդ հայրենասիրությունը չեմոնացրիք Ձեր ոգեշունչ քաղաքներով: Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Դուք Ձեր բարձր հեղինակությամբ Ձեր մասնակցությունը բերեցիք նաև ժողովուրդների միջև բարեկամությունն ու խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու շնորհակալ գործում:

Քույր տվե՛ք մի անգամ ևս բերել մեր չեմոն շնորհավորանքները և ցանկանալ Ձեզ քաղաղության և բեղմնավոր գործունեությանը:

Այնուհետև Մոսկվայի և Համալս Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի և ամբողջ Ռուս Պապական յեկեղեցու անունից շնորհավորանքի սրտառույ ու զեղեցիկ ճառ ասաց գերատառիվ Սերգեյ եպիսկոպոսը.

«Ամենայն Հայոց Կաթողիկոս-«առիարհ, ամենաերանելի վազգեն Ա,

Նորին Սրբություն Ալեքսանդր Մոսկովյի և Համայն Ռուսիո Պապարիարք, իմ հոգևոր պետը և Հայրը, օրհնությամբ հրամայեց և հանձնարարեց ինձ, որպես Ռուսական Ուղղափառ եկեղեցու ներկայացուցչի, այսօր, Ձեր զանակալության երկրորդ տարեդարձի այս պանծալի բվականին, ողջունել և շնորհավորել Ձերդ Սրբությանը: Եվ ես անձամբ գտնվելով Ձեր անձնավորության հմայքի ներքո, ինձ համար առանձնապես հանելի է այսօր Ձեզ սրտագին ողջունել իմ Պապարիարքի հետ միասին, Ռուսական եկեղեցու ամբողջ նվիրապետության՝ եպիսկոպոսական

ժողովրդական մեծ քաղաքային հետ միասին իմ համեստ աղոթքները վերադառնալով դեռևս սրբագործված, հայ մարտիրոսների աղոթքների արցունքներով ու արյամբ ողողված Տիրամոր այս Ս. Տաճարում, Մայր եկեղեցում:

Ինձ վիճակվեց Ձեզ հետ միասին աղոթել և տեսնել այն ոգեշունչ, խաղաղարար, խանդավառ տրամադրությունը, պատարագի արարողության պահին, որ ես զգացի հոգեպես և տեսա աչքով: Ես առիթ ունեցա մի անգամ ևս համոզվելու քաղկալության և սիրտ այն զգացմունքի մեջ, որ հայ ժողովուրդը և



ԵԿԱՐԻՅ Մ. ՍԱՐԻՍԱՆԸ ԸՆԴՈՐՋԱԿՈՒՄԸ Է ՂԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

դասի, երա քաղաքանդամ հոգևորականության և ամբողջ ուղղափառ ժողովրդի հետ միասին, և Ձերդ Սրբությանը ցանկանալ, որպեսզի 'Դուք շարունակեք, որքան բեղմնավոր, նույնքան քաղմակողմանի, որքան լայն, նույնքան իմաստուն և հշմարիտ, առաքելական այն գործունեությունը, որը Դուք հանդես եք բերում:

Ես որանից առաջ չեմ եղել էջմիածնում, քայց բարձր պատիվն ունեցել եմ Ձեր եախորդի կողմից այստեղ հրավիրվելու: Եվ անա այսօր, այլև երեկ՝ Տերն արժանացրեց ինձ Ձերդ Սրբության հետ միասին, սրբազան եղբայրների և հովվապետների հետ միասին,

երա հոգևորականությունը տաժում են մեկնաւամբ, ռուս մարդու նկատմամբ:

Երբ մենք դուրս եկանք հանդիսավոր քափարի շարքից, այդ միջոցին ինձ մոտեցան հավատացյալներ և փոքրիկ երեխաներ, որոնք համբուրում էին իմ ձեռքերը և շոյում հանդերձներս: Նրանց մեջ կային ծերունիներ և կանայք, որոնք իրար հետ հայերեն խոսելիս գործ էին ածում «ոուս» բառը: Ես հասկացա, որ այդ ինձ է վերաբերում, արտաքին տեսից ու զեմքից երանք որոշում էին, որ ես Ռուսական եկեղեցուն եմ պատկանում: Այդ ի՞նչ է ցույց տալիս: Այդ մի ավելորդ անգամ վկայում է, ինչպես նշանաձող, մեր ժողո-

վուրդների միջև այն միասնության մասին, որը գոյություն է ունեցել հնուց ի վեր, որովհետև չի եղել մի դեպք, որ Հայաստանը բըշնամանք տաժաժ լինի Ռուսաստանի նկատմամբ, կամ հակառակը: Որովհետև այն ժամանակ, երբ Հայաստանի որոշ հարևաններ այս սարերը և ձորերը ողողում էին հայերի տրյունով, ռուս ժողովուրդն իր քարեկամական, եղբայրական ձեռքն էր պարզում և նա միշտ ցանկացել է փոխադարձ պաշտպանություն և քաղաքականություն: Իսկ Սովետական իշխանության ժամանակաշրջանում այդ ավելի ևս լայն ծավալ ստացավ՝ հասնելով վիրխարի չափերի: Ես այժմ երբանիկ եմ, որ ապրում եմ մեր այս օրերին, երբ քաղաքականությունն ընդունել է, ճշմարիտ որ, վիրխարի չափեր՝ Սովետական իշխանության հովանու ներքո:

Ինձ համար հաճելի կլինի իմ Հոգևոր Հայր և Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիին զեկուցել այն սիրալիր, այդ փշ է տանել, այն ջերմ, սրտագին, հայրական, ուշադիր վերաբերմունքի մասին, — ասեմք հս այդքան էլ անականներ, քառեր չեմ գտնում արտահայտելու բոլոր այն զգացմունքները, որ ես ներկա պահին ունեմ, — որ Դու, Ձերդ Սրբություն, ցույց տվեցիք ինձ որպես իմ հարազատ մեծ Եկեղեցու ներկայացուցչի: Ես Խոսկվա՝ իմ Հորը կնադրեմ, Ձերդ Սրբություն, Ձեր, Ձեզ շրջապատող հովվապետների և ժողովրդի այն ջերմ, սրտագին վերաբերմունքի մասին, որ ես այստեղ զգացի և տեսա:

Ինչ ցանկանամ այսօր ես Ձեզ: Ինձ հարկ, քաղմամյա կյանք, ինձ հարկ, Ձերդ Սրբության համար ավելի շատ բերկրանքներ, քան վշտահարություններ կյանքում: Ինձ հարկ քաղեկամության, եղբայրության, միասնության է՛լ ավելի ամրապնդումն մեր Եկեղեցիների միջև, եռյակես և մեր ժողովուրդների միջև հնուց ի վեր գոյություն ունեցող հարաբերություններում: Ես եմ կցանկանալի, որ քաղմալի խաղաղությունը անխախտ մնա, խաղաղությունը, որի համար այնքան ջանքեր են գործադրվում մարդկային կյանքի բոլոր ասպարեզներում: Ես չեմ խոսում միայն քաղաքական տեսակետից. դա հզոր գործոն է, այլ խոսում եմ նաև քաղաքական, հասարակական, հոգևոր, եկեղեցական տեսակետից, արվեստների տեսակետից. դրանք երաշխիք է հանդիսանում Սոսկվայի անցյալ ֆեստիվալը: Ես նկատի ունեմ երիտասարդության ֆեստիվալը: Ես կամենում եմ, որ մեր Կառավարության, մեր ժողովրդի ջանքերի արդյունք այդ քաղմալի խաղաղությունն օրհնված լինի Աստուծո կողմից: Եվ որ այդ տեսչալի խաղաղությունը լինի բերկրալի և հարատև: Դա իմ խորին ցան-

կությունն է. որովհետև Դուք էլ խառնադրության համար պայքարող խաղաղարարներից, իմաստուն հովվապետներից մեկն եմ, և ես գգում եմ, որ իմ ցանկությունները ներդաշնակվում են և մոտ են Ձերդ Սրբության սրտին:

Ես ուզում եմ իմ խոսքերը եզրափակել այսպես. ցանկանում եմ Ձերդ Սրբությանը. անցյալում քաղմալաշար Հայ Առաքելական Եկեղեցուն փառք և ծաղկի պես քաղմալանում Տիրոջ աստվածային այգում:

Կեցցե՛ հերոսական հայ ժողովուրդը:

Կեցցե՛ նրա Կառավարությունը և Սովետական Միության կառավարությունը:

Կեցցե՛ ռուս ժողովուրդը՝ հայ ժողովրդի քաղի եղբայրը և սրտակից ընկերը:

Կեցցե՛ Դուք, Ձերդ Ս. Սնություն:

Փառք Ձեզ՝ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսին:

Խո՛ղ ողորմած Աստվածը Ձերդ Սրբությանը քաղմալ տարիներ գորավիզ լինի նույն քաղեքախտության, նույն գորության մեջ և ապագայում:

Խո՛յլ տվեք իմ կողմից Ձեզ մատուցել Տիրվինի Աստվածամոր սուրբ պատկերը: Ես ձեռնադրվել եմ Տիրվինի վանքում՝ հյուսիսում և ընդունվել այնտեղ:

Ընդունեցե՛ք, խնդրե՛մ, այս որպես նվեր և ի նշան իմ խորին հարգանաց ու նվիրվածության:

Խո՛ղ Ս. Աստվածածինը հովանավորի Ձեր հովվապետությունը, Ձեր հայրենասիրությունը և Ս. Եկեղեցու Ձեր ղեկավարությունը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից շնորհավորական ջերմ խոսք ասաց մեծանուն լեզվաբան, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամ պրոֆ. Ա. Ղարիբյանը:

Ապա հանուն Երրանաղծի Սրբոց Հակոբյանց միաբանության վեհափառ Հայրապետին շնորհավորեց գերաշնորհ Տ. Հայկազուն Եպիսկոպոս Արաճամյանը:

Ճակա այսպիսի Քահանայապետ մը պետք էր մեզի, որ ըլլար սուրբ, անմեղ, անարատ, մեղավորներին զատված և բարձրացած երկինքներին ալ վերու Որ պետք չունի ուրիշ քահանայապետներուն նման իր մեղքերը քաղելու համար նախ իր անձին համար պատարագ մատուցանելու, այլ սա ինքզինքը պատարագեց իր ժողովրդին համար (Նոր. է 26—27):

Այսօր Հայ ժողովրդի Սրբություն Սրբոց հանդիսացող սա հոյակապ և պատմական Տաճարին մեջ, հավատացյալներուն այսքան քաղմահազար նալվածքներուն առջև ու անոնց աղոթավոր հոգիներուն մեջ, կեցած է մեր օրերու Սրբազան Քահանայապետը Վազգեն Ա, որ ինքզինքը կպատարագե իր Եկեղեցիի և Հայրենիքի պայծառութեանը համար: Մեր

աժենուս հոգիներուն մեջ, Ան է Աստուծո
րնորայլը, սուրբը, անարատը և անմեղը:
Նորին Ս. Օծուքյուն Տ. Տ. Վազգեն Ա Կա-

թափուտը, կանգնած է Ան Հռապտոյի պատ-
մական Ս. Աթոռին վրա ու Իր հալացքը ուղ-
ղած Իր հավատացյալ ժողովրդին, ու բոլոր



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԺԱՆԻՆ Գ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՐ
ԵՆՐԱԳԻՐ ՄԱՅՐ ՑԱՃԱՐԻ ԳՌԱՆ ԱՌԱՋ

թողիկոս Ամենայն Հայոց, որուն գահակա-
լության երկրորդ տարեդարձն է այսօր, որ
կառնե՛հ Կաթողիկէ Մայր Եկեղեցի Ս. Էջմիա-
ծինը, Հայաստան աշխարհը և բովանդակ

այն մոտավոր և հեռավոր հոգիներուն, որոնք
իրմով կտուղտովին:

Նորին Ս. Օծուքյուն Վազգեն Ա-ը մեր օրե-
րու Մովսեսն է, անապատներէն Իր հոտը

առաջնորդող առաջնորդ հանգստեան և Մեր օրերու Դավիթն է Ան, ախոյանը և պաշտպանը Հայ Եկեղեցիին և հավատքին: Մեր օրերու նոր նարեկացիին է, որուն ճենճերող հոգիին քույր-քույր բարձրացող խունկին քուրումը խաղաղութիւն և հոգեկան անդորրութիւն պիտի սփռե՛ դալկացած հոգիներուն: Եվ վերջապէս, մեր օրերու աստվածախոս երգիչ Շնորհակալին է ան, որուն խոսքին քաղցրութիւնը, սրտին բարութիւնը և նայվածքին անուշութիւնը բալասանի մը պէս պիտի ցնցուղվին, ընդարմացած հոգիներուն վրա, նման արշալույսի այն ցոլին, որ կյանք իսկ է ծարաված բուսականութիւն:

Հավատացյալ հայ ժողովուրդ ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի, այս տեսակ քահանայապետ մը պետք էր մեզի՝ սուրբ, անարատ, անմեղ, ընտրյալ և բարձրացյալ երկինքներին վեր: Այսօր, ավելի քան երբեք, կծաղկի ու կպայծառանա քու հավատքիդ կեդրոնը հանդիսացող Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Օր ավուր կշննան ու կպայծառանան Հայաստան աշխարհին մեջ սրբազան տաճարներդ, Մայր Աթոռի միաբանական կյանքը, Հոգևոր Ընթարցանք գերազանցորեն նախանձելի կղանան, Աստուծո փառքին և մեր սիրելի Հայրենիքի վերածաղկումի գաղափարին մեջ: Դարձու՛ր հայացքդ, ո՛վ հավատացյալ հայ ժողովուրդ, նայե՛ լեցուն հույսով ու հավատքով քու գերազանց սրբութիւնը հանդիսացող Ս. Էջմիածինն, ու սրտիդ խորքին աղոթե՛ Աստուծո Անոր անսասնակութիւնը և պայծառութիւնը համար: Նայե՛ քու վերածնած Հայրենիքին ու անոր շքեղագարդ վերելքին և հառաչդիմութիւնը:

Կրկնե՛ միշտ ու բարձրաձայն, առանց վարանումի, առաջալին խոսքը՝ Ջի այսպիսի իսկ վայել է մեզ Յաճաճայապետ, սուրբ, անմեղ, տեսաբան, զատեալ ի մեղատուց և րաճեցեցեալ քան զերկինս, ամեն:

Մայրագույն Արևելքի հայութեան անուանից չեմ, սրտազին խոսքերով ու բարեմաղթութիւններով Վհհափառ Հայրապետին շնորհավորեց նաև Ավստրալիայի և Մայրագույն Արևելքի Հայրապետական պատմիրակ հագեղնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Վազարյանը:

Վերջում, հանդիսավոր լուսկան մեջ շնորհակալութեան սրտառու խոսք է ասում Նորին Ս. Օծորթուն Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսը:

Ձե՛րդ Սրբութիւն, Սրբազան՝ եղբայրներ, սիրելի՛ ժողովուրդ:

Մեզ համար այս պահուս դժվար է կեդրոնանալ և պատասխան խոսք ըսել բոլոր այն խոսքերուն, այն քաղցր, հուզիչ և հոգի փո-


քուկող խոսքերուն համար, զարս լսեցինք այսօր այս պատմական Մաղկյա դանլիճին մեջ:

Նախ խոր հուզումով և երախտագիտութեամբ զգացումով կուզեի՛ք շնորհակալութեամբ հայտնել Նորին Սրբութեան Մեծիմեծի Գ. Կաթողիկոսին Համայն Վրաստանի, որ իր խոր ծերութեամբ տարիքին մեջ, արեւմտի և արեւելի, հոգնութեամբ կրեց իր Աստուծո թշնեւում և զայն միշտ Ս. Էջմիածին, իր ողջույնի խոսքը բերելու համար այս հանդիսութեամբ առթիւ: Կաթոսինքն առ Աստված, որ Տեք իր կյանքի օրերը շատօնե, տեղեցնե, երկար տարիներ ևս տալի և իր կենդանութեամբ տեսնե հառաչդիմութեամբ և ծաղկումը վրացական եղբայրական ժողովրդին և եկեղեցիին:

Շնորհակալութեամբ խոսք պետք է ուղղենք անշուշտ նաև Նորին Սրբազնութեան Սերգեյ եպիսկոպոսին Աստուրախանի և Ստալինգրադի, որ կուգա մեր մեջ՝ բերելու համար ողջույնը Մոսկովայի և Համայն Ռուսիո Ամենապատիւ Պատրիարք Ալեքսի մեծ Հայրապետին: Դուք բոլորդ Մեզ հետ միասին լսեցիք սրտաշարժ խոսքը Նորին Սրբազնութեան: Մենք քեզ ռուսերեն չենք հասկնար, բայց ավելի քան երբեք մինչև հիմա, Սերգեյ եպիսկոպոսի խոսքերը լրիւ հասկացանք և ապրեցանք մտնովանդ: Ան խոսեցավ Ամենապատիւ Ալեքսի Պատրիարքի սրտին և միաժամանակ ռուս եղբայրական ժողովրդի շերտ սրտին, և պատմական ակնարկ մը բրավ, ոգեկոչելով մեր հեռավոր և մոտավոր անցյալի անավոր դժբախտութիւնները և պահ մը մեզ տըխրեցնելով: Ակնարկեց անշուշտ մանավանդ 1915—1918-ի մեր ժողովրդի ճանապարհութեան: Իր այս ակնարկով, իր այս բնագծումով, քեզ պահ մը տխրեցուց զՄեզ, բայց Մեր տխրութիւնը վերածվեցավ միաբարութեան և եղբայրական զգացումի մը, վասնզի Մենք գիտեմք և կապրինք այս օրերուն մեր ժողովրդի վերածնունդը, հակառակորակ և վնասեցան օգնութեամբը հավիտենապէս մեզ եղբայր ռուս ժողովրդին: Եվ կհավատանք հաւ, որ հայ ժողովրդի եկտմամբ արդարութեան ծայրը անգամ մը ևս պիտի խոսի եւսյն ռուս ժողովրդի օգնութեամբ և օժանդակութեամբ: Մեր երախտագիտութեամբ կհայտնենք մեր եկեղեցւո և մեր ժողովրդի անունով՝ Ռուս Եկեղեցւոյ մեծ Հովիւապետ Ալեքսի Պատրիարքին և Նորին Սրբազնութեան կիսնդրենք, որ բարգմանը հանդիսանա իր Հովիւապետին առջև Մեր ամենաշերտ զգացումներուն և մտածումներուն զպի ռուս ժողովուրդը, զպի Ռուսական Եկեղեցին և զպի իր պատմական անձը, լավագույն մաղթանքներով, որ Ռուսաց Պատմութեան եկեղեցին անի, զօրանա և հավետ ծաղկի փառքի մեջ:

Շնորհակալության խոսք ունիմ եմ մեր Կառավարության, մեր հարազատ Հայրենիքի Կառավարության ներկայացուցիչ պ. Սարգիս Գասպարյանին, իբրև նախագահը Հայ եկեղեցվո գործերու խորհրդի, որ իր և իր գործակիցներու ներկայությամբ և իր արտասանած խոսքերով անգամ մը ևս եկավ ապացուցելու, թե Հայ պետությունը այսօր բոլոր քաղաքացիներին օրհնական և գործնական պայմանները ստեղծած է, որպեսզի հավասարապես ժողովուրդը, Հայ եկեղեցվո ծառաները՝ հոգևորականները կարենան իրենց

ռարի, շինարար և գտնականիչ օարհիները։ Ահա այս բոլորի համար Մենք, հանուն համայն հայ հավատացյալ ժողովրդի, որ կարի Հայրենիքեն ներս և ի սփյուռս աշխարհի, և հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցվո և հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և միաբանության, Մեր երախտագիտությունը կհայտնենք մեր Հայրենի կառավարության, վստահ ըլլալով, որ Պետական իշխանությունը, ինչպես մինչև այսօր, նաև այսօրհետև, պիտի մնա իսկական արդարամիտ պետություն մը, ինչ կվերաբերի եկեղեցա-



ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ԲԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՀԱՄԱՐՈՒՐՈՒՄ ՆՆ Ա ԳՐԳԻԳՈՐ
(ՈՒՍԱՎՈՐՈՋԻ ԱԶԸ)

ուժերը միատեղել և կազմակերպել իրենց հոգևոր կյանքը և հառաչողիմել այդ հոգևոր կյանքի մեջ։ Կուզեինք ավելցնել, որ ներկաները այն տպավորությունը չունենան, թե տարեգարհի աղբյուր է միայն, որ պ. Սարգիս Գասպարյանը, որպես Հայաստանի Կառավարության բարձրատիման ներկայացուցիչ, ներկա է այստեղ լավ մի քանի շնորհավորական խոսք արտասանելու համար։ Մեր ձեռքը Մեր խղճին վրա դրած, կուզանք հայտնելու, որ Հայաստանի բարեխնամ Կառավարությունը իր բարոյական աջակցությամբ և ստեղծած պայմաններով և ննարավորություններով ի նպաստ Մայր Աթոռի և Հայաստանյայց եկեղեցվո, միշտ ներկա է այստեղ և Մենք միշտ կվայելենք այդ ներկայության

կան կյանքի ազատության և անկաշկանդ հառաչողիմության։

Մենք մեր Պետությունեն ավելի չենք սպասեր և չենք ակնկալեր։ Գոյություն ունեցող բարենպաստ պայմաններու լավագույն ապացույցը այն է, ինչ որ բոլորը կտեսնենք, ինչ որ կտեսնեն բոլոր այն ճշմարիտ հայերը, ուխտավորները, որ եկան այս երկու տարիներու ընթացքին արտասանման և տեսան վերելքը և հառաչողիմությունը Մայր Աթոռեն ներս, թե՛ հոգևոր շինարարության, թե՛ նյութական շինարարության իմաստով։ Վստահ ենք, որ հայ ժողովուրդը պիտի գիտնա գահատել այս բոլորը և իր լավագույն զգացումներով ու մտածումներով իր հայացքը պիտի ուղղե դեպի Ամենայն Հայոց Մայր

Արթուր Ս. էջմիածինը և դեպի ամենայն հանոց Մայր Հայրենիք՝ Հայաստան:

Մեծ գոհունակությամբ լսեցինք հաև շատ երեմ, անկեղծ, մաքուր զգացումները և մտածումները, որոնցով ողջունեցին Մեր գահակալության տարեդարձը մեր բարձրաստիճան հոգևորականները՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հաւաքային Ամերիկայի հանոց Հայրապետական պատվիրակ, Մեզ հաւաքատ գերաշնորհ Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան, Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդ Մեր սիրելի գերաշնորհ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան, գերաշնորհ Հայկազուն եպիսկոպոս Արաճաճյան, որ այս օրերս ժամանեց Մայր Աթոռ և ստանձնեց պատասխանատու պաշտոն Մայր Աթոռին ներս՝ իրեն վերատեսուչ Հոգևոր ճեմարանի, ինչպես նաև հոգեշնորհ Աստղիկ ծայրագույն վարդապետ Ղազարյան, որ նույնպես այցելաբար կուգա, վերադառնալու ծամար իր աշխատանքի վայրը՝ դեպի Հեռավոր Արևելք, և որոնց խոսքին միացավ հաև Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվական անդամներեն պրոֆ. դոկտ. Արարատ Ղարիբյան ողջույնի խոսքով՝ հանուն Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի:

Այս բոլոր չեմ խոսքերն ու մաղբանքներն որ արտասանվեցան, Մեզ այն զգացումն կներշնչեն, որ կարծեմ այս բոլորը ուղղված չեն Մեր անձին, այլ Մեր անձն ալ այս մեծ գաղափարներու և զգացումներու ալիքին մեջ կսուզվի, կլուծվի և կանհետանա և կմնա մեկ ճշմարտապես, իրավ և ստույգ իրականություն՝ Սրբազնասուրբ էջմիածինը և Ամենայն Հայոց Մայր Աթոռ իրեն հավիտենական գոյություն և կենդանի վեմ: Այս բոլոր մաղբանքները բոլորովին տվեմ, որ Մենք նկատենք ուղղված դեպի այս սրբազան հաստատությունը, որուն ժամանակավորապես կոչված ենք ծառայելու Մեր տկար ուժերով: Եվ եթե Մեր ուժերը կշառնան հրեմման և կուժեանան, այդ կպարտինք ոչ թե Մեր անձին, այլ նույնպես այս հաստատության և Աստուծո, որ իր ձեռքով իսկ հիմնած է Մայր Աթոռ Ս. էջմիածինը և իր նույն ձեռքով կառաջնորդե զՄեզ:

Թույլ տվեմ պատկեր մը ներկայացնել Ձեզ Մեր առօրյա կյանքին: Հաճախ երեկոները, երբ գրեթե բոլոր միաբանները իրենց խոցերուն մեջ կհամգեստանան, Մենք առանձին կամ բնկերակցությամբ վարդապետի մը, կյոջինք այս Ս. Տաճարի սպիտակ վրան երբեմն կանց կառնենք՝ հեռվին դիտելու համար անոր դեմքը: Մանավանդ երբ երեկոները պայծառ են, անոր ուրվագիծը կերևա ճշտակ և ուժեղ: Եվ Մեզ այնպես կթվի, թե ամեն օր նոր բան մը կտեսնենք անոր վրա,

անոր մեջ և նոր բան մը կհասկնանք, նոր ապրում մը ծնունդ կառնեն Մեր կուրճիկն տակ: Եվ ինքը՝ Մայր Տաճարը հաճախ կմեծանա, վրիթաբի համեմատություններ կստանա, քուրս կելլի իր նյութեղեն սահմաններեն և կդառնա հսկայաժապալ, անարկու, առինքնող, խորհրդավոր և ներշնչող, կախարհորեն վեհատեսիլ և պատգամ տվող, առաջ մղող Մեր ձեռքերը, որպեսզի անոնք նվիրվին իր վերաշինության և պայծառության: Մեր հոգեկան աշխարհի մեջ էջմիածնի այս Տաճարը այնքան կմեծանա, որ կարծեմ կգերազանցե Արարատը և Մեզ այնպես կթվի, թե այստեղ առավել կհասկնանք Ս. Հովհաննես ավետարանչին խոսքը, թե չի սկզբանէ էր Քառն: Աստուծա խոսքը այս Տաճարն իսկ է և մեր ժողովուրդը, ինչ որ ունի որպես հոգեկան արժեք, ինչ որ ունի իրեն պատմությունը, ինչ որ ունի իրեն ստեղծագործությունը, ինչ որ ունի իրեն հավատք, հույս, կամք և իդեալ դեպի պայծառ ապագան՝ սկիզբ կառնեն Ս. էջմիածնեն:

Մենք վստահ ենք, չենք տարակուսիր վայրկյան միակ, թե այս բոլորը որ Մենք կապրինք, սեփականությունն է համայն հայ ժողովրդին, թե՛ Հայրենիքին ներս, թե՛ դրացի եղբայրական հանրապետություններու սահմաններուն մեջ և թե՛ ի սփյուռս աշխարհի ցրված հայության: Երբ կլսեմ տառեր լուրեր արտասահմանէ՝ մի՛ հավատաք: Հայ ժողովուրդը, ինչքան ատեն կլրեն այս պատվական և փառավոր անունը՝ հայ անունը, չի կրնար հավատարիմ չմնալ Մայր Աթոռ Ս. էջմիածնին: Մենք շուրջ երկու տարի առաջ երբ եղանք արտասահման, խոսեցանք խոր լավատեսությամբ մը: Մեր այդ լավատեսությունը ճեղգճեղտ կանի ու կխորանա: Եվ ինչո՞ւ լավատես չըլլանք, երբ Մենք Մայր Աթոռ Ս. էջմիածնի՝ աստվածակառույց կամարներուն տակ ենք և ծաղկած Մայր Հայրենիքի հույի վրա, Հայրենի կառավարության քաղաքական ուղարությունը ներքև, երբ Մենք կգործենք և կաշխատենք անկաշկանդ և ազատ, և կապրինք շինելով, վերաշինելով մեր հոգևոր կյանքը:

Ճիշտ է, կան փոքրաթիվ խմբավորումներ, որոնք տառեր ուղղությամբ կփորձեն առաջնորդել արտասահմանի մեր հայ ժողովուրդը, կան նույնիսկ հոգևորականներ, շատ փոքրաթիվ, որոնք մտազմած հայ ժողովրդի, իրենց հարազատ ժողովրդի գերագույն ջանքեր, կփորձեն ցրվել մեր հոտը: Սկսյալ, ինչպես գիտեմ, կնշանակե արդեն իսկ ցրվածություն և այդ ցրվածության մեջ զալ և առավել ցրվածություն ստեղծել, առավել ուժացնելու համար հայ հավատացյալ հոտը, նույնիսկ սպառնալով Մայր Աթոռ Ս. էջմիածնին, այդ

բոլորին Մենք դժվարությամբ կհավատանք՝
 եվ վստահ ենք, որ հայ ժողովրդի նշմարիտ
 հոգին և առողջ բնագոր, և մեր հոգևորակա-
 նության, ի մասնավորի արտասանմանի հո-
 վևորականության արի, քաջ կեցվածքը, շատ

թշուր և խաղաղությունը՝ ի փառս Աստուծո
 և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեց-
 վո: Մենք միշտ քաղաքներ, հորդորներ և
 հրավիրներ բոլոր հաշտության, խաղա-
 ղության և միության:



ՕՇԱԿԱՆՈՒՄ, Ս. ՄԵՍՐՈՒՄ ՄԱՇԳՈՑԻ ԳԵՐԵՋՄԱՆԻ ՄՈՏ

կարճ ժամանակի ընթացքին մեջ պիտի չեզո-
 ւացնե այն քանդակ ուժերը, և մենք պիտի կա-
 րողանանք պանպանել մեր Եկեղեցվո միու-

նությունը մեկ կողմ անցյալ տարվա Մեր
 փորձերը և ճիգերը, այս տարի փետրվարին
 Մեր ցանկությամբ և Մեր օրհնությամբ, Հայ-

կանխեմ Բարեգործական Ընդհանուր Միության ճարգարծան հախազանը փորձ մը կատարեց այդ ուղղությամբ և դիմեց Անթիլիաս, բայց մերժվեցավ: Այս պատահեցավ փետրվար-մարտ ամիսներու շրջանին: Մեկ ամիս հետո, Մեր բնադրանքով և օրհնությամբ, Կոստանդնուպոլսո Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս խաչատուրյան երկու անգամ դիմեց Անթիլիասին և մերժվեցավ: Մեր եղբայրական ձեռքը կմերժվի: Ավելին. Մենք, առանց հուսահատելու վրա խոսվելու, վերստին գրեցինք այս հուլիսի վերջերուն Գարեգին Պատրիարքին, որ շարունակե իր նիզեքը և հուլիսիս որոշ, հստակ առաջարկ մը ներկայացուցինք իրեն, որպեսզի իր գլխավորությամբ հաջողությամբ պսակվի Հայաստանյայց եկեղեցւո միության և սիրով աստվածամհա և ազգաշեն գործը: Կրվի, քե ձեռնադրող և հագնալիս տանջվող Մեր Պատրիարք Նղբայրը, մինչև այսօր գոհե, որևէ արգելումի չէ հասած: Իսկ փոխարեն կլսենք, քե ոմանք, հայ հոգևորականի անունը կըող, կատարաստվին երթալու դեպի Ատլանտյանի ավերք. այնտեղ ցրվելու համար մեր հոտը: Մենք կհավատանք, որ այդ ձեռնաց գործերը չեն կրնար հաջողիլ և պիտի չհաջողին: Ս. էջմիածինը վկա, այսօր այստեղ հավաքված բազմահազար հավատացյալ հայ ժողովուրդը վկա, որ այսպիսի ձեռնարկ երբեք չի կրնար հաջողիլ: Հայ ժողովուրդը կա և կմնա, և պետք է մնա մեկ, ամբողջ, անբաժանելի և անասանելի իր հավատքին մեջ դեպի իր Մայր Աթոռ Ս. էջմիածինը և դեպի իր վերածնած Մայր Հայրենիքը:

Սիրելի՛ ժողովուրդ, չկրցանք՝ ընթացք չառալ Մեր զգացումներուն այս պահուս, երբ բոլորս մեկ համախմբված կաղաթենք առ Աստված, որպեսզի Տերը անասան պահե Մայր Աթոռ Ս. էջմիածինը, հայ ժողովուրդը, և մեր կյանքի ապագան ըլլա պայծառ և լուսավոր, և ամեն մեկս իր տեղեն իր պարտքը կատարե իր խղիճ հանդեպ, Աստուծո և Ազգին առջև: Այդ պարտքը կատարելու զգացումով ապրինք, այդ պարտքը կատարած ըլլալու սուրբ զգացումով ալ օր մը հեռանաք այս անցավոր աշխարհեն, հետք մը թողով շինարար և կենարար, ի փառս հավերժական հայ ժողովուրդին:

Կեցցե՛ք Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, շե՛ն մնա, անհ, գորանա՛ և ծաղկի՛ Մայր Աթոռ Ս. էջմիածինը Ամենայն Հայոց, ապրի՛ և հառաչդիմե՛ և տարվե տարի նորանոր շինարար բարձունքներու հասնի մեր պատվական, մեր ստեղծագործ, մեր հանճարեղ հայ ժողովուրդը:

Թող Աստված պահե և պահպանե մեր Մայր Հայրենիքը այժմ, հավիտյան: Ամենա՛:

Վեհափառ Հայրապետի խոսքից հետո սկսվում է շնորհավորանքի սրտատուշ աղահամբույրը: Նախապես ողջագործվում են երկու Վեհափառ Հայրապետները, և ապա ըստ կարգին նաև բոլորն էլ մոտենում են և համբուրում Նորին Ս. Օծուխյան օծյալ Ալըր Մայր Տաճարի երգեցիկ խումբը կատարում է ժՀայրապետական մաղթերգը-ը:

Այսօրինակ հանդիսավոր և հուզմանալից իրադրության մեջ ավարտվում են Նորին Ս. Օծուխյան զահակալության երկրորդ երջանիկ տարեդարձի եկեղեցական և պաշտոնական արարողությունները:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԱՇԿԵՐՈՒՅՑ ՎԵՇԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱՆՈՒՅՑԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԳՐԱԶԻ ԱՌԹԻՎ

Երեկոյան ժամը 5-ին, Ս. էջմիածնի Հոգևոր Ժեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ:

Ճաշկերույթին ներկա են Նորին Ս. Օծուխյան Վեհափառ Հայրապետը, Համայն Կրաստանի ձերոմազարդ Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը իր շքախմբի բոլոր անդամների հետ, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ գերապատիվ Տ. Սերգեյ Եպիսկոպոսը, Հայկական ՍՍՌ Միներալներին Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Ս. Գասպարյանը, Խորհրդի անդամները, էջ-

միածնի քաղաքային Սովետի և շրջանային գործադիր կոմիտեի ներկայացուցիչները, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Հայրավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիմոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամները, Մայր Աթոռի թիարանությունը, Հոգևոր Ժեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, Հայաստանի մտավորականության ներկայացուցիչներ և այլ հյուրեր:

Սեղանը բացվեց, հոտեկայս երգված «Հայր մեր»-ով:

Առաջին բաժակը առաջարկվեց Վեհափառ Հայրապետի կողմից Համայն Վրաստանի Կաթողիկոս Նորին Սրբության Մեկիսեղեկ Գ-ի կենաց:

«Սիրելի՛ սեղանակիցներ.

Մեր գոնումակությունը կնայտենեմ Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մեկիսեղեկ Գ-ի մեր մեջ գտնվելու ուրախ առիթով: Դուք ալ Մեզ հետ քաղաքացիքե՛ք ձեր քաժակները՝ խմելու համար Անոր քանկագին կենացը՝ մաղթելով քաջառողջություն և քեզուն գործունեություն: Կեցցե՛ք Վրաց Կաթողիկոսը, կեցցե՛ք Վրաց Ուղղափառ եկեղեցին, կեցցե՛ք Վրաց ժողովուրդը:

Բոլորը ոտքի են կանգնում և խմում առաջարկված կենացը:

Նորին Սրբություն Մեկիսեղեկ Գ Կաթողիկոսը իր շնորհակալությունն է հայտնում հետևյալ խոսքերով:

«Ես երազել էի լինել Ս. էջմիածնում, համբուրել աստվածակառույց Ս. Տահարը, կատարել իմ ուխտը: Այսօրվա մեր միատեղումը խորհրդանշել է մեր երկու քախտակից ժողովուրդների միության և սիրույն, համատեղ կյանքին ու պատմության կառուցման: Հուզիչ և սրտառու է պահը և ես շնորհակալ եմ Աստուծուց և Վեհափառ Հայրապետից, որ ինձ պարգևեցին այսօրվա երջանկությունը»:

Դահլիճում թնդում է ուրախ ծափահարությունը: Սեղանների շուրջ ստեղծված է ջերմ և սրտազին մթնոլորտ:

Վեհափառ Հայրապետը երկրորդ բաժակն առաջարկում է ռուս ժողովրդի և Ռուս Ուղղափառ եկեղեցու կենացը:

«Սիրելիս պարտք է Մեզ համար սեղանին և Աստուծո առաջ հիշել ռուս ժողովուրդն ու Ռուս եկեղեցին: Մեր կապերը ռուս ժողովրդի և Ռուս եկեղեցվո հետ շատ հին են և մտերմական: Անո՛ք մեզ հետ են եղել մեր ուրախության և տխրության մեջ: Այնքան ալ հիշտ չէ այստեղ կապ բառը օգտագործել. կապը որոշ հեռավորություն և սահման կղեն: Մեր կապը նյութական չէ, այլ հոգեկան, հոգեկան կապերը ուրիշ մեծություն, տարածություն, խորություն և նշանակություն կունենան:

Մենք Ալեքսի Պատրիարքի հետ անձնական ծանոթություն ունենք: Ան իմաստությունս և մեծ հեղինակությամբ կնովվե Աստուծոմե իրեն վստահված ժողովուրդը:

Մենք ոչ միայն ուրախ ենք և մխիթարված այս բարեկամությամբ, այլ, իրեւ զավակը փոքր ժողովրդի մը, այս բարեկամությամբ Մենք Մեզ կզգանք մեծ և հզոր:

Հանգիստվոր այս պահում՝ Մենք Մեր վագույն զգացումներն ու բարեմաղթությունները կտողենք Ամենապատիվ Ալեքսի Պատրիարքին և Անոր միջոցով՝ ռուս մեծ ժողովրդին:

Իր խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը «կեցցեն» է հռչակում հանուն ռուս ժողովրդի, Ռուս եկեղեցու և նրանց պետերի ու ղեկավարների:

Մարկավագների խումբը երգում է «Միտալեք» շարականը:

Ապա գերապատիվ Սերգեյ եպիսկոպոսը շնորհակալության իր խոսքի մեջ ասում է.

«Ձերդ Սրբությո՛ւն.

Շնորհակալություն եմ հայտնում կենացի համար իմ հավատի Հոր և այն բոլորի կողմից, որոնց ներկայացուցիչն եմ ես այստեղ այս պահին: Ես հիշում եմ մի դրվագ այն օրերի մասին, երբ Գեորգ Ե Կաթողիկոսն ընդունվում էր Պետերբուրգում: Կաթողիկոսին մատուցվում է մի ծաղկեփունջ: Մատուցողը իր հառում ակնարկություն և անում եկեղեցիների միության անհրաժեշտության մասին, որին երջանկահիշատակ Հայրապետը պատասխանում է՝ ցույց տալով իր ձեռքում բռնած ծաղկեփունջը. «Այստեղ կան բազմաթիվ ծաղիկներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հարազատ գույնն ու բույրը. դրանք բոլորը միատեղ կազմում են մի շինող փունջ, մի միություն: Քրիստոսի եկեղեցին էլ մի ծաղկեփունջ է: Մենք այստեղ հավաքվել ենք աշխարհի չորս կողմերից և կազմում ենք մի միություն, պահելով հանդերձ մեր սեփական գույնն ու հոտը: Նույնը կրկնվում է և այսօր: Թո՛ղ Աստված այդ միությունը անխախտ պահի»:

Սեղանը ղեկավարում է գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալիֆյանը:

Վեհափառ Հայրապետը առաջարկում է երրորդ կենացը:

«Քաժակ կառաջարկենք Հայկական կառավարության կենացը: Մեր մեջն են հարազատ Հայրենիքի հարազատ կառավարության ներկայացուցիչները՝ պ. Գասպարյանը իր անձնակազմով և էջմիածնի ջրջանի իշխանության ներկայացուցիչները: Մենք, որպես Հովվապետ և եկեղեցվո սպասավոր, շեղմ զգացումներով և երախտագիտությամբ տոգորված, կրաճաղենք Մեր քաժակը՝ աղոթելով Սուրբտեղան պետության արևի պայծառության համար:

Պ. Գասպարյանը և իր աշխատակիցները միջոտ իրենց հայրենանվեր գործի բարձրության վրա կգտնվին: Չենք մոռենք մանրամասնության մեջ, որովհետեւ Դուք անձամբ կտեսնեք, որ այդ այդպես է: Հայրենակալ կառավարության հանդեպ երախտագիտա-

թյան Մեր զգացումներուն վրա պետք է ավելցնել նաև հայտ Մեր զգացումները: Կսիրենք մեր Կառավարությունը և հավատարիմ կմնանք անոր ոչ միայն այն քանի համար, որ կարծանալանք անոր քարի կամեցողության, այլ մանավանդ որովհետև Մենք խորապես կգիտակցինք, որ այս իշխանություններ, վերաջինեց մեր գյուղերն ու քաղաքներ, և տակավին այնքան մեծ ծաղկումներ, և անկասկածաբար կհաղթեն և ծաղկեցնելու համար մեր Մայր Հայրենիքը: Մեկ խոսքով, մեր Կառավարությունը Եվրոպայի և Կովկասի մեծ մեծ ժողովրդի երջանկության և խաղաղության համար: Երախտագրաբար ենք մեր Հայրենի կառավարության, և կմնանք միշտ ազգային վերածնունդ Հայաստանի հաստատության և մեր հաղթանակ ժողովրդի խաղաղ ու անվերջ հառաջդիմության համար:

Կեցցե՛ք Սովետական Հայաստանը, կեցցե՛ք մեր քաղաքներն ու Կառավարությունը:

Թույլ տվեք, սիրելի՛ պ. Գասպարյան, խմել Ձեր կենացը:

Բոլորը ոտքի են կանգնում: Դահլիճում թողում է նորից ցնծագին ծափը ի պատիվ Հայրենի կառավարության:

Ընթերցանի երաժշտության ուսուցիչ՝ պ. Հ. Գևորգյանը դաշնամուրի վրա կատարում է Սովետական Հայաստանի Պետական Հիմնը, իսկ նաև սարկավազը երգում է «Հայաստան, երկիր դարձա՛ստավայր»-ը:

Պ. Ս. Գասպարյանը քարձրացնում է բաժակը և շնորհակալություն հայտնում Վեհափառ Հայրապետին՝ Նրա գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ:

Գերազանց Ս. Մամբեի արժեքավոր և Գալիպոլիսի խոսքը անհեղինակ ասում է:

«Հեռավոր Ամերիկայի Միացյալ Նահանգներում Արևելյան թեմեն իբր ներկայացուցիչ Հայ Եկեղեցու և Հայ Ժողովրդի, Թույլ տվեք արտահայտել իմ խանդավառ հարգանքի և հիացմունքի հավաստիքները՝ Վեհափառ Հայրապետի և Հայրենի կառավարության հոգածու և ջերմ ունեցողության համար, որով կարժանանան Սփյուռքի բոլոր հայ բնակիչները:

Մենք թեև տարածությամբ շատ հեռու ենք, բայց սրտով ու մտքով Ձեր հետ ենք, կհետևենք Հայրենիքի վերելքին ու կհրաշքենք, որ ունենա Վեհափառի պես արժանավոր Հայրապետ մը և Լուսավորչի գահին վրա: Մեր Սրբազան Հայրապետը ի դարու մեր Ոսկերեքանն է սիրո և եղբայրության, Սփյուռքի ցրված հայության համար, Վեհափառ Հայրապետի ազգագրաբան գործունեությունը զվարճալի դարձնում է բոլոր հարգալից հայերու սիրելին, անբաժան և ամենաթանկ անձը: Ոչ մեկ ժամանակ հոտը այնքան առիթ է պատահություն չէ ունեցած լսելու իր Հովվապետը, ինչպես հիմա: Եվ քիչ անգամ այդ Հովվապետին ձայնը անդեր է աղքատ ազգու և անկեղծ, ինչպես հիմա:

Վերջին երկու տարիներու ընթացքին, Մայր Աթոռն ներս կատարված հսկա հառաջդիմություն կտեսնեմ: Մարմնով հեռու ենք, բայց սրտով Ձեզ հետ ենք, պատրաստ՝ գործակցելու և օգնելու Ձեր եկեղեցական գործը հաջողության համար:

Վեհափառ Տեր, թույլ տվեք քարձրացնել բաժակս Ձեր կենացը, ինչպես նաև Ձեր անմիջական գործակիցներու կենացը: Տերը թող գորավիճ և առաջնորդ ըլլա Ձեզ Ձեր բեղուն և ազգագրաբան գործունեության հաճապահին:

Կեցցե՛ք Վեհափառը, կեցցե՛ք Հայաստանայաց Առաքելական Ս. Եկեղեցին:

Հոգեզնոր Ս. Կոմիտաս վարդապետը երգում է «Տէր, կեցո՞ւն»:

Սարկավազները երգում են Հայրապետական մարթիրոսը՝ «Ամեն հայի սրտից բխած»:

Միաբանության անունից խոսում է հոգեզնոր Ս. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը:

«Վեհափառ տե՛ր»:

Այսօր Հայ Եկեղեցու բոլոր հարգալից որդիները ցնծում են և բերկրում՝ նշելով Ձեր Ս. Օծության գահակալության երկրորդ տարեդարձը: Մեզ համար այսօր ազգային-եկեղեցական տոն է, որովհետև էլ միաժամանակ իր ազգընտիր Գահակալով մեր առաքինությանը և ազգային միասնության խորհրդանիշն ու խոստացումն է: Ձեր Վեհափառության նվիրման և աշխատանքի շնորհիվ, մենք ապրում ենք վերադարձին:

քի մի շրջան, Դուք կաթիլ առ կաթիլ նվիրաբերում եք Ձեզ Եկեղեցուն և Հայրենիքին, Հիրավի զՆովի քաղ, որ դեռ զանձն իւր ի վերայ ոչխարացաւ Մենք ոչինչ չենք խնայի՝ արդարացնելու համար Ձեր անգնահատելի վատահոթութիւնը, որը մեր ներշնչարանն է ու գոտեպնդող ուժը:

Թո՛ղ Տերը անշարժ ու ծաղկուն պահի Ձեր Գահը:

Երկա՛ր ապրեք և ժառ ջուրս հանգստեանս սնուցանեք Ձեր քանավոր հոտը:

Հոգեւոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողութեան ու ղեկավարութեան ամսագրի անունից խոսում է Ճեմարանի դասախոս և ամսագրի խմբագիր պ. Արթուր Հատիտյանը:

«Վեհափառ Տե՛ր.

Ձեր գահակալութեան անկողնոյ տարեգար-
կի երջանիկ առիթով, ինձ վրա քաղցր պարտավորություն է դրված՝ թարգմանել հանդիսանալ Հոգեւոր Ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողութեան և ղեկավարութեան ամսագրի հազարավոր ընթերցողների որդիական ու երախտագիտական զգացմունքների և հարգանքի, և շնորհավորել Ձեր գահակալութեան երկրորդ տարեգար-
ծը:

Այսօր համազգային ուրախութեան ցըն-
ծատուն է, որովհետեւ Ամենայն Հայոց Հայրապետի գահակալութեան տարեդարձն է, ուրախութեան՝ որ դուրս է եկել մեր ազգա-
յին շրջանակներից և իր հորձանքի միջ է առել նաև մեր ժողովրդի և Եկեղեցու լավագույն բարեկամներին՝ հանձնին Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Մելքի-
սեդէկ Գ-ի և Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Ամենապատիւ Ալեքսի Պատրիարքի ներկայացուցիչ գերանշորհ Տ. Սերգեյ սրբազանի, որոնք այս պատմական թու-
պիկն մեզ հետ են՝ յաժանելով մեր ուրախութեանը: Այստեղ է նաև բովանդակ հայութեան ներկայացուցչութիւնը Հեռավոր Ամերիկաներից մինչև Մայրագույն Արևելք:

Վեհափառ Տե՛ր. Ձեր տոնը տոնն է Մայր Աթոռի, որի համար էլ այն խորապես արձա-
գանքում է հայ սրտերում և համազգային է:

Վեհափառ Տե՛ր, թույլ տվեք մեր մաղ-
թանքները միացնել հազարավորների աղոթ-
քավոր ձայնին և խնդրել Աստուծոց, որ Ձեր Գահը անսասան լինի Մասիս սարի նման, պայծառ՝ լուսավորելու կանթեղի պես:

Դուք, Վեհափառ Տե՛ր, երջանիկ Հայրապետ եք: Անցյալում մեր հայրապետները եղել են սվշտալիւ, շղթայակիր՝ հայրապետներ. Դուք պիտի ստորագրեք սվազգին Ա երջանիկ, որովհետեւ Դուք ապրում և ստեղծագործում եք մեր հայրենի ազատ պայման-

ներում, վերածնված հայ ժողովրդի ծոցում և Ձեր իսկ զեղեցիկ խոսքերով ասած՝ ուզում եք սքար մըն այլ ավելցնել Ս. Էջմիածնի հազարամյա քարերուն վրա, տող մըն ալ շարել մեր երկաթագիր մագաղաթներուն մեջ, պուտ մը լույս ավելցնել լուսավորչի անմար կանթեղին վրա:

Երջանիկ ժողովրդի, երջանիկ Հայրապետի թանկագին կենացը:

Մայր Աթոռի պաշտոնեություն անունից խոսում է Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ պ. Հմայակ Մեղզարյանը:

«Վեհափառ Տե՛ր, սրբազան հայրե՛ր, բա-
րեկամե՛հր.

Երիցս երջանկաբեր և հաճելի օր է այսօր Մայր Աթոռի աշխարհական աշխատողների կույեկտիվի համար: Մենք երջանիկ ենք, որովհետեւ այսօր տոնում ենք մեր սիրելի Հայրապետի գահակալութեան երկամյա տա-
րեդարձը:

Վեհափառ Տե՛ր. երկու տարի է, որ մենք աշխատում ենք Ձեր ղեկավարությամբ, սա-
կայն այդ կարճատև ժամանակաշրջանում մենք շատ բան սովորեցինք Ձեզանից: Դուք մեզ վարակեցիք Ձեր հորդառատ խանդավառությամբ, աշխատասիրությամբ, անձր մո-
ռանալու և ողջ էության գործին նվիրվելու հարաճուն ձգտումով: Երբ Դուք աշխատում եք, — իսկ Դուք աշխատում եք գիշերը ցերե-
կին խառնելով, — մենք զգում ենք, լսում ենք Ձեր զգայուն սրտի տրոփումը, Ձեր պայ-
ծառ մտքի զարկը եկեղեցաշեն և ժողովրդա-
նվեր աշխատանքի համար:

Մեր կույեկտիվն ինձ հանձնարարել է, Վե-
հափառ Տե՛ր, բաժակ բարձրացնել Ձեր կե-
նացը և բարեմաղթել Ձեզ երկար, շատ եր-
կար կյանք, արեւշատութիւն, բեղմնավոր գործունեություն, որի երաշխեքը մենք տես-
նում ենք Ձեր ամեն մի քայլափոխում:

Երանի՛ թի անվախճան լինե՛ր մեր սիրելի Հայրապետի կյանքը:

Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տե՛ր Հովհաննիս-
յանը խոսում է:

«Ամեն կողմից կենացներ առաջարկվեցին ամենաշերտ բարեմաղթություններով: Դրժ-
վար է գտնել նոր և սրտաբուխ խոսքեր: Ես խմում եմ Վեհափառ Հայրապետի շատ հար-
գելի մոր կենացը, որ Ազգին ու Եկեղեցուն տվեց հայրենասեր որդի:

Խորեմ սարկավաղը երգում է ժես լսեցի մի անուշ ձայն:

Մամբրե արքեպիսկոպոսն անում է իր փակման խոսքը:

«Ինքնուրույն մշակույթ, դրականություն լուծեցող Ազգը շապիրի Մենք ունինք դա-

րամոռ մշակույթ և գրականություն։ Մեր վերածնած փոքրիկ Հայրենիքը իմաստուն առաջնորդներու ղեկավարությամբ, ունա մեծ ժողովրդի բարեկամությամբ ոգեշնչված և գոտեպնդված, մեծ և աննախընթաց վերելք մը կապրի՝ կյանքի բոլոր մարզերուն մեջ։ Երբ նկատի առնենք մեր ժողովրդի թիվը և այն համեմատության դնենք իր ստեղծած արժեքներու քանակին և որակին հետ, մենք զմեզ հսկա կգտնենք, հանճարեզ, և մեր կուրծքերը կարող են լեցվիլ արդար հպարտությամբ, կարող ենք բարձրագույն մտնել համաշխարհային արժեքներու թանգարանը, որտեղ թվապես շատ ավելի մեծ ժողովուրդներ կանչքանան մեր առջև։ Այսօր Իսահակյանով կհիանա ամբողջ մարդկությունը, խմենք անոր և անոր հետ մեր մշակույթի, գիտության և արվեստի բոլոր հայտնի կամ անանուն մշակներու կենացը, որոնց գործերուն առջև կխոնարհին Պետական մատենադարանը այցելող բոլոր գյուկաները, խմենք այդ ըլորին կենացը, որոնք առանց սակարկելու կնկիրեն ամեն ինչ՝ հանուն իրենց երկրին ու ժողովրդին՝ բարօրության, հավերժական փառքին։

Վեհափառ Հայրապետը վերջին բաժակն առաջարկում է Մամբրե սրբազանի կենացը։ Որք ոչ միայն Հայ Եկեղեցու արժանավոր մեկ որդին է, այլ նաև քաջ և արթուն հովիվն է մեր ամենամեծ և կարևորագույն թեմերից մեկի, Պետք է ասել, որ նա այդ հովարին առաջնությունը տանում է պատվով, քաջությամբ և հավատարմությամբ։

Վեհափառ Հայրապետը իր փակման խոսքով շնորհակալություն հայտնեց ունա և վրաց ժողովուրդներին, ողորմելով նրանց հարգարժան ներկայացուցիչներին։ Ամբողջ Հայաստանի համար մաղթեց սեր և խաղաղություն, Աստուծո օգնությունն ու շնորհքը խնդրեց պետական ղեկավարների, բոլոր ժողովուրդների և եկեղեցիների համար։

Ճաշկերույթն ավարտվում է հոտնկայս երգված «Հայր մեր»-ով։

Պաշտոնական ճաշկերույթից հետո հյուրերը առաջնորդվեցին Վեհարան, որտեղ փոքր-ինչ հանգստացան և ապա մեկնեցին Երևան։

Երկուշաբթի, հոկտեմբերի 14-ին, Նորին Սրբություն Մեթիսեդեկ Գ-ը իր շքախմբով, գերապատիվ Տ. Սերգեյ եպիսկոպոսը, գերապատիվ Տ. Սիոն, Տ. Մամբրե և Տ. Սահակ արքեպիսկոպոսների ընկերակցությամբ այցելեցին մեր Հայրապետի տեսարժան վայրերը, եղան Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում (Ձեռագրատանը) և Պետական թանգարանում, ապա ուխտի գնացին Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրմին, Օշականում

թանկագին հյուրերը շերտորեն դիմավորվեցին, խմբովին այցելեցին Ս. Մեսրոպի շիրմի։ Վրաց Կաթողիկոս Մեթիսեդեկ Գ-ը հոգեհանգիստ կատարեց Ս. Մեսրոպի գերեզմանի վրա։

Այնուհետև հյուրերը եղան Զվարթնոցում, այցելեցին Ս. Հովսիսիմի, Ս. Գայանեի վանքերը և վերադարձան Մայր Աթոռ։

Փոքր հանգստից հետո ի պատիվ հյուրերի Վեհարանում տրվեց հրաժեշտի ճաշկերույթ, որն անցավ շերմ ու սրտագին մթնոլորտում։

Ճաշկերույթից հետո Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, Նորին Սրբություն Մեթիսեդեկ Գ կաթողիկոսը և Ռուս Պապուսավ Եկեղեցու ներկայացուցիչ Սերգեյ եպիսկոպոսը համախորհուրդ պատրաստեցին և ստորագրեցին խաղաղության կոչը։

Երեկոյան ժամը 7-ին հյուրերը մեկնեցին Երևան։

Նույն օրը, դիշերվա ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, միաբանության մի խումբ անդամների ընկերակցությամբ մեկնեց Երևան՝ ճանապարհելու համար Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մեթիսեդեկ Գ-ին, Նորին Սրբությանն ուղևորելու համար Երևանի երկաթուղային կայարանն էին եկել Հայկական ՍՍՌ Միխստների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ պ. Սարգիս Գասպարյանը, Տ. Մամբրե, Տ. Հայկազուն սրբազանները, Մայր Աթոռի աշխարհական պաշտոնեությունը, Հոգևոր Զեմարանի ռուսացական կազմը, մայրաքաղաքի ճահանայից դասը, եկեղեցական խորհուրդների անդամները, թղթակիցներ և մամուլի ներկայացուցիչներ։

Մեկնման ժամին Նորին Սրբությունը, թեանցով արած Վեհափառ Հայրապետին, ուղղվեց դեպի գնացք։ Երկու Վեհափառ Հայրապետները սրտագին ողջագուրվեցին։ Միաբանության անդամներն ու բոլոր ներկաները համբուրեցին Նորին Սրբության Աջը և բարի ճանապարհ մաղթեցին։

Վեհափառ Հայրապետը Նորին Սրբության մաղթեց երջանիկ վերադարձ Թբիլիսի, իր Աթոռանիստ վայրը։ Բուռն ծափահարությունների տարափի տակ շարժվեց գնացքը։ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Մեթիսեդեկ Գ-ը հրաժեշտ առավ լավագույն տպավորություններով և քաղցր հուշերով Վեհափառ Հայրապետից։ Մայր Աթոռից, մեր Հայրենիքից և ժողովրդից։

Բարի ճանապարհ մեր թանկագին հյուրերին։

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Արքեպիսկոպոս Ալեքսի և Ռուս Պապական ինքնիշխան Ներկայացուցիչ գերաշնորհ Տ. Սերգեյ սրբազանը Մայր Աթոռում մնաց ևս երկու օր, Այդ ժամանակի ընթացքում Նորին Արքեպիսկոպոսը քանիցս եղավ Վեհափառ Հայրապետի մոտ, այցելեց Ս. Էջմիածնի Հոգևոր Ծեմարանը:

Հոկտեմբերի 16-ին, հինգշաբթի օր, գի-

շերվա ժամը 11.40-ին գերաշնորհ Տ. Սերգեյ սրբազանը մեկնեց:

Հանուն Վեհափառ Հայրապետի, Նորին Արքեպիսկոպոսը ճանապարհեցին գերապատիվ Տ. Սահակ սրբազանը, Տ. Հայրիկ և Տ. Մուշեղ վարդապետները:

Բարի ճանապարհ մեր բարի ողու եղբորը:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԲԱՅԱՆ





ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅԴԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՐԻՐՈՐԳ. ՏԱՐԵԳԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 17-ին, հինգշաբթի օրը, ժամը 1-ին, Հոգեւոր Ճեմարանում կազմակերպվել էր հանդիսություն՝ Ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության կողմից, Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ:

Ժամը 1-ին նորին Ս. Օծուքյուն Վեհափառ Հայրապետը ժամանեց Ճեմարանի հանդիսությունը դահլիճը և դիմավորվեց ցնծագին ծափահարություններով:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Մայր Աթոռի յուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, գերաշնորհ Տ. Հայկազուն, Տ. Վարդան և Տ. Եզնիկ սըրբազանները, հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանը և Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը:

Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձին նվիրված հարգանքի հանդիսությունը բացվեց Հայկական ՍՍԻ Պետական Հիմնի նվազումով և Ճեմարանի երգչախմբի կողմից երգված «Տէր, կեցո՞ւ մաղթներդով, որոնց ունկնդրվեցին հոտնկայս»:

Վերջերս Բնյուրթից եկած Ա լսարանի ուսանող Հակոբ Բոգարայանի խորունկ հու-

յումով արտասանած Վահան Թեքեյանի «Հուսավորի կանթեղը» բանաստեղծությունից հետո, բացման խոսքով հանդես եկավ Հոգեւոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը:

Այս Բ լսարանից բարեշնորհ ետրեմ սարկավագ Պալյանը մենբրգեղ շատ հուզիլ կերպով Կոմիտաս վարդապետի «Վալերգո»-ը նույն լսարանի ուսանող շնորհունակ Հովհաննես սարկավագ Դանիելյանը խորունկ ապրումով ու ներշնչումով արտասանեց Փայլակ ծիածանի «Էջմիածին» քերթվածք:

Ա լսարանի ուսանող բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը, հանուն իր սարկավագ եղբայրների և Ճեմարանի ուսանողության, կարդաց Վեհափառ Հայրապետին ուղղված հետևյալ գեղեցիկ ուղերձը,

«Վեհափառ Հայր»:

Ս. Էջմիածնի Մայր Աթոռի վրա Ձեր գահակալության օրով, շնորհիվ Ձեր շինարար գործունեության ծավալման, հայ ժողովրդի դարձնեցին ու ծաղկմանը զուգահեռ, ծաղկում և պայծառանում է նաև մեր հավատի և հույսի վառարան, մեր Սրբություն Սրբոց Ս. Էջմիածինը: Այս օրերին բովանդակ հայության սիրտը նորից բերկրում է իր ազգընտիր Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ: Այդ ուրախությունից ան-

մասն չէ և չի կարող լինել նաև Հոգևոր Ժեմարանի ուսանողությունը, որը ամեն օր, ամեն րոպե վայելում է Ձերդ Ս. Օծովյան հոգատարության բազմաթիվ ու բազմապիսի բարիքները:

Այս երջանիկ տարեդարձի առթիվ թույլ տվե՛ք, Վեհափառ Հայր, թարգմանը հանդիսանալ Հոգևոր Ժեմարանի ողջ տաա՛նողության երախտագիտական և որդիական անկեղծ սիրո ջերմ զգացմունքների, որոնք առավել ուժգնությամբ այսօր հնչում են մեր կրօնքերի տակ, մեր սիրելի Հոր և Հայրապետի գահակալության կապակցությամբ:

Ձեր գահակալության երկրորդ տարեդարձի յայտոնախմբությունը մեզ մի անգամ ևս գիտակցել է տալիս այն դերն ու նշանակությունը, որ ունեցել է Ս. էջմիածինը հայ ժողովրդի կյանքում: Եթե մեր վերածնված պետականության ուղեղը արեւափառ նրանքն է, ապա Ս. էջմիածինը հանդիսանում է մեր հավատացյալ ժողովրդի սիրտը, որի մեջ միաձուլվում է հայ ժողովուրդը, որի մեջ շնչում է քրիստոնյա հայության երկաթադիր պատմությունը այն օրվանից, երբ Ս. Լուսավորչի տեսիլքով, այգտեղ իջավ Միածինը, այգտեղ կանգնեցվեց առաջին խորանը: Դարեր շարունակ Ս. էջմիածինը հանդիսացել է հայ ժողովրդի հավատի սկզբ, հայ մտքի և մշակութային գլխավոր օրրանը: Այստեղ է, որ Եղբորից սկսած մեր բարձրահանձար ու երանաշնորհ հայրապետներն ու գիտնական վարդապետները, քրիստոնեական սուրբ հավատով ու հայրենասիրական բարձր զգացմունքներով տոգորված, թշնամու սրի հարվածների ահավոր սարսափին մատնված, բայց համառ, անկուն և հուսավառ՝ արյունաներկ մագաղաթին են հանձնել իրենց իմացական կարողությունների արգասիքը՝ հանդիսացող մեր գրական, պատմական և փիլիսոփայական նվաճումները: Նրանց հիշատակը անշեշ և անմահ է մնացել հայ ժողովրդի բոլոր զավակների երախտագետ սրտերում: Հայ միտքն ու հանձարը նրանց հայրենասիրական ոգով ու քրիստոնեական հավատի լույսով սնած ու ներշնչված՝ ստեղծագործել է և ստեղծագործում է մինչև այսօր:

Ձերդ Վեհափառության գահակալության օրով նույնպես, ամենակարող Աստուծո օգնությամբ և Ձերդ Ս. Օծովյան շինարար գործունեության շնորհիվ, մեծ նվաճումներ են տեղի ունեցել շինարարական, մշակութային և ուսումնական քաղաքացիականության:

Ձերդ Ս. Օծովյան կրթասեր ոգին ու հայրական անմիջական հսկողությունը Հոգևոր Ժեմարանին նոր կյանք են հաղորդել, որով

որոշման բարգավաճում և ծաղկում է նա և հասնում նորանոր հաջողությունների:

Այս առթիվ Հոգևոր Ժեմարանի ուսանողները իրենց որդիական երախտագիտական զգացմունքներն են արտահայտում Ձերդ Վեհափառության ուսանողության հանդեպ ունեցած հայրական սիրո, հոգատար վերաբերմունքի ու խնամքի համար:

Վեհափառ Հայր, Ձեր գահակալության երկրորդ տարեդարձի այս ուրախ առիթով, Հոգևոր Ժեմարանի ողջ ուսանողությունը խոստանում է Ձեզ իր ամբողջ ուժն ու եռանդը ի սպաս դնել՝ գերազանց սովորելու և դառնալու համար իրենց կոշման գիտակից, խոստումնապահ և անձնուրաց հոգևորականներ, մեր Ազգին, Հայրենիքին ու Նկեղեցուն հավատարմորեն ծառայողներ և մեր բազմաթիվ ու հանձարեղ հոգևորականների արժանավոր հաջորդներ:

Մաղթում ենք Ձեզ, Վեհափառ Հայր, երկար կյանք, քաջառողջություն և բեղմնավոր գործունեություն, որպեսզի Ձերդ Ս. Օծովյան հովանու տակ աճեն և բարգավաճեն հայ ժողովուրդը, Հայրենիքն ու Նկեղեցին, և հասնեն է՛լ ավելի երջանիկ ու բախտավոր օրերին:

Հոգևոր Ժեմարանի երգչախմբի կողմից երգված «էջ Միածինն ի Հօրէ՛» շարականի հաջող կատարումից հետո խոսք առավ օրվա պիտավոր քանախոս պ. Արթուր Հատիտյանը:

«Հոգևորների 13-ին, կիրակի օր, Մայր Աթոռում և մեր բոլոր եկեղեցիներում արժանավայել հանդիսությամբ և խանդավառ մթնոլորտում տոնվեց նորին Ս. Օծովյան Ս. Ս. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության երկրորդ տարեդարձը:

Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձը վերածվեց Ս. էջմիածնի և նրա արժանավոր Գահակալի հանդեպ հայ հավատացյալ ժողովրդի համախմբվածության, երախտագիտության, սիրո և հարգանքի սրտահույզ ցույցի և համազգային ցնծատոնի:

Եվ դա պատահականություն չէր, որովհետև Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության տոնը՝ ըստ էության Ս. էջմիածնի տոնն է գերազանցապես Հայ ժողովրդի ազգային-կրոնական զգացմունքների առաջ և գիտակցության մեջ՝ Գահն ու Գահակալը, Աթոռն ու Աթոռակալը միահյուսվել են և կազմել մի սրտառուլ ամբողջություն, հանդիսանալով միաժամանակ մի անսպառ աղբյուր ներշնչման, ազգային հպարտության:

Այդ է պատճառը, որ Ս. էջմիածնի անվան և նրա Գահակալի կյանքի և գործունեության

հետ կապված ամեն մի դեպք՝ իրադարձություն է հանձնարացել հայ կյանքում, որովհետև Ս. Էջմիածինը աստվածային պարգև է մեզ համար, գարեբի պատմությունը նվիրաբերված է խոր արմատներ ձգած հայ ժողովրդի կյանքում, որովհետև Ամենայն Հայոց Հայրապետությունը եղել է ճայ ժողովրդի խիղճը, պատիվը, ճայու զգայուն սիրտն է եղել, որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն ցավերով և սակավ ուրախություններով: Ամենայն Հայոց Հայրապետությունը եղել է ճայու ստեղծագործ միտքը, որը, լուսավորված քրիստոնեական շնչով, ստեղծել է մեր գիրն ու դպրությունը, մեր պատմությունն ու արվեստը: Ամենայն Հայոց Հայրապետությունը եղել է հայու ավելի և տոկուն կամփի արտահայտիչը, որ հրաշքներ է գործել հերոսության՝ մեր պատմության բոլոր շրջաններում:

Եվ այս բոլորը նաև այսօր, մեր օրերին, որովհետև Ս. Էջմիածնի դերն ու նշանակությունը այժմ էլ ոչնչով չի նվազած՝ անցյալից, այլ ընդհանրապես՝ աճել է, բազմապատկվել է, բարձրացել է մեր ազատ Հայրենիքի ազատ պայմաններում, շնորհիվ մեր երիտասարդ և շատ սիրելի Հայրապետի իմաստուն, շրջահայաց գործունեության և մեր Հայրենի իշխանության բարյացակամություն:

Վեհափառ Հայրապետի գահակալությունը լուսավորչի պատմական Աթոռի վրա մեր օրերում, բարձրացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հեղինակությունը, իր բարձր անձնավորության բարոյական ու հոգեկան հազվագյուտ բարեմասնություններով, անկաշառ հայրենասիրությամբ, ժողովրդական գործունեությամբ, և նվաճեց Իրեն և իր Աթոռի համար ոչ միայն ողջ հայության սերն ու խորունկ երախտագիտությունը, այլ նաև քրիստոնեական քույր եկեղեցիների, այդ թվում Ռուսական ուղղափառ Եկեղեցու և ուսս հոգևորականների, Վրացական Եկեղեցու և հոգևորականության բարեկամությունն ու ջերմ համակրանքը: Այս բոլորից հետո, միանգամայն հասկանալի է դառնում այն բարձր ու անկաշառ սերն ու հարգանքը, որ վայելում է Վեհափառ Հայրապետին:

Այսօր, Վեհափառ Հայրապետի ղեկավարության տակ, մեր Եկեղեցին գտնվում է ոչ միայն իր հոգևոր կոշման և ծառայության բարձրության վրա, այլ նաև արժանի տեղն է գրավում ընդհանուր քրիստոնեական եկեղեցիների շարքում, որպես Արևելքի ամենահին և ամենաուղղափառ քրիստոնեական եկեղեցին:

Այսօր Միյուրում, հատկապես Անթի-լիասում, մեր Եկեղեցու երկնակամարի վրա թուփալ ամպեր են կուտակվել և մեր Եկեղեցին անցկացնում է ահավոր փորձության և տագնապի օրեր:

Ապրում ենք ազգովին բարդ ու դժվարին կացության մեջ, ռաշխարհն ամենայն իշարի կայա (Ա. Հովհ. Ե 19): Բայց հակառակ այդ տխուր ազդանշանների, քուվանդակ հայությունը հռապից և ակնդետ՝ իր նայվածքը սենեկ է դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր Ամենայն Հայոց Հայրապետը այս օրերին, խորվիրապի մեծ ճգնադի հավատով, Մեսրոպի ու Նարեկացու տեսիլքով ու շնչով նոր կյանք է տալիս Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Եկեղեցին քար մըն ալ Մենք ավելցնել Ս. Էջմիածնի հազարամյա քարերուն վրա, տող մըն ալ շարել մեր երկաթագիր մազադաթներուն մեջ, պուտ մը լույս ևս ավելցնել լուսավորչի կանթեղին մեջ, Ահա նպատակը, որի համար ապրում է և շնչում Ամենայն Հայոց Հայրապետը:

Բարեբախտություն է այսօր, որ մեր Եկեղեցու ղեկը գտնվում է վստահելի և սուրբ ձեռքերի մեջ, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ձեռքում:

Նա՝ Վեհափառ՝ մեր ազնվական և զուհարբերվող հայրապետներից է, որ շունի անձնական կյանք և փառասիրություն, որ իր կյանքի և գործունեության նպատակը տեսնում է Մայր Աթոռին նոր շունչ տալու մեջ, որ շնչում է և ապրում հայ ժողովրդի նվաճումներով, ուրախանում է մեր ժողովրդի հաջողություններով և որպես հարազատ ու գորովագութ Հայր, տարորեն տըրտմում՝ հայ կյանքում պատահած ոչ ազնիվ և տխուր փառասիրություններից առաջ եկած խորթ երեւյթների վրա:

Միևնի ռասնողներ, ահա այսպիսի մտածմունքներ կզարթնեն մեր մտքում, Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ:

Այսօր մեր Հոր և Հովվապետի տունն է: Այսօր մենք էլ մեր սրտի ձայնը միացնում ենք հանուր հայության բարեմաղթություններին: Մոկկի և արծաթ ոչ ունիմք Վեհափառին տալու որպես նվեր, մեր սրտերը նվեր նրան:

ծրանի հազար կյանք ունենալինք ու հազարն էլ մատաղ անեինք Ձեզ՝ Վեհափառ Հայրապետիդ և Մայր Աթոռիդ:

Ձերդ Վեհափառության գահակալության երկրորդ տարեդարձի երջանիկ առիթով, Ձեր որդիների սրտից բխած միակ մաղթանքն այն է, որ երկա՛ր, երկա՛ր ապրե՞ք՝ մարմին տալու համար այն ծրագրերին, այն տեսիլքներին, որ ունեք Ձեր սրտում և՛ Մայր Աթոռի համար, և՛ հայ ժողովրդի համար, և՛ մեր պաշտելի Հայրենիքի համար:

Թո՛ղ միշտ ծաղկի աղաաղան իշխանութեան մերոյ Հայրապետին՝ Ի փառս Ս. Էջմիածնի և ի պալծառութիւն Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցու և ի մխիթարութիւն հայ ժողովրդին:

Բ լսարանի ուսանող շնորհալի Ժիրալ սարկավազ Ճեռեմյանը չուզումով երգեց «Աստուծո» (խոսք՝ Վ. Քեցեյանի), իսկ Բ դասարանի ուսանող Արամայիս Մահակյանը գեղեցիկ կերպով արտասանեց «Սալվու չինար էջմիածին» միջնադարյան տաղը, որից հետո դահլիճում վեհ ու հանդիսավոր հնչեց «Ուրախ լեր, Ս. Եկեղեցի» շարականը:

Ապա ծափահարությունների տակ խոսք առավ Հյուսիսային Ամերիկայի հայոց Արեւելյան թեմի բարեջան առաջնորդ և ամենքից սիրված գերադնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը:

«Սիրելի՛ ուսանողներ, — ասաց սրբազանը, — ձեզի կրեքեմ ամերիկահայ երիտասարդության եղբայրական ողջույններն ու խընդակցությունը:

Դուք կոչված եք բարձր և պատմավոր պաշտոնի մը, այն է՝ օր մը ծառայելու մեր Եկեղեցիին և մեր ժողովրդին, քարոզելու և կազմակերպելու ձեր խնամքին հանձնված Աստուծո հոտը:

Գիտեք, որ մենք Ամերիկայի մեջ ալ ունինք նոր սերունդ մը, միջնակարգ և համալսարանական կրթութենն անցած, որ կսիրե իր Մայրենի Եկեղեցին, կապված է մեր ավանդություններուն և եկեղեցի կհաճախե՛ լսելու համար Աստուծո խոսքը իր հոգևոր հովիի րեքանեն: Վաղը դուք պիտի ըլլաք այդ հովիվները, որ այս Ս. Աթոռն պիտի տանիք Աստուծո խոսքը մեր ժողովրդին:

Սիրելի՛ դավաններս, գիտե՛ք, որ մեր Եկեղեցին այսօր ամեն տեղ, ինչպես այստեղ, նույնպես նաև Ամերիկայի մեջ կարիքը ունի հավատավոր, ազնիվ և պատրաստված հոգեվորականներու, եկեղեցավոր պաշտոնյաներու: Դուք պիտի ծառայեք ամեն բանն առաջ մեր

Եկեղեցիին և Եկեղեցվո ժիշոցով՝ մեր ժողովրդին և Մայր Հայրենիքին: Մեր պատմութիւնը, մեր մշակութիւնը, մեր ավանդութիւնները, մեր եկեղեցիները պահեք և պահպանեք է՛ Ս. Էջմիածինը և այսօր դուք, սիրելի՛ դավաններս, ահա կսորվիք այս սուրբ հաստատութեան կամարներուն տակ, մեր շատ սիրելի և աստվածարայ Հայրապետի շունչին և առաջնորդութեան տակ, ձեր կարող և արժանավոր ուսուցիչներու ղեկավարութեան տակ արժանի մշակներ ըլլալու համար մեր Եկեղեցվուն:

Մնացե՛ք հավատարիմ ձեր կոչման և հաստատուն՝ ձեր ուխտին մէջ: Ձեր ընտրած ասպարեզը գեղեցիկ ասպարեզ է: Կան ուրիշ ասպարեզներ ալ Ազգին ծառայելու, բայց ամենագեղեցիկ ճանապարհը՝ որպես հոգևորական ծառայելն է: Թող Տերը օրհնե քյոյրդ և երկար կյանք տա մեր սիրելի Հայրապետին, որուն սրտին մօտ հաստատութիւն մըն է Հոգևոր Ընթարանը:

Բ դասարանի ուսանող Նուպար Պալլանը կարդաց Վեհափառ Հայրապետին ուղղված իր ինքնագիր գոգարիկ բանաստեղծութիւնը, որից հետո ծափահարությունների տակ խոսք տրվեց Հոգևոր Ընթարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանին:

«Հայ դպրոցի մեծագույն մշակներին մեկը՝ Թեթեոս Պերպերյան, սա իմաստալից բառերով քնննադրած է դպրոցի գերը:

«Ուր կապարն՝ ոսկի,

Նիւթն՝ յոգի դառնան»:

Այս սուրբ հաստատութեան՝ Հոգևոր Ընթարանին մեջ ալ միշտ հայ ուսանողության կապարը ոսկի դարձած է, իսկ Նիւթը՝ ոգի, հոգի, շնորհիվ այստեղ ջամբված աղգաշունչ և հոգելից դաստիարակություն:

Վեհափառ Տեր, ես, Հոգևոր Ընթարանի դասախոսական կազմը, ամբողջ ուսանողութիւնը, հավատարիմ պիտի մնանք Հոգևոր Ընթարանի ավանդութիւններուն և նպատակներուն, և պիտի աշխատինք մեր կարելիութեան սահմանն ալ վեր, կատարելու Աստուծո ողորմութեամբ և Ձերդ Վեհափառութեան օրհնութեամբ, մեր վրա դրված ծանր բայց քաղցր պարտականութիւնը:

Մենք, Հոգևոր Ընթարանի ամբողջ կազմովը, դասախոսներովը, ուսանողությամբը, կուգանք շնորհավորելու Ձեր գահակալութեան երկրորդ տարին, Ձեզ ընծա բերելով մեր օրյունը, մեր կյանքը:

Աստվածաբայալ և Ս. Հայրապետ, ընդունե՛ցե՛ք Ձեր որդիներու այս ինքնամատույց

նվիրումը և օրհնեցն՝ մեզ բոլորս Ձեր օրհնրված Ս. Աղոյքով:

Հոգևոր ձեմարանի եկեղեցական երաժշտության դասատու Գրիգորյանի խորապես հուզիչ Վոկալիզացիայի կանթեղը երգից հետո (խոսք՝ Հովհ. Թումանյանի, երաժշտություն՝ Եահան Պերպերյանի) ցնծագին ծափերի տակ խոսք առավ Վեհափառ Հայրապետը:

«Մեր ուրախությունն ու հայրապետական գոհունակությունը կհայտնենք Մեր գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ այս սուրբ հարկի կամարներում տակ կազմակերպված այս հանդիսության համար: Կրեւենք նաև Մեր սիրտ ողջունեն ու հայրական օրհնությունը մեր Հոգևոր ձեմարանի դասախոսական կազմին ու ամբողջ ուսանողության:

Մենք Հոգևոր ձեմարանը շրջապատեց ենք և պիտի շարունակենք շրջապատել գուրգուրանով և հոգատարությամբ և միշտ պիտի բերենք Մեր օրհնությունը այստեղ կատարված աշխատանքներում, որոնց անձամբ Մենք ալ կմասնակցինք իրև ուսուցիչ: Ահա քե ինչու Մեր մտածումներու և գագցումներու ամբողջ քափով կուզենք, որ Աստուծո օրհնությունը միշտ անպակաս ըլլա այս սուրբ հաստատության վրային, որպեսզի ա՛յ ավելի արդյունավետ և պտղաբեր ըլլան այստեղ կատարված աշխատանքները:

Մեր այս օրհնության հետ կքերենք նաև Մեր գոհունակությունը այստեղ արտասանված իմաստայից, ունկեղծ և սրտաբույս խոսքերուն համար, սկսած Մեսրոպ վարդապետեն, որ քաջովը ըրավ, Արթուր Հատիսյանեն, որ, ինչպես միշտ, այս անգամ ալ իր քեակոր խոսքերով հուզեց Մեզ, մանավանդ Մեր սիրեցյալ եղբոր՝ Սամբե սրբազանին. որ խոսք առնելով այստեղ, սիրելի՛ ուսանողներ, տվավ ձեզ իր հայրական հորդորները: Մենք կուզենք, որ մեր ուսանողները շատ լավ ըմբռնեն և իրենց սրտերուն մեջ պահեն Մամբե սրբազանի գեղեցիկ խոսքերը: Անկա ծանոթ է մեր ժողովրդի հոգիին և զգացումներուն, հետևաբար անոր խոսքերը պիտի ըմբռնեն ամենայն նշտությամբ:

Գոհունակության խոսք ունիք նաև ձեմարանի նորնոր վերատեսուչ գերաշնորհ Տ. Հակոբյան սրբազանի խոսքերուն համար, որոնց մեջ կա հավատքի կրակ և մեր եկեղեցիին անսակարկելի կերպով ծառայելու և նվիրվելու պատրաստակամություն: Մոտ տասր օր է, որ անկա մեր մեջ է, քայց Թոգին իր ազնիվ օնավորությամբ գրավեր է մեր ժողովրդ սրտերը և ձեռքերը է՛ք մեր մեջ, ինչպես կըսենք այստեղ:

Այստեղ ակնարկություն եղավ Մեր քաղմապիսի աշխատանքներով զբաղված ըլլալու մասին: Մենք դժգոհ չենք Մեր այդ ծանրաբեռնվածությունեն: Մեզ ոչինչ կհոգեհեցնէ: Թումանյան Մեր առաջնորդ եղած ժամանակ, Մենք էիք աշխատանք ունեինք, օրական հագել 2—3 ժամ, և զոն չէինք Մենք այդ կազուրկենք: Իրոք, դժբախտ է այն մարդը, որ չի գիտեր, քե առտուն կանուխ արթննալով ինչ պիտի ընեն, այդ օրվան ընթացքին, և երջանիկ է այն մարդը, որ առավոտուն աչքերը քանալով, անապարհաբեռ զուրս կցատկեն անկողնեն՝ չուշանալու համար իր աշխատանքին: Ահա քե ինչու Մենք չենք գանգատի, և եույնիսկ օւրախ ենք, որ ծանրաբեռնված ենք և աշխատանքի մեջ գերազույն հանույր կգտնենք:

Ինչպես գիտեք, Մեր գործելու կարևոր մեկ մասը նվիրված է արտասահմանի մեր ազգային-եկեղեցական կյանքին, ուր կապի ավելի քան մեկ միլիոն հայություն, և որ սերտորեն կապված է Ամենայն Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Սակայն Մեր կամքն, մեր ժողովրդի և եկեղեցիի կամքն անկախ պատճառներով և ի վնաս մեր ժողովրդին և մեր եկեղեցիին, արտասահմանի որոշ մարդոց մոտ կան սխալ և քյուր մտածումներ, սխալ գործելակերպ և մտայնություն, որոնց շարքին եույնիսկ հայ հոգևորականներ:

Այդ պայմաններու ծավալման ընթացքին մեջ, արտառոց վերագրումներ, անխիղճ արատաճություններ կըլլան Մեր հասցեին, Ս. Էջմիածնի հասցեին, այստեղ աշխատողներու հասցեին: Կցավինք անշուշտ այդ բոլորի համար: Սակայն առավել վիշտ կպատճառեն Մեզ, երբ նույն այդ բերանները անխղճությունը կունենան ցելս նետելու մեր երիտասարդ միաբաններու և Հոգևոր ձեմարանի ուսանողության վրա, որ իբր քե այստեղ, այս սուրբ հարկի կամարներուն տակ, մեր ուսանողները չենք զատիարակել մաքուր կրօնական շունչով, չենք ներշնչել անոնց հայոց պատմության հարազատ ոգին, չենք կերտեր ուղղամիտ, ազնիվ նկարագիրներ, այլ իբր քե մենք ձեզ կպատրաստենք տարբեր ոգիով և տարբեր նպատակներու համար:

Սիրելի՛ զավակներ Մեր, այս բոլորը ձեզ հայտնեցինք ոչ ձեզ տխրեցնելու, վշտացնելու համար, ոչ ալ ձեռ մատաղ հոգիները խռովելու համար: Երբեք, այլ որպեսզի դուք այս բոլորը գիտնալով, ներքին պայծառությամբ և հպարտությամբ, առավել վճռակա-

և ուրիշներ ձեր հոգիները շինեմ, ձեր կամքը դարբենեմ իբրև ապագա նշմարիա և հավատավոր հայ հոգևորականներ և հայրենասերներ: Եվ երբ օր մը Աստուծո կամքով կոչվիմ մեր ժողովրդի և եկեղեցիի ծառայության սուրբ գործին, այստեղ կամ Սփյուռքի մեջ, տեսնելով ձեր վարքն ու բարքը, ձեր հավատքն ու նվիրվածությունը, պիտի գոջան աճեմ իրենց քսածներուն և գրածներուն համար: Մենք վստահ ենք, որ այդպես պիտի ըլլա:

Քո՞ղ Տեր օրհնէ ձեզ քոյուղ, առատօրէն Լի շնորհներ տարածելով ձեր վրա: Մենք

կհավատանք այդ շնորհներու զորութեան, Մենք կհավատանք Մեր կատարած աշխատանքին: Մենք կհավատանք ձեր հոգիներուն ծաղկումին:

«Ողջ լերուք և յաւէտ օրհնեալ»:

Վեհափառ Հայրապետի խոսքերն ու հայրապետական պատգամը խորապես տպավորեցին բոլոր ներկաներին և մանաւանդ Հոգևոր Զեմարանի ուսանողներին:

Այս հուշ զեղեցիկ հանդիսը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:





ԱՎԵՏԻՔ ՍԱՀԱԿԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ

(1875—1957)

1957 թվականի հոկտեմբերի 17-ին, Երևանի իր քնակարանում, խոր ծերության մեջ, 82 տարեկան հասակում, վախճանվեց մեծատաղանդ բանաստեղծ, հայ գրականության կուսիկ, Հայկական ՍՍՏ Գերագույն Սովետի քննադատ, Հայաստանի սովետական գրողների միության վարչության նախագահ, Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Ս. էջմիածնի Գերագույն Հոգևոր հորհրդի պատվո անդամ Ավետիք Իսահակյանը։

Հայ գրականության մեծանուն վարպետի՝ Ավետիք Իսահակյանի մահը ամենադառն կորուստն էր բովանդակ հայության համար։ Նա իրավամբ ճանաչվել է մեծարվել էր որպես հայ բանաստեղծության և գեղարվեստական արձակի մեծատաղանդ վարպետ, ավելի քան իր վաթսույն տարվա գրական վաստակով։

Ոչ ես է հայ գրականության նահապետը՝ լռեց մեծ քնարերգակ բանաստեղծի քնարը, դադարեց յարախերուց մոտի լայն գիսպալոն ունեցող հումանիտի բոցավառ սիրտը, շիջավ ժողովուրդների ազատության և հղթարության ջատագովի, խաղաղության անկուն պաշտպանի մարգարեական ձայնը։

Հայրենիքը արժանափորապես ողբաց իր մեծ ու հավատարիմ քաղաքացու մահը, հայ ժողովուրդը՝ իր մեծատաղանդ բանաստեղծ գրող և անկաշառ հայրենասերի մահը, Մայր Աթոռ Ս. էջմիածինը ողբաց իր հարազատ ու հավատալիք զավկի կորուստը, իսկ Ամենայն Հայոց Հայրապետը սգաց իր մեծ յարեկամի անդամանեյի կորուստը։

Ավելի քան վաթսույն տարիներ հնչել է Իսահակյանի քնարը, հարազատ ժողովրդի վշտերով և տրախտություններով, նրա քնարի յարերն էին սերը, հումանիզմն ու հայրենասիրությունը, նա սիրում էր և պաշտում Հայրենի հողն ու ջուրը, հավքերն ու ծաղիկները, հայոց լեզուն ու մշակույթը, Ս. էջմիածինն ու մեր ավանդությունները, նա Հայրենիքի

հայությունն ու Սփյուռքի հայրենակարոս ժողովուրդը միմյանց շաղկապող ոսկե կամուրջն էր, հայ ժողովրդի կենտունակության, իմաստության խորհրդանշանը։

Մեծ և անփոխարինելի է հայ գրականության կորուստը և խոր՝ հայ ժողովրդի վիշտը։

Ավետիք Իսահակյանը նույնքան թանկ և սիրելի էր Ս. էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետի համար, նա բանաստեղծի ջերմությամբ, Իսահակյանական շնչով սիրում էր և պաշտում Ս. էջմիածինը, Ահա թե ինչու Մայր Աթոռը, Ամենայն Հայոց Հայրապետը խորունկ վշտով և սրտի մորմոքով ողբում է մեծ բանաստեղծի և հայրենասերի մահը։


Ավետիք Իսահակյանը ծնվել է 1875 թվականի հոկտեմբերի 30-ին Ալեքսանդրոպոլում (կենիսական), նրա մանկությունն ու պատանեկությունը անցել է հարազատ ժողովրդի գրկում, Շիրակի դաշտում, հայրենի քնաշխարհում, նա իր նախնական կրթությունը ստացել է Ալեքսանդրոպոլի ժխական դպրոցում, իսկ միջնակարգ կրթությունը՝ 1889—1891 թվականներին էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Հայկական ավանդություններով հարուստ և հայ ժողովրդի կյանքի և պատմության հետ սերտորեն կապված հարազատ միջավայրում կոփվում է ապագա մեծ բանաստեղծն ու հայրենասերը։

Ուսման րոտն ծարավը ուսումնաստենել երկրասարդին տանում է Եվրոպա, 1893 թվականին նա թողնում է հայրենի տունն ու օջախը և մեկնում է արտասահման՝ սովորելու լայպցիգի և Յյուրիխի Համալսարաններում, հետևելով գրականության և փիլիսոփայության։

Իսահակյանը սկսել է գրել 11—12 տարեկան հասակից, ճեմարանում սկսում է նրա ստեղծագործական խոստումնալից կյանքը, ճեմարանի ուսաց ընդլի և գրականության դասախոս Հովհաննես Հովհաննիսյանի բարերար ազդեցությամբ և առաջնորդությամբ։

1897 թվականի վերջերին լույս է տեսնում Իսահակյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Երգեր և վերքեր» հատկանշական խորագրով, որը ընդ ընդունելության է արժանանում գրասեր հասարակության կողմից, Հայ րեթերցող հասարակու-

ղովածուն, ուր արտացոլվում են ժողովրդի նվիրական խոհերն ու զգացմունքները, վիշտն ու ուրախությունը, Մեծ բանաստեղծը իր ճշգրտամտ խանդավառանքով է փայփայել միշտ աղառ Հայրենիքի զաղափարը, նա իր գեղեցկահյուս երգերը նվիրել է Հայրենիքին:



թյունը այդ օրվանից գուրգուրանքով է շրջապատում իր ապագա վարպետին, որը հաստատուն չափերով մտնում է հայ գրականության անդամատանից ներս, որպես ինքնատիպ և իրավ բանաստեղծ:

1903 թվականին հրատարակվում է Իսահակյանի բանաստեղծությունների նոր ժո-

ղովածուն՝ 1908 թվականին թիֆլիսում հրատարակվում է Իսահակյանի «Երգեր ու վերքեր»-ի նոր ժողովածուն, հարստացած նոր երգերով ու մոտիվներով:

1911 թվականին նա նորից արտասահմանում է, օտարություն անհյուրընկալ ու մոլոր ճամբաներում մոլորված:

1914—1918 թվականներին համաշխարհային առաջին պատերազմի սև օրերին նա խորապես ապրում է իր ժողովրդի անլուր օղբերգությունը։ Նրա քնարի լարերը ավելի թախծոտ ու վշտագին են հեծեծում։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո նա ընդմիջում թողնում է իր ոտքերից պանդխտության փողին, 1936 թվականին վերադառնում է Հայրենիք՝ իր ազատ ու ստեղծագործ ժողովրդի գիրկը, երիտասարդական եռանդով և ոգևորությամբ մասնակցելու համար Հայրենիքի վերելքին։ Նա եռանդով և երիտասարդի ոգևորությամբ նվիրվում է վերածնված հայ ժողովրդի նոր կյանքի կառուցման սուրբ գործին։ Նա առանձին լեզուներով համար է թափում երգում է Սովետական Հայաստանի ուժի, ջահելության և պայծառ ապագայի երգը։

Հայ գրականության այնպիսի նահապետը միշտ շրջապատված է եղել հայ ժողովրդի և Հայրենի կառավարության շքեղ հոգատարությամբ։

Վարպետը, հայրենի գրականության մասուցած իր ծառայությունների համար, պարգևատրվել է պետական շքանշաններով։ Նրան անգամ պարգևատրվել է Լենինի շքանշանով, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դպրուստ էր և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։ Նա Հայաստանի սովետական դրոշմների միության մշտական նախագահն էր։



Հոկտեմբերի 21-ին, երկուշաբթի օր, Վեհափառ Հայրապետը, երեկոյան ժամը 6-ին, գերաշնորհ Տ. Մամբրե, Տ. Սիոն, Տ. Սահակ, Տ. Հայկազուն սրբազանների և հոգեշնորհ Տ. Մեսրոպ և Տ. Նղիշ վարդապետների ընկերակցությամբ մեկնեց Նրեան՝ Հայֆիլհարմոնիայի համեմատյալ փոքր դահլիճ, ուր գրված էր Վարպետի թավջապատ դադադր՝ վերջին հրաժեշտ տալու իր մեծ բարեկամին։ Իսահակյանի դադադրի վերև, խոր կսկիծը սեղմած կրծքին՝ Վեհափառ Հայրապետը կանգնեց լուռ ու աղոթեց... Վեհափառ Հայրապետի, Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության անունից դրվեց ծաղկեպսակ մեծանուն բանաստեղծի դադադրի վրա։ Վերջում Վեհափառ Հայրապետը իր վշտակցությունը հայտնեցով Իսահակյան ընտանիքին և թաղման հանձնաժողովի կառավարական անդամներին՝ հայ ժողովրդի կրած կորստի համար, մեկնեց էջմիածին։



Հոկտեմբերի 22-ին, երեքշաբթի օր, ժամը 10.30-ին, Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետը նախագահեց Ա. Իսահակյանի հոգու փրկության համար կատարված հոգեհանգստյան արարողության։

Ժամը 11-ին Հոգևոր Ընթերցանի հանդիսասրահում կայացավ սգահանդես Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։

Ընթերցանի ուսանողությունը իր սրտագին տուրքը, իր սրտի պարտքն էր տալիս Վարպետի հիշատակին, իր երգերով և արտասովորություններով։

Սգո հանդեսում խոսք ասին հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը, պ. Արթուր Հատիսյանը՝ և վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը։

Վերջում խոսք ասավ Վեհափառ Հայրապետը։

«Ամբողջ հայ ժողովրդի հետ մենք այ մեր սրտերում մեզ խորապես կսգանք տխուր մահը մեր սիրելի Վարպետի, մարդու մր, բարեկամի մը, տաղանդավոր բանաստեղծի մր, որ հայ ժողովրդի փառքը կկազմեր։ Մարդկայնորեն անհնարին է վիշտ լուսննալ այսպիսի ահավոր կորուստի մը առթիվ, որ կարծես մեր յուրորի սրտերեն անցատվեցավ։

Մայր Աթոռ Ս. էջմիածինը, որ մեծանուն բանաստեղծի հարազատ մեկ տունն էր, Հոգևոր Ընթերցանը, որուն հանդեպ մասնավոր հետաքրքրություն, գուրգուրանք ու սեր ուներ, լին կրնար այսօր չարտահայտել իրենց խորունկ ցավն ու տխրությունը։

Հաճախ դա՛ն դրկաբաց կրնդունեինք բոլորս այ անխտիր, թեանցուկ կատաղնորդինք Մայր Տաճար, Վեհարան, Հոգևոր Ընթերցան և կղզայինք, որ այս սուրբ տեղը այն վայրն է, որտեղ անոր հոգին կունենար առավելագույն տրախությունը։ Այստեղ ան կհիշեր իր պատանեկության տարիները, այստեղ կգրուներ մեր ժողովրդի և Նիկիեցվո դադադր պատմութենեն եկած այն ոգին, որն ինքը շատ կփնտռեր։

Մենք քրիստոնյա Նիկիեցվո մը սպասավորներն ենք և կհավատանք հոգիին անմահությանը, գիտենք, որ այն, ինչ ոգի, տաղանդ, հանճար կկուլվի, ի կրնար մեռնիլ։ Եվ այս մեզ խորապես կմխիթարի։ Մեր բոլորի սիրելի Վարպետը դարձյալ վախճան, մահ չունի, չեն կրնար մեռնիլ Ավետիք Իսահակյանները։ Ան դարձած է, մանավանդ մահեն հետո, — և այդպես պատահած է գրեթե բոլոր մեծ մարդոց պարագային, — մեր և իր հարազատ ժողովրդի բոլոր զանգվածներուն սեփականությունը, Մակավաթիվ մարդերու, շատ քիչերուն կմիճակվի այսպիսի համաժողովրդական սիրով ու գուրգուրանքով շրջա-

պատվի, Մեր գրականության պատմությունը տված է մեզ բավականաչափ մեծ թվով բանաստեղծներու անուններ, որոնցմե քչերն են, որ հավերժորեն պիտի ապրին մեր ժողովրդին հետ: Վարուժանի, Մեծարենցի, Թումանյանի ու Տերյանի մեծ անուններուն հետ Ավետիք Իսահակյանի անունը շատ ներդաշնակ ու գեղեցիկ ծաղկեփունջ մը կկազմե:

Իյ, հիանալի ստեղծագործություններուն մեջ մեծ, խորունկ զգացումներու և խոհերու աշխարհ, տիեզերք մը կա, Գյոթեյան մեծություն մը ու ժալալով: Այդ աշխարհը ունի տխուր շեշտներու և հոռետեսության զգացում մը հաճախ, սակայն զգացումը, որ մեզ կթելադրե հումանիզմ, մարդկայնություն, հայրենասիրություն, ազգասիրություն, լավատեսություն, հավաստք դեպի ապագան, և այլ թուրք անշուշտ կրխին մեր ժողովրդի զգացումներեն, խոհերեն, ցանկություններեն:

Վստահ ենք, որ Մեզ այնպես պիտի թվի, թե Վարպետը միշտ պիտի քնակի նրևանի

մեջ, իր օջախին մեջ, միշտ պիտի կրնանք այցելության երթալ իրեն և միշտ կրնանք վայելել անոր ներկայությունը Մայր Աթոռի մեջ, մեր քոլորի սրտին մոտիկ և Մեր կողքին:

Հարգանք իր մեծ ոգիին, հանճարին ու հիշատակին:

Ազո հանդեսը փակվեց Տերունական աղոթքով:



Նույն օրը, հետմիջօրեի ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետի անունից բանաստեղծ Ավետիք Իսահակյանի թաղման արարողություններին մասնակցեց մի պատգամավորություն գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հակազուն սրբազանների զխավորությամբ և մի գեղեցիկ մետաղյա ծաղկեպսակ դրեց Վարպետի շիրմի վրա:





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՅԵՂԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ՄԱՀԿԱՆ ԱՌԹԻՎ**

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, վերջին ողջույն և օրհնություն ամենայն հայոց բանաստեղծ Ավետիք Խաճապետին, որ բաժանվելով մեր աշխարհից, անցնում է խաղաղ ու անվերջով կյանքի մյուս ափին։ Այս բաժանումը խոր վիշտ է բողբոսում բոլոր սրտերում, որ քաթախում են Հայրենի երկրում և հայ Սփյուռքում։

Մեր ժողովուրդը կորցնում է իր մեծ գավակին, որ ավելի քան կես դար վառ պանեց ջանք մեր Ազգի ազնիվ հույզերի։

Հայ գրականությունը կորցնում է իր մեծատաղանդ Վարպետին, որ իր բովանդակ հոգին լույսի վերածած ընծա քերեց իր հաճախած ժողովրդին ու ամբողջ աշխարհին։

Կորցնում է նաև Մայր Աթոռը իր մեծ քառեկամին ու սիրեցյալ որդուն, որ մեր Ս. Էջմիածնի հագաբամյա ֆաբրի խորհուրդը սրտում, ազոթում էր վերածնված մեր Հայրենիքի կյանքի, արևի ու խաղաղ, ազատ վերելքի համար։

Վարպետը մեռավ։ Վարպետը կապրի և պիտի ապրի հայ ժողովրդի հոգում ու կյանքում, բաշխվելով ամբողջապես մեզ բոլորիս և հետագա բոլոր սերունդներին։ Եվ նա կմեռ միշտ մեզ հետ, կլինի միշտ մերը՝ իբրև ներշնչման աղբյուր, իբրև լուսաշող փառոս։

Տիրոջ ռդորմությամբ հանգիստ իր հոգվույն, խաղաղություն և լույս, այժմ և հավիտյան։

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. ԷԶՄԻԱԾՆ





ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂՇ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ՍԱՀՎԱՆ ՈՒԹՈՐԵՔԻ ԱՌԹԻՎ

Հոկտեմբերի 27-ին, կիրակի, Գյուտ խա-
 յի տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսա-
 վոր սուրբ պատարագ մատուցեց Հյուսի-
 սային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի
 առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքե-
 պիսկոպոս Գալֆայանը՝ ի հանգիստ հոգվո
 Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվո ան-
 դամ և մեծանուն բանաստեղծ Ավետիք Ի-
 սահակյանի:

Սուրբ պատարագին ներկա էին Վեհա-
 փառ Հայրապետը, հանգուցյալի սգակեր
 ընտանիքը, հարազատները, Գերագույն
 Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի
 ամբողջ միաբանությունը, մեծանուն բա-
 նաստեղծի մտքի և գրչի ընկերները և հա-
 վատացյալների մի մեծ բազմություն, որը
 եկել էր իր վերջին հարգանքը մատուցելու
 մեծատաղանդ բանաստեղծի, պատվական
 հայ մարդու հիշատակին:

Վեհ ու ներդաշնակ շարունակվում են
 սուրբ պատարագի արարողությունն ու եր-
 գեցողությունը: Հուզում և վիշտ կա ինչպես
 երգի մեջ, այնպես էլ բոլոր դեմքերին և սր-
 տերում:

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ
 Հայրապետը բարձրանում է Ս. Սեդան: Ամ-
 բողջ Տաճարը խոր լուռության մեջ լսում է
 Նորին Ս. Օծուխյան իմաստաշատ և գեղեց-

կահյուս դամբանական քարոզը: «Ամենայն
 մարմին իբրև զխոտ է և ամենայն փառ
 մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ: Խոտն ցամա-
 քեցաւ և ծաղիկն քօթափեցաւ. և քան ճնշու-
 մնայ յաւիտեան» (Ա Պետր. Ա 24—25)
 քնաբանով Վեհափառ Հայրապետը խոսում
 է կյանքի անցավորության և ունայնության
 վրա և վեր է հանում աստվածային հոգու,
 ստեղծագործ ոգու գերը անհատի և ժողո-
 վրդի կյանքի մեջ: Այնուհետև Վեհափառ
 Հայրապետը իսահակյանին ներկայացնում
 է որպես աշխարհի հոգու տեր մարդու, որը
 պիտի ապրի հայ ժողովրդի հետ դարեր և
 դարեր, ապա սերունդների համար դառնա-
 լով ներշնչման աղբյուր, լուսատու փարոս,
 առաջնորդող ոգի և պայքարի գրոշ:

Ապա Վեհափառ Հայրապետի հանդիսա-
 դրությամբ կատարվում է պաշտոնական
 հոգեհանգիստ: Խնկի անուշ բուրմունքի հետ
 վեր, դեպի երկինք է բարձրանում ազոթա-
 վորների սրտագին մրմունջը՝ «Թեա, Տէր, ի
 հողիս մեր նեղեցելոցս: «Ի վերին Երուսա-
 ղէմ» շարականի մեղեդին անսահման մխի-
 թարությամբ է լցնում բոլորի վշտահար
 սրտերը:

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետի և
 Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից Վե-
 հարանում տրվում է հոգեհանգ:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԹԻ, ԵՐԵՎԱՆԻ ժամը 4-ին Հոգևոր Ճեմարանի հանդիսատեսները զեկուցեց Հոգեշնորհ Ս. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը՝ միաբանության և ուսանողության համար, Վեհափառ Հայրապետի Աղբյուրանի և Ղարաբաղի թեմերում կատարած հովվապետական այցելության շուրջ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ՈՒՐԱԿԻ, Մայր Աթոռից մեկնեց Հոգեշնորհ Ս. Գնեկ ժայռագույն վարդապետ Ճերեճյանը, մոտ մի ամիս ուխտավորաբար Մայր Աթոռում մնալուց հետո:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում եպիսկոպոսական իր անդրանիկ պատարագը մատուցեց Հոգևոր Ճեմարանի նորընտիր վերատեսուչ գերաշնորհ Ս. Հայկազուն եպիսկոպոս Արքահամյանը և քարոզեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայ կյանքում կատարած նախախնամական դերի մասին և սրտագին բարեմաղթություններ արեց Վեհափառ Հայրապետի կյանքի արեջատության ու Ս. Էջմիածնի պայծառության համար:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ, ՇԱՐԱԹ, «Սրբոց Թարգմանյաց վարդապետացն մերոց» ազգային-եկեղեցական մեծ տոնի կապակցությամբ փակ էր Հոգևոր Ճեմարանը:

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ս. Երուսաղեմի միաբան, Հնդկաստանի և Մայրագույն Արևելքի Հայրապետական նվիրակ Հոգեշնորհ Ս. Ասողիկ ժայռագույն վարդապետ Ղազարյանը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգեշնորհ Ս. Ասողիկ ժայռագույն վարդապետ Ղազարյանը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԹԻ, Հոգևոր Ճեմարան այցելեց Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետական նվիրակ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը:

Սրբազան հայրը, Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Ս. Հայկազուն եպիսկոպոսի առաջնորդությամբ, այցելեց դասարանները, ներկա եղավ դասավանդություններին և իր գոհունակությունը հայտնեց Ճեմարանում տիրող կարգ ու կանոնի և ուսումնադաստիարակչական աշխատանքների լավ դրվածքի համար: Սիոն սրբապանը Ճեմարանի լավագույն և անկեղծ բարեկամներից մեկն է. նա Ճեմարանի համար այս տարի ապահովել է իր թեմից հինգ աղնիվ ազգայինների բարերարությունը: Սրբազան հայրը լուսանկարվեց իր սաների հետ և մտերիմ զրույց ունեցավ նրանց հետ Ճեմարանում:

Ժամը 1-ին Սիոն սրբազանը Ճեմարանի հանդիսությանը դահլիճում խոսեց շատ գեղեցիկ և քաջալերիչ խրատական, որը սրտագինս ընդունվեց ուսանողության կողմից, խոր կերպով տպավորվելով նրանցից յուրաքանչյուրի մտքում և սրտում:

Վերջում Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Ս. Հայկազուն սրբազանը շնորհակալություն հայտնեց Սիոն սրբազանին՝ նրա շինիչ ու հայրական հորդորների համար:



ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ, ՌԻՐԱԱԹ, առավոտյան ժամը 8-ին, գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը ինքնաթիռով մեկնեց Մոսկվա:

Երևանի օդանավակայանում գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոսին ողջերթ մաղթեցին Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Ս. Սահակ արքեպիսկոպոսը, Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ գերաշնորհ Ս. Հայկազուն եպիսկոպոսը, չոգեշնորհ Ս. Ասողիկ ծարյագույն վարդապետ Ղազարյանը և հոգեշնորհ Ս. Եղիշե վարդապետ Սարգսյանը:



ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ, ՌԻՐԱԱԹ, երեկոյան ժամը 5-ին, Հոգևոր Ժեմարանի հանդիսու-

թյանց սրահում, միաբանության և ուսանողության համար բանախոսեց Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Մամբրե արքեպիսկոպոս Կալիֆայանը, Վիսկոնզի մեր ազգային եկեղեցական թեմերը՝ նյութի շուրջը: Սրբազանը հանգամանորեն ժանրացավ Սիսիլոսի մեր թեմերի կյանքի և գործունեության վրա, բացի Հյուսիսային Ամերիկայի թեմից, որը կլիսի նյութ երկրորդ բանախոսության համար:

Սրբազանի բանախոսությունը մեծ հետաքրքրություն ստեղծեց և լսվեց խոր ուշադրությամբ:

Գերաշնորհ Ս. Հայկազուն սրբազանը վերջում շնորհակալություն հայտնեց այս շահեկան և բովանդակալից բանախոսության համար:





**ԳԵՐԱՇԵՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱՋՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
ԵՎ ՀՈԳԵՇԵՆՈՐՀ Տ. ԱՍՈՂԻԿ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎՐԴ. ՂԱՋԱՐՑԱՆԻ
ԺԱՄԱՆՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍԻՆ**

Խորին Ս. Օժոթյուն Վեհափառ Հայրապետի հրավերով, սույն թվականի սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Երուսաղեմի Հայոց Աբրոջ Հակոբյանց զինվորյալ միաբանության սիրված և հարգված անդամներից գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, ուղեկցությամբ նույն միաբանության անդամ, շնորհաստանի և Մայրազույն Արեւելքի Հայրապետական պատվիրակ հոգեշնորհ Տ. Ասողիկ ժայրագույն վարդապետ Ղազարյանի, որն առաջին անգամ ուխտի է գալիս Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք:

Նրանքի օղանավակայանում սրբազան հայրը և հոգեշնորհ հայր սուրբը դիմավորվեցին հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ապետիսյանի և Մայր Աթոռի դիվանապետ պ. Հ. Առաքելյանի կողմից: Հանուն Վեհափառ Հայրապետի բարի գալստյան խոսք ասաց հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետը, որին պատասխանեց գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը, շնորհակալություն հայտնելով ջերմ դիմավորման համար:

Վաղ առավոտյան Մայր Աթոռ Ս. Էջմիածինը եռուղեով մեջ էր թանկագին հյուրերին պատշաճ կերպով դիմավորելու համար:

Ժամերգությունը հաջիվ էր ավարտված, երբ ժամը 8.30-ին հյուրերը ժամանեցին Մայր Աթոռ, մինչ Մայր Աթոռի միաբանությունը, Հոգեւոր Ճեմարանի ուսանողությունը ոպաստւմ էին Մայր Տաճարի դիխավոր մուտքի առաջ: Հյուրերն ընդունվեցին ջերմորեն և առաջնորդվեցին դեպի Իջման Ս. Սեդակ, որի առաջ երկյուղածորեն ծունկի եկած, կատարեցին իրենց ուխտը առ Աստված: Այնուհետև լուսարարապետ գերապարիկ Տ. Սաճակ արեւելիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը բարի գալուստի շերմագին խոսք ասաց:

Պիղղունելով Ձեր ժամանումը Մայր Աթոռ, Ձեզ բարի գալուստ եմ մաղթում Մայր Աթոռ-



Հոգեւոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան

ուի ողջ միաբանության, Հոգեւոր Ճեմարանի ուսանողության և ներկա թուր հավատացյալների կողմից:

Գերաշնորհ արքայան եղբայր, Դուք եկել եք Խորին Վեհափառության բարձր հրավերով, ազգագուտ և եկեղեցյալն աշխատանքի անցնելու համար Ս. Էջմիածնում: Դուք, վա-

ընկելով Վեհափառ Հայրապետի վստահությունը, վայելում էր նաև մեր բոլորի սերն ու եղբայրակցությունը և մենք բոլորս համոզված ենք, որ Ձեր գործունեությունը Մայր Աթոռում փլինի օգտակար և արդյունավետ:

Բարի գալուստ նաև Ձեզ, հոգեշնորհ Տ. Ասողիկ հայր սուրբ: Թեև Ձեզ առաջին անգամն ենք հանդիպում, բայց Ձեր անունը և Ձեր անձնվեր գործունեությունը մեզ ծանոթ են արդեն:

Ողջունի այս սրտագին խոսքերից հետո գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը խոսք առնելով ասաց.

Ենախ գոհություն և փառք նախախնամողին Աստուծո, որ մեզ անվտանգ հասցուց այս խաղաղ նավահանգիստը, և հետո խորին շնորհակալություն նորին Ս. Օծուկյանը, որուն հրավերով կարժանանանք վերստին կատարելու մեր ուխտը այս մեծ սրբավայրին մեզ, Կուզանք Ս. Նրկրեն, բերելով քրիստոսակոխ սրբավայրերուն և Սրբոց Հակոբյանց միաբանության սերն ու ողջունը Մայր Աթոռի միաբանությունը: Այս սրբազան հարկին՝ աստվածակոխ այս Մայր Տաճարին, որուն կանթեղը անմար է ամեն հավատացյալի սրտին մեջ, բերած ենք արտասահմանի հայություն սերն ու հավատարմությունը, նկատ ենք Մայր Աթոռ, այս անգամ ավելի երկար մնալու և բերելու մեր համատեղ առաքելությունը այս Սրբազան Տանը, մեր կարողությունը ներած չափովը: Մշակենք ենք Տիրոջ ալոսին, պիտի աշխատենք մեր առավելագույն չափովը ծառայելու Մայր Աթոռին, որպեսզի Աստված պտղաբերե այստեղ կատարված բոլոր աշխատանքները շնորհ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյն հարիւր: Շնորհակալություններ, սրբազան եղբայր, Ձեր այնքան ազնիվ խոսքերում համար, և միաբանության՝ այս ջերմ ընդունելության համար, և մանավանդ նորին Ս. Օծուկյան անհուն շնորհակալություն՝ Իր սիրտ և վստահության համար, որոնց մեզ կարժանացնի, Իր կողքին աշխատելու հոգուտ և ի պայծառություն Մայր աթոռի:

Ապա խոսք առավ նաև հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Լազարյանը. որը շնորհակալություն հայտնեց զգացված բառերով և խոսեց առաջին իսկ ռուպենների իր ստացած տպավորությունների մասին, միաժամանակ թարգմանը հանդիսանալով Հեռավոր Արևելքում ապրող իր ժողովրդի հավատարմության և սիրտ զգացմունքների դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, դեպի Վեհափառ Հայրապետը և դեպի Մայր Հայրենիքը:

Այնուհետև գերապատիվ Սահակ սրբազանը սիրելի հյուրերին առաջնորդում է Վեհարան՝ նորին Ս. Օծուկյան ներկայացնելու համար:

Վեհափառ Հայրապետը սրտագինս ընդունում է գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանին և հոգեշնորհ Տ. Ասողիկ վարդապետին, որոնք վեղարները հանած, մոտենում են Վեհափառ Հայրապետի Ս. Աջը համրություն:

Ընդունելության ժամանակ Հայկազուն սրբազանը Վեհափառ Հայրապետին հաղորդում է Ծրուադեմի ընտրյալ Պատրիարք Ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոսի եղբայրական ողջունը և Սրբոց Հակոբյանց միաբանությունից հարգական սերն ու հարգանքը: Սրբազանը հայտնում է իր խորունկ շնորհակալությունը Վեհափառ Հայրապետին իրեն հանդես գույց տրված բարձր վստահության և սրտագին հրավերի համար և հավատարմացնում է, որ ինքը եկել է անվերապահորեն կատարելու նորին Ս. Օծուկյան բոլոր հրամանները՝ հոգուտ և ի շինություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Վեհափառ Հայրապետը Իր պատասխան խոսքում հայտնեց Իր սրտի խորունկ գոհունակությունը սրբազան հոր Մայր Աթոռ ժամանան առթիվ, ընդգծելով, որ Հայկազուն սրբազանը զախս է ամենայն պատրաստակամությամբ ու նվիրվածությամբ իր շինարար գործակցությունը բերելու վերահսկող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ, Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ Հայ Եկեղեցին կոչված է իր մեծ առաքելությունը շարունակելու առավել նվիրումով և քաջությամբ, ի մասնավորի մեր օրերում, երբ այդ անհրաժեշտությունը ախքառն ակնհայտ է և՛ Մայր Հայրենիքում, և՛ ի սփյուռս ցրված տարագիր հայության բոլոր հատվածների մեջ:



Նրեքշարթի է, 1-ը հոկտեմբերի, Հոգևոր Ճեմարանի կամարների տակ, ուսուցչական կազմի և ողջ ուսանողության սրտերում ցնծագին հուզմունքի այիքն է աճում: Հոգեվոր Ճեմարանում անհամբեր սպասում են այն սրտառույ պահին, երբ դարձապիք Ներսիմոնի նորին Ս. Օծուկյան Վեհափառ Հայրապետը, Իր հետ բերելով Ճեմարանի նոր տեսուչ գերանշորհ Տ. Հայկազուն սրբազանին:

Առավոտյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետը զախս է Ճեմարան, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսի, հոգեշնորհ Տ. Ասողիկ վարդապետի և ամբողջ միաբանության: Ճեմարանի դահլիճից ներս Վեհափառ Հայրապետը դի-

մավորվում է ուսանողների և դասախոսների կողմից ցանկացած ժամահարուժվամբ:

Դահլիճը կանգնել է լուրջ ու հանդիսավոր նորին Ս. Օծուրյուն վեճափառ Հայրապետի ջերմ խոսքերով Հայկազուն որդազույնի ճանկայացնում է դասախոսական կադրին և ուսանողության, ծանրանալով նրա կյանքի և գործունեության վրա, բնութագրելով նրան որպես Հայ Եկեղեցու անբասիր, ազնիվ և նվիրված հոգեւորականի, և խանդավառ ծափահարությունների տակ հայտնելով սրբազանին Ս. էջմիածնի Հոգեվոր ճեմարանի տեսուչ նշանակվելու մասին, ասում:

Քերտչեւոն Ս. Հայկազուն սրբազանը մեկն է մեր Եկեղեցիի այն անկաշառ և եռանդուն սպասավորներեն, որոնք իրենց բեղմնավոր կյանքը նվիրաբերած են Հայաստանայայց Եկեղեցիի սուր սեղաններուն և մեր հարազատ ժողովրդին: Ան եղած է անտրամելջ ու քոյարանվիր հոգևորականը Ստեփան Գեղվորյայ միաբաններեն, և Եկեղեցիի նվազագույն ջանքն անգամ գերադասած է ամեն բանն վեր:

Մենք հոգեկան անխառն ուրախություն մը կապրինք, ողջունելով նորին Սրբազնությունը այս սրբազան հաստատության կամարներուն տակ, որպես մեկը, որ կուզա շարունակելու իր կյանքի ընծայաբերումը Մայր Աթոռ Ս. էջմիածնի մեջ, Մեր կողմից: Մենք ավելի քան ուրախ ենք մանավանդ այն հուսադրիչ ու ոգևորող ճշմարտության համար, որ սրբազանը կուզա հավատով մը, շինարար հույսերով մեր Եկեղեցիի այս սրբազնագույն կեդրոնի պայծառ հեռանկարներու նկատմամբ: Ան սիրահոծաբ ընդունալով Մեր հրավերին, աներկբա համբալով դեպի Ս. էջմիածին, բերելու համար իր աշխատանքի քաժինը մեր սուրբ գործին:

Ան մերն է ասունես: Դուք, սիրելի՛ սրբազան, աստիճանաբար պիտի ծանոթանաք մեր միաբանության և ուսանողության հոգիի և մտքի արժանիքներուն ու քաղվասնությունց, և թույլ տվեք կանխապես վստահություն հայտնել, որ դուք Ձեր անկրկնելի և ունեցելի ավելին պիտի գտնեք: Այս վստահությամբ մենք Ձեզի կհանձնենք Մայր Աթոռ Ս. էջմիածնի Հոգևոր ճեմարանը: (Մափահարություններ):

Ս. էջմիածնի Հոգևոր ճեմարանը հաստատություն մըն է, որ կոչված է մեծ առաքելություն մը կատարելու՝ ի շինություն Հայաստանայայց Եկեղեցվո և ի մխիթարություն համայն հայ ժողովրդայն:

Տեղյակ եք բոլորդ այ մեր Եկեղեցիի ներկա իրականության և Հայրենի Հողի վրա և՛

ի սխիտոս աշխարհի, ու ցիանք, թե ինչպիսի մեծ աշխատանքի և անհուն նվիրվածության անհրաժեշտություն կա:

Ուրեմն, սիրելի՛ սրբազան, Ձեր անձնական լավագույն կարողությունները զուգակցելով Ձեր հառուստ կենսափորձի հետ, վստահ ենք Մենք, որ Հոգևոր ճեմարանի կյանքը պիտի դեկավարեք ամենայն ձեռնհասությամբ:

Կշնորհավորենք Ձեզ ու լավագույն բարեմաղորություններով հաջողություններ կցանկանաք:

Ապա Հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ Հոգեբշնորհ Ս. Մեսրոպ վարդապետ Անթուրյանը իր ողջունի խոսքում ասաց:

Շնախ պիտի խնդրեի, որ թույլ տրվեր ինձ ողջունել դերաշնորհ Ս. Հայկազուն սրբազանի բերկրառիթմ ժամանումը այս սրբազան հարկից ճեմար, Մենք սրտատրոսի սպասում էինք նրա դաստիարակ ոչ միայն գործերի անհրաժեշտ բերումով, այլև կարոտով ու սիրով: Այս չէ՞ վկայում արդյոք մեր բոլորի խնդապին հոգեկան հրճվանքը այս երջանիկ պահին:

Ս. էջմիածնի Հոգևոր ճեմարանը անցել է տարիների արդյունավետ գործունեության ուղի, ունեցել է իր նվաճումները, տվել է իր հոռնքը, և մեր Եկեղեցուն վերապահած ունի խոստումնալից սերունդ: Ավելի քան հուսահորիչ է նա իր այժմյան գոյավիճակի միջ: Մակայն այս բոլորով հանդերձ Հոգևոր ճեմարանը պարտադիր անհրաժեշտություն էր զգում հարուստ կենսափորձի տեր և մտավոր ու հոգեկան բարձր կարողություններով օժտված բաժնատիրական հոգևորական դեկավարի:

Հոգևոր ճեմարանը այն օջախը չէ, որտեղ միայն մտքեր են թրծվում, այլ մանավանդ այն դարբնոց, որտեղ հոգիներ են կերտվում: Եվ ամենայն վստահությամբ, մանավանդ Ձեզ անհատապես ծանոթ անձինք, որոնց թվում և ես, Նրուաղեմի ժառանգավորաց վարժարանի երբեմնի ուսանողի հանգամանքով, պիտի կարողանա՞ն ասել, որ Դուք պիտի լինեք ի մասնավորի դարբինը մեր սիրելի ուսանողների հոգին ու զգացումները դարբնելու համար, թեկուզ Ձեր անձնական իսկ օրինակով:

Ձերդ Սրբազնությունը օժտված է քաղմապիսի կարողություններով, քայքայ Ձեր նվարագրի պսակը Ձեր իմաստուն համաստեղությունն է, որը պետք է լինի ամեն մի հայ հոգևորականի էլ մեծագույն արժանիքը: Ունենալու համար անձնվիր, հավատալի, անկաշառ, հայրենասեր, ժողովրդասեր հոգևորականներ, Մայր Աթոռ Ս. էջմիածնի Հոգևոր ճեմարանը կոչված է պատ-

մեկան մեծ դեր կատարել, և այդ լինելու է նորին Ս. Օժոթյան վերին հովանավորությանը, Ձերդ Սրբազնության բարեխիղճ և ձեռնհաս ղեկավարությամբ, դասախոսական կազմի և ուսանողության անընդմեջ ջանասիրության շնորհիվ: Վստահ գիտենք, որ այս բոլորից և ոչ մեկը չի՝ պակասելու, և հետևաբար Հոգևոր Զեմարանը անկասկած հաջողությամբ կկատարի իր պատմական և նվիրական առաքելությունը:

Սրբազան հայր, թույլ տվե՛ք սրտանց շնորհավորել Ձեզ և խոստանալ մեր անպայման հարգանքն ու գործակցությունը:

Այնուհետև Հոգևոր Զեմարանի ուսանողության անունից հուզիչ ուղերձ կարդաց բաղնիքի Սարգիս սահակավազ Բենքոլյանը:

«Սրբազան հայր, թույլ տվե՛ք այս երջանիկ թույլի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Զեմարանի ամբողջ ուսանողության զգացմունքների և խոհերի թարգմանք հանդիսանալ և Ձեզ հայտնել մեր սրտագին ուրախությունը Ձեր Մայր Աթոռ ժամանման ուրախ առիթով, որպես կրթական այս սուրբ հաստատության վերատեսչի:

Սրբազան հայր, մենք յափազանց զգացված ենք, որ Դուք ստանձնեցի՛ք այս ծանր և պատասխանատու պաշտոնը և եկա՛ք Ձեր աշխատանքը միացնելու մեր շատ սիրելի և Սրբազնասուրբ Հոր՝ Վեհափառ Հայրապետի աշխատանքներին, թեթևացնելու համար նրա հայրապետական ուսերին ծանրացող եկեղեցաշեն և կրթական աշխատանքների ծանր բեռը:

Մենք գիտակցում ենք, թե Վեհափառ Հայրապետը ինչ է պահանջում Հոգևոր Զեմարանի ուսանողությունից, և այս հանդիսավոր պահին մենք Ձեր ներկայության մի անգամ ևս կրկնում ենք մեր սուրբ ուխտը՝ հոգեռանդ փութով աշխատելու, հարստացնելու համար մեր մտքի և սրտի փեթակները սուրբգրական գիտելիքներով, հավատով և ծառայության ոգով:

Ամենալավ Հայոց Հայրապետության Մայր Աթոռի կողքին Հոգևոր Զեմարանը միշտ եղել է լուսատու ջահ, ի սպաս դրված մեր ժողովրդի հոգևոր ու իմացական դաստիարակության գործին:

Սրբազան հայր, մենք խոստանում ենք Ձեր առաքելորդության տակ ևս սովորել և դաստիարակվել այնպես, ինչպես Վեհափառ Հայրապետն է ցանկանում, որպեսզի այս Զեմարանը հասնի իր կոչման և պարտականության բարձրության:

Մենք, ուսանողներս, խորապես համոզված ենք, որ այսօր մանավանդ բովանդակ հայ ժողովուրդը շատ մեծ հույսեր է կապել այս սուրբ հաստատությունից շրջանավարտ

հոգևորականների վրա, որոնք վաղը կոչված են հանդիսանալու հովիվները մեր Ս. Եկեղեցու և ժողովրդի:

Մենք վստահ ենք, որ Դուք, ձեռք-ձեռքի տված մեր Զեմարանի փոխ-տեսուչ և ձեր նախկին աշակերտ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանի, որն իր ամբողջ եռանդով ու զգացմունքներով նվիրված է Զեմարանին, և դասախոսական ամբողջ կազմի հետ, պիտի աշխատիք արդարացնել այն բարձր վստահությունը, որը տածում է մեր սիրեցյալ Վեհափառ Հայրապետը այս սուրբ հաստատության և նրա ղեկավարների հանդեպ:

Դուք Ձեզ հաս բերում եք ավելի քան 30 տարիների գործունեության մեծ փորձը, և մենք գիտենք, որ Դուք Ձեր աշակերտների եղբայրն ու հայրն եք հղել, մտերիմն ու բարեկամը: Դուք այստեղ էլ կդառնա՞ք նույնքան չերմ ու հարազատ մթնոլորտ, գուցե և ավելին, և մենք կարծում ենք՝ չի ընդհատվում Ձերդ Սրբազնության նվիրական տուրքը Հայ Եկեղեցուն, և երուսաղեմական վանականների կողքին կվաճենք էլ միաժամանակ ևս վանականները:

Թույլ տվե՛ք որդիական անկեղծ և ջերմագին սիրով ծափողջո՞մե՛լ Ձերդ Սրբազնության գալուստը:

Բարով եկա՞ք, Դրազան հայրա:

Ապա խոսք առավ նորին Սրբազնությունը:

«Վեհափառ Տեր, գերաշնորհ սրբազան հարք, հոգեշնորհ եղբայր, սիրելի՛ պաշտոնեություն և ուսանողներ՝:

Զգածված եմ շատ անմոռանալի և խորհրդավոր այս պահուն, երբ այս գեղեցիկ հանդիսությունն միտք, կերթալ և զեպի այն մյուս նվիրական հաստատությունը, Ս. Երուսաղեմի հայոց վանքը ըսել կուզեմ, որուն մեջ ապրած ու գործած եմ երեսուն տարիներ շարունակ, և որ այսօր, հոկտեմբեր 1-ին, հոն ալ, անոր սրբազան կամարներուն տակը, կվերաբացվին մեր ժառանգավորաց ու թարգմանյաց զույգ վարժարանները Սրբոց Հակոբյանց միաբանության, դասախոսական կազմի և ուսանողության ներկայության, երգով, աղոթքով և օրհնությամբ: Եվ ի՞նչ բարեբաստիկ զուգահեռություն մը այսօր, երբ նույն օրը, նախաձեռնամական կարգադրությամբ մը, ինքզինքս կգտնեմ Հայրենի Հողին վրա, և մեր հավատքի կեդրոնին մեջ Ս. Էջմիածնի, Հոգևոր Զեմարանի այս նվիրական հարկին ներքև: Ձեմ գիտիք երախտագիտական ի՞նչ անխառն զգացմունքով է, որ պիտի մոտենամ ի համբույր Ս. Աղույն մեր սիրեցյալ Վեհափառ Հայրապետի և իմ հոգևոր ծնո-

դի, որ ինձի կվստահի նվիրական այս հարկի այնքան պատասխանատու և ծանր ղեկավարությունը Թող ներքե նորին Ս. Օծուխյունը, երբ հայտարարեմ սա խորհրդավոր պահույն, թե ամբողջ կյանքիս մեջ եղած եմ շահարկող աշխատավոր մը մեր Ս. Եկեղեցիին և անոր հավերժական փառքին, ըստ ավետարանական այն խոսքին, թե «Մատաղ անպիտանք եմք, զոր ինչ պարտ էաք առնել արարածը: Թաշ գիտեմ, Վեհափա՛ռ Տեր, որ դժվար գործի մը պատասխանատվության ներքե է որ կգտնվիմ: Նյութական կառուցումներու հետ չէ մեր գործը, այլ հոգիներ կրթելու և ներտելու գործն է ան: Մեզ կհանձնվի այսօր մանավանդ սա պատանիներու հոգիններու կերտման մեծ գործը, պատանիներ, որոնք կոչված են վաղը սպասավորները Ըլլալու մեր Ս. Եկեղեցիին:

Աստուծո օրհնությամբ, Ձերդ Ս. Օծուխյան գլխավորությամբ և ազդեցով ու մեր սիրելի պաշտոնակիցներու անխնայ ջանքերով և ուսանողության աշխատասիրությանմբ, վստահ եմ, թե պիտի կարենանք մեր այսօրվան սա սիրելի աշակերտներն պատրաստել մշակներ Տիրոջ այգիին համար: Վստահ եմ, թե Ձերդ Վեհափառությունը և իմ սիրելի պաշտոնակիցներս թանկագին աշակիցներ պիտի լինեն ինձ համար իմ այս նոր պաշտոնիս կատարման մեջ: Վեհափա՛ռ, միշտ պետք ունիմ Ձեր օժանդակությունը:

Ապա խոսքն ուղղելով աշակերտությանը, սրբազանը շարունակեց.

«Սիրելի՛ սաներ, ձեզի համար նոր դեմք մը չեմ, բայց նոր եմ այս պարտականությունն մեջ: Դուք քաշ գիտեք, թե այս բոլոր ջանքերը, որոնք կթափվեն, ձեր օգտին և հոգեկան ու իմացական դաստիարակության համար են: Վեհափառ Հայրապետն սկսյալ մինչև մեր ամենավերջին պաշտոնյան մեծ գուրգուրանքով է, որ կնային Ձեր վրա, ու կուզեն, որ դուք դառնաք օրինակելի սաներ:

Դուք եկած եք հոս նպատակի մը համար, եկած եք նվիրական այս հարկին ներքե

պատրաստվելու իրեն ապագայի տիպար հոգևորականներ, որոնք այնքան կարիք ունի մեր Եկեղեցին, թե՛ Հայրենի Երկրին մեջ և թե՛ արտասահմանի մեջ: Մեր բոլորի իղձն է, որ դուք կրտնարույր այս կրթարանին մեջ դարձնվիք մեր մեծ նախնիքներու տեսիլքով, հավատքով ու շնչով: Դուք արժանավոր ժառանգորդը պիտի լինիք մեր ժողովրդի ստեղծած նվիրական արժեքներուն: Հոգեկան այս կերտումին մեջ մեր ջանքը պիտի լինի նաև կերտել ձեր մեջ ազնիվ եայ մարդը իր բոլոր կողմերով, վստահ մեր նպատակն է նույն աստեղ ձեր մեջ հոգևոր մարդը կերտելն առաջ, դարձնել ձեզ իրավ մարդը, որուն այնքան պետք ունի մանավանդ այսօրվա աշխարհը:

Վերջում վերատեսուչ սրբազան հայրն իր խոսքը նորից ուղղեց Վեհափառ Հայրապետին և ասաց.


«Վեհափա՛ռ Տեր, պատիվ է ինձ Ձեր վրատահությունը, և ես պիտի ջանամ իմ ամբողջ կարելիություններովս ու իմ կյանքիս զոհաբերությամբը նույնիսկ, տալ ինքզինքս այս նվիրական հաստատության բարվոք վերելքին և պայծառացմանը:

Կամարիմ ի համբույր Ձերդ Ս. Աղույն, խնդրելով, որ Ձեր հայրական օրհնությունն ու քուրդությունը մեր և այս կրթական հարկին վրա անպակաս լինին:

Ապա Վեհափառ Հայրապետը, ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը շնորհավորեցին նորընտիր վերատեսուչին, հաջողություն ցանկացան նրան իր այս պատասխանատու և կարևոր աշխատանքի մեջ:

Հոգևոր ճեմարանի նորընտիր վերատեսուչի ներկայացման այս հանդիսությունից հետո շարունակվեցին դասավանդությունները:

Հայկազուն սրբազանը Հոգևոր ճեմարանում կդասավանդի եկեղեցական կանոնագիտություն, ծիսագիտություն, Ս. Գրոց քննական մեկնություն (Ա և Բ լսարաններ), Հին Կտակարանի ներածություն, Նոր Կտակարանի ներածություն և գրաբար (Ա, Բ և Գ դասարաններ):





**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ
ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԳԱՄ ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌՍՋՆՈՐԴ ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՄԱՄԲՐԵ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԸ ՄԱՅՐ ԱՐԹՈՒՌԻՄ**

Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Թովթիս Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեգարձի հանդիսություններին մասնակցելու համար, Գերագույն Հոգևոր երոհրդի հրավերով, հոկտեմբերի 6-ին, կիրակի օրը, Մայր Աթոռ ժամանեց Հայրավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Հանուհի Վեհափառ Հայրապետի, սրբազան հորը դիմավորելու համար Երևանի ռդանավակայան էին գնացել գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, հոգեշնորհ Տ. Եղիշ վարդապետ Սարգսյանը և Մայր Աթոռի զիվանապետ պ. Հայկ Առաքելյանը: Սրբազանը ժամը 11-ին հասավ Մայր Աթոռ և առաջնորդվեց Մայր Տաճար իր ուխտը կատարելու և աղոթելու: Սիոն սրբազանին ուղղված ըարի գալստյան խոսք ասաց Սահակ սրբազանը, որին պատասխանեց Սիոն արքեպիսկոպոսը և շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության և ողջույնի սրտագին խոսքերի համար:

Վեհարանում գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանն ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից սրտառու ողջադուրմամբ:

Հոկտեմբերի 13-ին, կիրակի օր, Մայր Աթոռ ժամանեց նաև Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը:

Երևանի ռդանավակայանում հանում Վեհափառ Հայրապետի Մամբրե արքեպիսկոպոսին դիմավորեցին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը և զիվանապետ պ. Հայկ Առաքելյանը:

Մամբրե սրբազանը ժամը 11-ին հասավ Մայր Աթոռ և Իյման Ս. Սեդանի առաջ իր ուխտն ու երկրպագությունը կատարելուց հետո առաջնորդվեց Վեհարան, որտեղ Նորին Սրբազնությունը ընկունեց Վեհափառ Հայրապետը սրտագին ողջագուրումներով:

Մամբրե սրբազանին ուխտավորաբար ընկերակցում է իր եղբոր աղջիկը՝ տիկին Ալիս Սուքիասյան:





ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՅԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐԶ Տ. ՄԱՍՐԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԸ ՅԲԻԼԻՍԻՈՒՄ

Հոկտեմբերի 18-ին, ուրբաթ օր, գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը հովվական այցելությամբ մեկնեց Քրիլիսի. Սրբազան հոր ընկերակցում էին հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը և բարեշնորհ Սարգիս, Կարապետ և Խորեն սարկավազները:


Հոկտեմբերի 19-ին, շաբաթ օր, առավոտյան ժամը 9-ին, գերաշնորհ սրբազան հայրը գնացքով հասավ Քրիլիսի, Վրահայոց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանի, թեմի քահանայական դասի և թեմական խորհրդի անդամների առաջնորդությամբ սրբազանը ուղղվեց Քրիլիսի հայոց Ս. Գևորգ եկեղեցին և շերտաշահառուով մուտք գործեց տաճար, տը հավաքվել էր հավատացյալ ժողովրդի մեծ բազմություն, Առաջնորդ հայր սուրբը, հանուն վրահայոց թեմի հավատացյալների և եկեղեցական դասի, բարի գալստյան սրտագին և ջերմ խոսք ուղղեց Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանին, Սրբազանը եկեղեցում իր ուխտը կատարելուց հետո խորին շնորհակալությամբ հայտնեց հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետին ջերմ ընդունելության համար, Երեկոյան սրբազանը նախագահեց կիրական ժամասացության:

Հոկտեմբերի 20-ին, կիրակի օր, Քրիլիսի Ս. Գևորգ եկեղեցում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Նկեղեցին լիքն էր հավատացյալներով, Բարեպաշտ հայ հասարակությունը շտապել էր եկեղեցի՝ սրբազան հոր օրհնությունը ստանալու համար:

Գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը սուրբ պատարագի ընթացքում կատարեց քահանայական շնորհաբաշխություն. նա քահանա ձեռնադրեց Հոգևոր ճեմարանից շրջանավարտ շնորհունակ Հովհաննես սարկավազ Դանիելյանին, Վաղուց է Քրիլիսի հավատացյալ ժողովուրդը ներկա չէր եղել ձեռնադրության Ս. Խորհրդի կատարման, Այդ օրը անմոռանալի պիտի մնա Քրիլիսի հայերի հիշողության մեջ, Նորընթան անվանվեց Տ. Հովհաննես քահանա, Ձեռնադրիչ սրբազանը, շնորհաբաշխության հուզիչ արարողությունից հետո, գեղեցիկ և բովանդակալից քարոզ խոսեց թեմական եկեղեցիներում, այլ սակաւք են ընտրեալը բնաբանով և հայրական հորդորներ տվեց նորինժա Տ. Հովհաննես քահանային՝ օրինակ լինել հոտին զբաղման, գնացիւք, հաւատովք: Սրբազանի քարոզը խոր տպավորություն թողեց լուրի վրա: Քարոզի վերջում սրբազանը կոչ արեց հավատացյալներին՝ սիրով և հոգատարությամբ շրջապատել միշտ մեր Մայրենի հարազատ Եկեղեցին, նախանձախնդիր լինել նրա պայծառության համար:

Սուրբ պատարագից հետո գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետի ընկերակցությամբ, այցելեց Վրաստանի գեղեցիկ մայրաքաղաք Քրիլիսի տեսարժան վայրերը:

Երկուշաբթի օր, հոկտեմբերի 21-ին, սրբազանը վերադարձավ Մայր Աթոռ, Քրիլիսիից իր ստացած լավագույն տպավորություններով:





ԹԱՐԳՄԱՆՁԱՅ ՏՈՆԸ ՀՈԳԵՎՈՐ ԸԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 12-ին, շաբաթ օր, հետ սուրբ պատարագի, հետմիջօրեի ժամը 1-ին, Հոգևոր Ծեմարանի հանդիսությանց դահլիճում կազմակերպվել էր գրական-գեղարվեստական հանդես, նվիրված մեր սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Եղիշեի, Մովսես Քերթովի, Դավիթ Անհաղթփիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու անթառամ հիշատակին։

Հանդիսության նախադահում էր Հոգևոր Ծեմարանի նորընտիր վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արքահայրն։ Հանդեսին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմը և ամբողջ ուսանողությունը։

Սրբոց թարգմանչաց վարդապետների հիշատակին նվիրված հանդեսը բացվեց ռեքզարդարեցիի տնօրինաբար շարականով, որը երգվեց երգչախմբի կողմից։ Այսպիսով ուսանող բարեշնորհ ժիրալը օտարկավոր ձեռնեցանք խորունկ ապրումով արտասանեց Սիամանթոյի Ս. Մեսրոպից երգությունն փառքը հատվածը։

Ապա Հոգևոր Ծեմարանի դասախոս պարոն Արքուն Հատիտյանը հանդես եկավ սուրբ թարգմանիչ վարդապետների հիշատակին նվիրված բացման խոսքով։

Այսպիսով ուսանող բարեշնորհ Հակոբ սարկավազ ձեռնեցանք փայլուն հա-

ջողովյալ արտասանեց Վ. Թեքեյանի «Տաղ գրարարին» քերթվածը։

Օրվա գլխավոր բանախոս էր հեռավոր Արևելքի Հայրապետական պատվիրակ և Նրուսահեմի Սրբոց Հակոբյանց միաբանության շնորհալի անդամներից հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանը, որին պարոն Արքուն Հատիտյանը ներկայացրեց ուսանողության ընդ խոսքերով և հրավիրեց բանախոսության։

Հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանը կարգաց գեղեցիկ ու բովանդակալից մի ճառ՝ նվիրված սուրբ թարգմանիչ վարդապետների կրանքին ու գործունեությանը։

Մեր ազգային պատմության ամենեն ճակատագրական և թնորոշ հանգրվանը կհանդիսանա թարգմանիչներով սկսող գրական այն գործունեության շրջանը, որ սկիզբ կառնե 425-ական թվականներում և կշարունակվի առավել կամ նվազ խանդավառությամբ և բեղմնավոր արգասիքներով, հաջորդող բոլոր դարաշրջաններում ընթացքին։

Քրիստոնեությունը լոր լույս և նոր գիտակցություն բերած էր հայ ժողովրդին, բայց ան դեռ բոլորովին արմատացած չէր ղորավոր կերպով հայ ժողովրդի հոգվում խորը, վասնզի քրիստոնեության քարոզարքերը վեցտեղում և հաճախ օտար քարոզիքներու միջոցով տեղի կունենար, քնն ու

դժվարը մարտնչելի էր հայ զանգվածներուն համար:

Ն դարուն կորսնցուցած էինք մեր քաղաքական անկախությունը, բայց գտնվեցան մարդիկ, որոնք զգացին մեր ազգին հոգեւոր, մշակութային կարիքները և ուղեցին անոր տղւ Նոր միջոց մը ինքնապաշտպանութիւն, նոր զենք մը՝ ինքզինքը կարենալ պահելու համար, իր վրա խուժող ավազակ ուժերու դեմ:

Այդ մարդիկը կոչվին մեր թարգամանիչները, որոնք մեր ազգին տվին գիր, գրականութիւն և ինքնագիտակցութիւն:

Մեր թարգամանիչ վարդապետները, որոնք հիշատակը կտան և կալածաբաններ մեր նկնդեցին ամեն տարի, եղած են մեր Ազգին իրական լուսավորիչները, բացած են մեր աչքերը գիտութեան լույսին, կրթութեան և ուսման քարիքներուն և մեզի պատվավոր տեղ մը տված են քաղաքակիրթ ազգերու շարքին մեջ: Ծակատադրական և փրկարար եղած է թարգամանիչ վարդապետներու դերը մեր պատմութեան ամենեւեմում և ամեն հիշողութեան լուսավորիչներուն: Այդ խոյր նվաստացումներին և ամեն կարգի մահացումներին վերջ մենք կրցած ենք տուք կանգնելու և դարմանել մեր վերքերը, շնորհիւ մեր ազգային գիտակցութեան և այն անմեռ ուժին, որ կուգա մեր թարգամանիչ վարդապետներէն:

Մեր թարգամանիչ վարդապետները, վառված ազգային սիրով ու հոգեկան ջերմ հավատքով, նվիրվեցան հոգեւոր ու զապափառական կյանքի, լույսի ու գիտութեան մեյմեկ ջահեր եղան, լուսավորեցին հայ ժողովուրդը Հայաստանի մեկ ծայրին միւսը, ծավալեցին աստվածգիտութեան լույսը հայ սրտերում մեջ, փնչպես նաև ճշմարիտ հայրենասիրութեան կրակը վառեցին հայ սրտերում խորը: Մեր պատմութեան ամենեւեմում այլ շրջաններուն մեջ անոնք հայ սրտերուն մեջ ներարկեցին հերոսութեան ու հավատքի անպարտելի տգին, զամենք հրադիւնելով դարերու դեմ անմահութեան ոսկի եռանդներով ու տեսիլներով լեցնելով զանոնք: Հայ ժողովուրդը մնաց հավատարիմ թարգամանիչներու ոգիին և դադափարին: Թարգամանիչներու վառած կրակը միաց անմար, դաժան տուտալ դարերու մեջն տղ մեկ աշխարհաստան փոթորիկ վրցավ հանգցնել զայն, թեև երբեմն նվազկիտ, սակայն միշտ մնաց մոխիրներու տակ անթեղված, ու ժամանակ առ ժամանակ քանկեցաւ, իր կենսատու լույսն ու ջերմութիւնը ափոց ու տարածեց հայ հողներին ներս:

Հայ ժողովուրդի լուսաբաղձ հոգին միշտ թրթուցեք է լույսին համար ու մնացք է կառնած մազադաթներին ու դրքերին ճառա-

գայթող իմաստութեան, «Եմանաչել զիմաստութիւն և զխրատ...», և որոնք պատմութեան մով տուցուր գիշերները տաքցուցած ու լուսավորած են իր հոգին:

Մեր թարգամանիչ վարդապետները հայ ժողովրդի կյանքին մեջ կատարեցին նախախնամական դեր և զայն դարձուցին գիտութեան ու մշակութի ժողովուրդ մը, ու քաղաքական տարբեր պայմաններու մեջ բաժան-բաժան ապրող հայ զանգվածները միացուցին գրի ու գրականութեան ոսկե շաղկապներով:

Ահա անուցմե՛ք թարգամանիչներին՝ առաջինը Ս. Մեսրոպ, որ խոր կերպով զգաց Ազգին կարիքները և մեկ կողմ նետեց զինվորական իր տառապանքը և մեծագի համատ աքմը վրան առաւ ու եղավ վանական, ու դարձավ մտքերու լուսավորիչ և հայրութեան առաջին տառացի:

Ս. Մեսրոպ Հայաստանի երկու մասերուն մեջ ալ ակաւ պարածել գրին ու դրականութեան հրաշագործ լույսը, որ խարիսխը պիտի ըլլար նաև ապագա սերնդի գոյութեան և մարտնչումներուն, արեւելքն ու արեւմուտքն, հյուսիսն ու հարավն ներս խուժող քոյր վառնալներուն դեմ:

Ս. Մեսրոպ Մաշտոցը պարագլուխ էր թարգամանիչական շարժման, զգրագանցեալ քան զամենայն, տեսնեամբ հրեշտակական, մոռ ծննդական, բանիւ պայծառ, գործով ժուժկալ, մարմնով արտափառեալ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծատր, տուտեցանելով անձանքութեմ, — կըսն խորնացին: Ս. Միսրոպը Օշականի իր համեստ դամարանն մեզի կողեցնելու ու կտրվեցնի իր զմարեչի Ա. Ք. Գ. ին հավիտենական տուտերը և կհսկն հայ ժողովրդի ճակատագրին վրա:

Ահա և նշխը, Աւարայրի դուրացունեղակ լուսնաւոր, որ իր հավատքով տարչունով թաթալուն ոսկի գրիչով կերգե վարդանաց հերոսամարտը: Դարեր շարունակ հայ ժողովրդի հոգւում խորը կենդանի շունչով մը օծուն կապին վարդանանք, Ն. զիշեով հավերժացած:

Մովսէս Խորենացին թարգամանիչներու հուրին մեջ ուրիշ լուսավոր գեմք մըն է. իբրն քերթող և պատմագրն: Ան մեր առաջին պատմահայրն է, որ Հայն նահապետի օրերն կպատմն մեր նախնայց սխարագործութիւնները, զամենք կփոխանցն սերունդներուն, որ հայ ապրին և հայ մեռնին: Խորենացին անմահ վաճա հայ ժողովրդի հետ իր պատմութեան ուղի:

Այսօրվան տոնակիւղ սուրբերուն յորորդն է Դավիթ Անհաղթ փիլառփան, Ներկա-

յացուցիչը իմաստասիրական գիտություն կաճառին, որ փայլեցավ իր դարուն մեջ, Կրթադմաճմուտ և խորիմաստ մտքի բացառիկ կարողությամբ: Աթենացիք զաճ կոյած են Դավիթ Անհաղթ փիլիսոփա, որ վերելակեր է մարդկային իմաստության բարձունքները՝ աստվածային իմաստության աղբյուրն սնած և Ս. Հոգվուճ գորությունը Քրիստոսի խաչին ինքնաբարբառ երգիչն ու քառոզը եղած է աշխարհի իմաստության մայրաքաղաք Աթենքի մեջ և հայ ժողովրդին մեծապես սիրված ու հարգված է իբրև նոր Պողոս առաքյալ մը:

Տաճերորդ դարու վախճանին և տասնմեկերորդի սկզբին դրական երկնակամարին վրա ծագեցավ նոր աստղ մը, որ ստեղծագործեց Վանա ծովու ափերուն վրա: Գրիգոր Նարեկացի վարդապետն էր այդ, որ իր աղոթքով բացավ երկնից դռները, և որու ճենճերով հոգին Աստուծո սրբության ծարավով կտոյորի, իր միստիկ հոգին կքոցակիղվի երկրնքի դռները բախող հղոր աղոթքին աղաղակներովը, կյանք և սրբություն կհայցելու և արեւելիք հրաշք երևույթ է մեր մշակութի պատմության մեջ և ունի համաշխարհային մեծ նշանակություն: Հայ ժողովրդի ամենն շատ սիրած աղոթամատյանն է Նա-

րեկը, որում դորություն վրա ունի մեծ հավատք, և որ ամեն հայ տան մեջ պատվոտեղ ունի Ավետարանին հետ միասին:

Օրվան սուրբերուն վերջինն ու պսակն է Ներսես Շնորհալի Հայրապետը: Ան սոխակն է, քնարը մեր նկեղեցիին, քաղցրահունչ և քաղցրանուն: Իր շարականներով ու երգերով կճոխանան մեր շարակնոցն ու ժամագիրքը: Ան կհանդիսանա մեր նկեղեցվո ռեզոնանսություն պաշտպանը, քրիստոնեական եկեղեցիներու միության զատագույրը: Շուք ու շնորհք ունեցող Հայրապետ մը եղած է Ներսես Շնորհալին, և մեր նկեղեցին դայն թարգմանիչ սուրբերու կարգը անցուցած է իր գրական մեծ վաստակին ու շնորհալի, քաղցր Յվագին համարը:

Հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետի բանաստեղծությունը շերտերն են գունավեց ուսանողության կողմից:

Հանգեսի վերջում Բ լսարանի ուսանող ուրարակիր Լյուսան Մելիքյանը խոսուն զգացմունքով արտասանեց Վ. Թեքեյանի նկեղեցին Հայկական հոյակապ քերթվածը:

Հանգեսը վերջացավ նախագահ սրբազան հոր եղրափակի խոսքով, Վահանյանիչով ու միաբերան երգված Տերունական աղոթքով:





ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ԶԵՆՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 12-ին, շաբաթ օր, Սրբոց Թարգմանչաց տոնին, Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի հրշանիկ առթիվ, Մայր Տաճարում կատարվեց Հոգևոր Զեմարանի 1957 ուսումնական տարվա Գ դասարանի շրջանավարտ 8 ուսանողների սարկավագական և կիսասարկավագական ձեռնադրությունը:

Սրբոց Թարգմանչաց տոնի օրը Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գրտնրվող հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանը:

Սուրբ պատարագի ընթացքում կատարվեց նորընծաների կոշման և ձեռնադրության հուզիչ արարողությունը՝ Մայր Աթոռի ամբողջ միաբանության, Հոգևոր Զեմարանի ուսանողության, դասախոսական կազմի և հավատացյալների բազմության ներկայությամբ:

Շնորհաբաշխության արարողությունը կատարեց Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տիր-Հովհաննիսյանը:

Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Զեմարանի համար ցնծագին ուրախության և հոգեւից բերկրանքի պահ էր ձեռնադրության արարողության կատարումը, որն իր սրտագրավ և նույնքան հուզիչ խոհերով ու նշանակությամբ համակեց բոլորին:

Արդարև, այդ պահին բոլորը հիշում էին այն օրը, երբ այսօրվա նորընծաները, անկազմակերպ մտքով ու հոգով, մի տեսակ վարանումով ու երկյուղածությամբ, բախում էին Զեմարանի դռները, իսկ այսօր, հոգեպես, իմացապես աճած և միաժամանակ ֆիզիկապես մեծացած, վստահ քայլերով, դիտակից նվիրումով ու աննահանջ սիրով

ծնրադրում էին Իշման Ա. Սեդանի առաջ, ուխտելով բոլորանվեր կերպով ծառայել Մայր Աթոռ Ա. էջմիածնին, Հայ եկեղեցուն և հայ ժողովրդին:

Ուրախ էին այդ օրը բոլորը, ամենից շատ Վեհափառ Հայրապետը, որպես նորընծա սարկավագների Հայրն ու առաջնորդը, միաբանությունը՝ որ իր գիրկն էր ընդունում գիտակից, նվիրված ու խոստումնալից նորեղբայրների, Զեմարանի տեսչությունն ու դասախոսական կազմը՝ որոնք իրենց արդար հունձն էին ներկայացնում Աստծուն և Ազգին, և ուրախ էին նաև նորընծաները, որ ոտք էին դնում, իրենց երիտասարդ հոգիների ամբողջ կենսունակությամբ և խանդավառությամբ, եկեղեցու և Ազգի ծառայության առաջին աստիճանի վրա:

Ուրախ լն՛ր, Մայր Աթոռ Ա. էջմիածին, որովհետև ճաստուածային և երկնային շնորհս՝ը «միշտ լուռ զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական եկեղեցւոյ, որովհետև երբեք չի պակասել Մայր Աթոռի միաբանության ծառայության և նվիրման ոգին, եւ՛ ահա այսօր էլ, որպես անարատ գառներ, աշխարհից հրաժարված մի խումբ երիտասարդներ դառնում են դեպի Աստված, դեպի աստվածային ծառայություն, օհ պէտս և ի սպասաւորութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ: Նորընծաները իրենց ուսերին առին Քրիստոսի ծառայության տարորեն քաղցր լուծը, սարկավագական ուրարի խորհրդանշումով, որը նրանց պիտի հիշեցնի տիվ և գիշեր հոգևորականի ծանր, բայց Քրիստոսով քաղցրացած պարտականությունն ու սուրբ կոշումը:

Հանդիսավոր վճիռվան մեջ կատարվում է սարկավագների ձեռնադրության խորհուրդը: Զեռնադրող սրբապանը աստիճանարար

տալիս է սարկավազական իշխանությունը խորհրդանշող սրբություններ, «առ զմաքուր և սուրբ ուրարս ի ձեռաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... կենաց քո և վարք քո լիցին որինակ ժողովրդեանս...»:

«Առ իշխանութիւն րնթեռնոյ զԱուրբ Աւետարանս յնկեղեցիս Աստուծոյ՝ յունկն կենդանեաց և իշխատակ ննչեցեւոց»:

Ապա ձեռնագրիչ սրբազանը տալիս է նրանց ձեռքը բուրվառն ու ասում.

«Առ քեզ հրաման խնկարկել և բուրել հոտանուշութեան ի սպասաւորութիւն խորհրդոյնս»:

Նկեղեցին լուս, հետեւում է խորհրդի կատարմանը, ապա հանդիսավորութեամբ շարունակվում է սուրբ պատարագը: Սպասարկում են նորրեծա սարկավազները:

Հավարտ սուրբ պատարագի շորս սարկավազները և շորս կիսասարկավազները, Հոգեւոր Ծեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսի առաջնորդությամբ, բարձրանում են Վեհարան՝ Վեհափառ Հայրապետի որհնությունն ստանալու համար:

Ժամը 3-ին, ի պատիվ նոր սարկավազների և ուրարակիրների, վանական սեղանատան մեջ տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են ձեմարանի դասախոսական կազմը և վանքի պաշտոնեությունը:

Նորրեծա սարկավազներին առաջինը շնորհավորում է Հոգեւոր Ծեմարանի փոխտեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթրաթյանը: Հանուն Մայր Աթոռի միաբանության խրատական է խոսում գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեք-Սահակյանը: Սարկավազներին ուղղված շնորհավորության ջերմ խոսքեր են ասում հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետը, Ծեմարանի դասախոսներ պարոն Արթուր Հաաթյանը և պարոն Պարգե Շահրապյանը: Սարկավազներին շնորհավորում են նաև Ծեմարանի ուսանողները, յարանի բաժնի կողմից բարեշնորհ Սարգիս սարկավազ Բեհյուտյանը և դասարանական բաժնի կողմից Կարապետ Սուրխաթյանը:

Վերջում նորրեծա սարկավազների անունից շնորհակալության և երախտագիտության խոսք է ասում բարեշնորհ Ժիրայր սարկավազ Ըերեճյանը:

Ապա գեղեցիկ և հուզիչ խրատական է խոսում վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը, ծանրանալով այն հանգամանքի վրա, որ Հոգեւոր Ծեմարանի կատարած դերը, Մայր Աթոռի միաբանության աճը և հոգեւորական նոր սերնդի պատրաստությունը Մայր Աթոռում սրտի մեծ գոհունակություն են պատճառում հայ հավատացյալ ժողովրդին թե՛ Հայրենիքում և թե՛ նրա սահմաններից դուրս: Վերջում վերատեսուչ սրբազանը հորդորում է նորրեծաներին արդարացնել այն վստահությունն ու զուրգուրանքը, որը տածում են Վեհափառ Հայրապետը և հայ հավատացյալ ժողովուրդը Հոգեւոր Ծեմարանի նկատմամբ:

Սեղանը փակվում է վերատեսուչ սրբազան հոր «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:



ՐԱՐԵՇՆՈՐՀ ՎԼԱԳԻՄԻՐ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԵՐԱՅԱՆԸ ծնվել է 1929 թվականին Երևանում և ավարտել է միջնակարգ դպրոցը, ապա երկու տարի սովորել ինստիտուտում: 1956 թվականին ընդունվել է Հոգեւոր Ծեմարան:

ՐԱՐԵՇՆՈՐՀ ՀԱՎՈՐ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱՐԱՆՑՅԱՆԸ ծնվել է 1935 թվականին Ֆրանսիայի Վիենն քաղաքում, նախնական կրթությունն ստացել է Ֆրանսիական դպրոցում, 1947 թվականին ծնողների հետ ներգաղթել է Հայաստան և ավարտել միջնակարգ վարժարանը և 1954 թվականին ընդունվել Հոգեւոր Ծեմարան:

ՐԱՐԵՇՆՈՐՀ ԺԻՐԱՅԻ ՍԱՐԿԱՎԱԳ ԾԵՐԵՅԱՆԸ ծնվել է 1937 թվականին Բելյուրում (Լիբանան), նախնական կրթությունն ստացել է տեղի հայ ազգային վարժարանում: 1952 թվականին ընդունվել է Անթրաթի Դպրեմանքը և 1956 թվականին որպես ուսանող եկել է Ս. Էջմիածին:

ՐԱՐԵՇՆՈՐՀ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳԸՍՅԱՆԸ ծնվել է 1937 թվականին Հալեպ քաղաքում (Սիրիա), նախնական կրթությունն ստացել է տեղի Կրիկյան վարժարանում և ապա երկու տարի սովորել է Կիպրոսի Մելրոնյան կրթական հաստատությունում: 1956 թվականին եկել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ աշակերտելու Հոգեւոր Ծեմարանին:

